

Key. page.

8388

8389

891-99

4-89




H. MATTEOSIA  
Relieur  
American Ha  
STAMBOUL

ՀԱՉՍՐ ԵՒ ՄԻ

ՉԲՕՍՈՒՑԻՉ


# ՄԱՆՐԱՎԷՊԻ



(ԼԱԻԱԳԱԾՈՅ)



ՀԱՏՈՐ Բ.



ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Տ. Գ. ՓԱՓԱԶԵԱՆ

معارف عمومیہ نظارت جلیہ سنک رخصتیلہ طبع اول نمشدر.



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳ. ՃԻՎԷԼԷԿԵԱՆ


1890

28675-42



(309  
42)

11702-17



## ՓՈՒՆՁ

Չուարճանալն մի մեծ բարիք է, իսկ կրթու-  
իլն եւս առաւել մեծ բարիք. ընթերցումը, որ  
այս երկու օգուտները միանգամայն կը ներկա-  
յացնէ, համեղ եւ սննդարար պտղոյ մը կը նմա-  
նի :

Ա. Րիշար

—


Գիտունք կենդանի գրքեր են, որք կը լուսա-  
ւորեն մտքերն, առանց տեսութիւնն հոգնեցը-  
նելու :

Օվիտ

—

Ընթերցումը ձանձրութեան դեղթափն է :

Լըմօնթէյ



## 91

## ԲԱՌԱՐԱՆ

## ՀՈՂՄԱՀԱՐԻ ԵՒ ԶԵՌՆՈՑԻ

Արեւելից մէջ սիրաբանութեան լեզուի ծառայող ծաղիկներն արեւմտից մէջ մրցող մը ունեցեր էին, հողմահարը, որ Սպանիոյ մէջ մանաւանդ ամեն դասակարգի Սպանուհեաց անհրաժեշտ մի զարդն էր, որոյ միջոցաւ համբ խօսակցութիւնք նոյն երկրին մէջ կատարելութեան հասած էին. սակայն ամենէն վերջը հնարուած ձեռնոցի լեզուն սոյն երկուքն ալ դերազանցած է, զի ամեն ուրեք ընդհանրացած է:

Բարեկամական ծառայութիւն մը մատուցանելու նպատակաւ, կը փափաքիմք հողմահարին և մանաւանդ ձեռնոցին շարժմանց նշանակութիւնը մեր ընթերցողաց թարգմանաբար ներկայել. նախ՝ որպէս զի երբ ի թատրոն կամ զբօսավայր մը գլտնուին՝ այս կերպ ձեւերով տեսնուողներուն խօսից նշանակութիւնը հասկցած ըլլան, եւ երկրորդ՝ սոյն ծանծաղամտութեան ենթակայ եղողներուն իմացնել թէ, իրենց այս այլանդակ գաղտնիքն այլ եւս երեւան ելած է, ուստի բազմաց ծաղր չըլլալու համար պարտին զգուշանալ եւ պարկեշտութիւնը յարգել:

Սկսինք ուրեմն:

## ՀՈՂՄԱՀԱՐ

Գլխիվայր բռնուածը — Կորսուէ՛ անդին,  
 Առանց շարժելու՝ կիսաբացը — Հաճելի էք,  
 » » բոլորովին բացը — Սրտանց  
 կը սիրեմ՝ զքեզ:

## ՁԵՌՆՈՑ

Հաւանութիւն յայտնելու համար — Ձեռնոցին  
 մէկը աջ ձեռքէն ձախը տանիլ:  
 Մերժողական — Ձեռնոցները աջ ձեռքին մէջ  
 ճմռթ կել:

Անտարբերութիւն — Ձեռնոցը կէս մը ձեռքին  
 վրայ անցունել:

Քովս եկուր — Ձեռնոցը ձախ թելին զարնել:  
 կը սիրեմ զքեզ — Կատուն շոյելու պէս ձեռ-  
 նոցը շոյել:

Փոխադարձաբար զքեզ կը սիրեմ — Ձախ ձեռ-  
 նոցին մէկ մատը անցունել:

Քովիններէս զգուշացիր — Ձեռնոցին մէկը  
 բթամատին փաթտել:

Բարկացած կամ զբաղեալ եմ — Ձեռնոցները  
 խաչաձեւ դնել կուրծքին վրայ:

Նամակիդ կ'սպասեմ — Ձեռնոցները լայնու-  
 թեանը պլորելով, գրչի պէս բռնել ու շարժել:

Նամակիդ ստացայ — Ձեռնոցը ծալլելէ ետքը  
 բանալ եւ կարդալու պէս վրան նայիլ:

Ի կրկին տեսութիւն — Ձեռնոցները երկու  
 անգամ իրարու զարնել:

(Անտարակոյս այս այլանդակ բառարանին հետեւողք, իրենց պարկեշտութիւնը խոհական դասուն բամբասանացը ենթարկած պիտի ըլլան :)

— 0 —

## 92

## ՏԱՐՕՐԻՆԱԿ ՄՏԱԶԲԱՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Գ . . . քաղաքին մէջ խիստ հարուստ մարդ մը կար, Ղուկաս անունով, որ գիշեր եւ ցերեկ իւր ոսկիները իրարու վրայ դիզելով կ'անցունէր :

Սա զաւակ մը ունեցաւ, զոր Եկեղեցի տարին մկրտելու համար, Արարողութիւնը լմնալէն ետքը, մկրտութեան արձանատեարին մէջ, — յորում նորածնին հօրը անունը պէտք է արձանագրուի — քահանայն հօրը ստորագրելիք սիւնակը ցուցնելով, «ստորագրեցէ՛ք, պար'ն, » կըսէ . իսկ Ղուկաս, որ միշտ խելքը միտքը իւր արհեստին տալու տարօրինակ մոլութիւնն ունէր, թըղթին վրայ բացորոշ կերպիւ կը ստորագրէ . «Ղուկաս եւ Ընկերք» :

— 0 —

## 93

## ՃԱՐՊԻԿ ԲՍԱԿԱՀԱՏ ՄԸ

Ֆրանսայի Լիոն քաղաքին մէջ գիշեր մը ժամը երկուքին միջոցները, երկայն գլխարկով քը



սակահատին մէկը, նպարավաճառի մը խանութը կ'երթայ եւ կը հարցնէ .

— Պարո՛ն նպարավաճառ, առաջին կարգի ընտիր, անխարդախ մեղր ունի՞ս :

— Կը գտնուի :

— Քիլօն քանիի՞ է :

— Երկուք ու կէս ֆրանք :

— Օ՛, շատ ուզեցիր . երկու ֆրանք տանք :

— Թէեւ երկուքէն աւելի ապրանք եղած է, բայց զձեզ ամեն ատեն ինձ յաճախորդ ունենալու փափաքէս, երկու ֆրանքի պիտի տամ . ընէք տեսնեմ, ո՞րչափ բան կուզէք .

— Երկու քիլօ :

— Շատ աղէկ, տամ . . . սակայն, ո՞ւր պիտի լեցնենք, հետերնիդ աման մը չէ՞ք բերած .

— Ա՛հ . . . տեսա՞ք հիմա ըրածնիս . . . ո՞րչափ ապուշ եմ եղեր, որ հետս աման մը առնելը մոռցեր եմ . . .

— Մոռցեր էք մի՛ . . . ուրեմն եթէ կ'ուզէք ձեզի աման մը տամ, որոյ փոխարէն ալ պարտիք մէկ ֆրանք վճարել :

— Շատ աղէկ, հաճութեամբ կը վճարեմ :

Այն ինչ նպարավաճառը անօթ մը կը բերէ, քսակահատը դող ելածի պէս կը գոչէ .

— Ա՛ . . . ի՞նչպէս աման է այս . . . չ'ըլլար, չեմ ուզեր :

— Անհոգ եղիք, պարոն, մաքուր է :

— Բայց չ'ըլլար, չ'ըլլա՛ր :

— Դուք գիտե՞ք, մեր քով գտնուածն այս է .  
գացէ՛ք աման մը բերէ՛ք որ առնէ՛ք :

— Մինչեւ երթալ գալս ժամանակը պիտի անց-  
նի :

— Ուրեմն ի՞նչպէս ընենք .

— Ա՛, գտա՛յ, կը գոչէ վարպետորդին, իբր  
թէ յուշաբերեալ, եւ գլխարկը նպարավաճառին  
ներկայացնելով՝ կը յարէ . « գուն մեզըը ասոր  
մէջը լեցո՛ւր » :

— Ի՞նչ կըսէ՛ք, պա՛րոն . . . ի՞նչպէս . . .

— Քեզի ի՞նչ փութ . գուն ասոր մէջը լեցուր,  
ես այսպէս կ'ուզեմ :

Նպարավաճառը զարմանքէ պաշարուած, գըլ-  
խարկին արտաւան առնելէն ետքը երկու քիւօ մեզ-  
րը անոր մէջ կը լեցնէ :

Քսակահատը 5 ֆրանքնոց մը հանելով, 1 ֆը-  
րանք ետ տրուելը կը պահանջէ . եւ մինչդեռ նը-  
պարավաճառը ստակներուն դարակը դուրս քա-  
շելով 1 ֆրանքնոց մը փնտռել առնելու համար  
գլուխը կը ծռէ, նենդաւորը ձեռքը բռնած  
մեզրով լեցուն գլխարկն անոր գլուխը անցունե-  
լուն պէս՝ դարակը ձեռքէն կ'առնէ ու կը կծկէ :

Խեղճ նպարավաճառին աչքերը կը մթագնին  
այս մեզրային յանկարծական իջուածքէն, եւ  
դրացիք օգնութեան հասնելով, գլխարկը դըժ-  
ուարաւ գլխէն կը հանեն . Իրենց մէջէն զուար-  
ճարան պարոն մը նպարավաճառին կը հարցնէ .

— Ի՞նչ ըրիք, գլուխնիդ մեղուներու վեթա՞կը  
խօթեցիք:

— Ոչ, պարոն, այլ տխմարի պէս գլխարկին մէջ  
մեղր լեցնելով, գլուխնիս փորձանքի հանդպցու-  
ցինք:

— 0 —

## 94

## ԱՌԱՔԻՆԻ ՕՐԻՈՐԴ ՄԸ

Հանրի Դրդ. որ իւր կնոջ Մարկրիթ տը վալուան  
թագուհւոյն պատուակալ օրիորդ չքնաղ Քաթե-  
րին տը Րոհանի սաստիկ սիրահարուած էր, իրի-  
կուն մը դադտնապէս հարցուց նմա թէ՛ «ո՞ւրկից  
կերթցուէր իւր սենեակը»:

— Վեհ. տէ՛ր, պատասխանեց օրիորդը, որ չէր  
կամեր եւ ոչ մի շնորհք տալ ումեք, նախ քան  
դայն օրինաւոր ընելու. վեհ. տէ՛ր, Եկեղեցիէն  
կերթցուի հոն»:

— 0 —

## 95

## ԵՐԿՈՒ ՏԻԿՆԱՅԻ

Ծաղկահաս կին մը, որոյ ծննդարեւու թիւնը յոյժ  
ծանր եղեր էր, օր մը կըսէր Սօֆի-Արնուլտի:

— Ո՛հ բարեկամուհիս, է՞ր պէտք է այնչափ

ցաւ քաշել երջանկութեան վայրկենի մը համար .

— Ի՞նչ ընենք սիրելիս , ըսաւ կորովամիտ գուսանը . ծննդաբերութեան ցաւերը մեզ համար հեշտութեան զղումներն են .

— 0 —

96

ԿԾԾԻ ՄԸ

Կծծի մը , տանը մէջ ծառայելու համար իրեն ներկայացող սպասաւորի մը հետեւեալ հրամանները տուեր է .

— Մտիկ ըրէ որ ըսեմ . ես շատ մաքրասէր մարդ մ'եմ , տանը ամեն կողմերը մաքուր տեսնելու եմ . ջուրին գաւաթները , սեղանին սպասները միշտ մաքուր պիտի ըլլան . սլատուհաններու ապակիները ամեն օր մաքրուելու է . դարանները , գաւիթը եւ սանդուղները մաքուր պիտի բռնես , վերջապէս ամեն բան մաքուր ըլլալու է .

— Շատ աղէկ պարօն . վրաս դլուխս ալ մաքուր պիտի ըլլայ , այնպէս չէ՞ .

— Օ' . . . հարկաւ , հարկաւ .

— Ուրեմն հաճեցէք ինձ ձեռք մը նոր հաղուստ առնել , ըստ որում այս հաղածներս թէ հին եւ թէ աղտոտ են .

Կծծին նկատելով որ այս առաջարկը իւր քսակին պիտի դպչի, կը դռչէ:

— Վա՛յ, վա՛յ, վա՛յ. դուն հիմակուց գործը աղտոտեցիր, ամենեւին իմ բանիս չես գար. երթաւ բարով:

— օ —

97

### ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄԻ

— Եղբայր, կուգեմ հասկնալ թէ՛ մեր հրապարակին վաճառականներուն մէջ ամենէն հարուստը ո՞վ է. դուք որ հրապարակի մարդ էք. հարկաւ պիտի գիտնաք:

— Բասաժ տէ Ծլէօռին մէջ ընտանեկան դարդուց վաճառական (Բահ-Ֆճը) մը կայ, անկէց աւելի հարուստ մէկը չեմ գիտեր:

— Ի՞նչ կրսես եղբայր, այդ մարդը այդչափ հարստութիւնը ո՞ւրկից գտեր է:

— Ուրկից գտած ըլլալը չեմ գիտեր, միայն թէ երկու տարիէ ի վեր 100ին 40 մլասով ապրանք կը ծախէ՝ եւ տակաւին մլասուն կը դիմանայ, այն գիտեմ:

— օ —

98

### ԱՄՈՒՄՆԷՆ ԴԺԴՈՋ ԿԻՆ ՄԸ

որ մը իւր մէկ բարեկամուհւոյն կը դանդատէր, ըսելով.

— Բո՛ւբուկ, անցած իրիկուն անանկ օրը-

տու՛մ մը հանեց, անանկ օրօրտու՛մ մը քի՛ սա  
մազ մնաց ինքզինքս բէ՛նճիրէ՛ն վար պիտի ներտէի :

Բարեկամուհին, դող ելած — Վույ արեւո՛ւղ  
մեռնիմ, ի՞նչ կըսես, չելես ատանկ խաղալը բան  
մը ընես. հէ՛մ անոնց ուղած բանն է, մեղք ես նէ . . .

— Սիրադ թու՛նդ մի՛ հաներ, քո՛ւրիկս . բէ՛ն-  
ճիրէ կըսեմ նէ՛ տէ՛յ վարի խաթի՛ սօխախին վրայ  
նայող, դէմինին հետ պասպարապար ցած օտային  
բէ՛նճիրէին համար կըսեմ :

— 0 —

99

### ԽԱԹՈՒՆԻ ՄԸ ՊԱՏԱՍԻՍՆԸ

Երիտասարդ մը գեղեցիկ օրիորդի մը սիրա՛  
հարեալ, կուզէր դայն կնութեան առնուլ . բայց  
տեսնելով որ աղջկան ծնողքը հաւանութեան կամ  
մերժման վերջնական պատասխան մը չը տալէ  
դատ, ուրիշներու ալ աղջիկ-տես կը հանեն, բար-  
կացաւ եւ գնաց նորա ծնողացը ըսաւ .

— Ճա՛նրմ, աս ի՞նչ բան է . երկու ամիս ե-  
ղաւ, հալէա սանկ քէսէն քէս կտրողական պա-  
տասխան մը չը տուիք ինձի . ինչո՞ւ սալսալայի  
կը ձգէք կոր . հէ՛մ լսածիս նայելով, ինձմէ պաշ-  
խա 5—10 հոգիի ալ ցուցըցեր էք .

— Ի՞նչ խըրսլանմիշ կըլլաս կոր, եա՛վրում,  
ըսաւ օրիորդին մամիկը, որ անկիւն մը նստած  
էր, ճան բազարը տըր պու . իրաւ ես, շատ ու-  
ղողներ կելան կոր ամա, խաթըրա միւրվէթ,  
հիմակու ճահիլներն ալ խալուն թապիյէթլի ըլ-  
լանուն, տասը քսան հատը տէյքի աչկէ չան-  
ցունես նէ՛ մէկ հատ մը չես կրնար դատել :

— 0 —

## 100

ԿԱԹԻ ԱՏԱՄՆ

ԿԱՄ

ՓԵՍԻՆ ՆՈՒԷՐԸ

Ա.

«Աղկից ո՞ւր պիտի երթանք Աստուած սիրէք, հարցուցի Պ. Պրնուայի, որ յանկարծ մեծ պողոտայն թողլով, Նորմանտական ցամաքին դալարագեղ ճամբուն մէկը մտաւ:

— Ի՞նչ էք միշտ, եւ պիտի տեսնէք, պատասխանեց ձեռքի խարազանաւն աւելի գրգռելով իւր կայտառ գորշ նժոյգը:

Ես՝ զՊ. Պրնուայն հաղիւ քանի մ'օրէ 'ի վէր կը ճանչնայի. իրարու հանդիպած էինք Հավրի մէջ բարեկամնուս տունը: Առաջին իսկ տեսութեան պահուն ինձ հաճոյ երեւցաւ իւր աննենդ և կատարեալ կեղտական գուարթութեամբ: Հաւանաբար իւր գրաւիչ բնութեան վրայ գրեթէ նմանօրինակ ազդեցութիւն ըրած էի, վասն զի հետեւեալ օրն, տակաւին լաւ մը զիրար չը ճանչցած, սերտ բարեկամներ եղեր էինք:

Արդ, այն առաւօտուն, երբ եկաւ զիս արթնցուց, ըսելով թէ «Ձեզ գիւղ պիտի տանիմ,» կոյր վատահոսութեամբ իւր դաւառական թեթեւերկանիւին մէջ քովիկը զետեղուեցայ, և առանց բացատրու թիւն խնդրելու, ուրախութեամբ կրկնեցի. «ուրեմն երթա՛նք»:

Համակրա՞նք թէ կանխազգացում, ուղողը ու...

դածին պէս թող մեկնէ, եւ սա համոզումը ունէի  
 թէ օրը լաւ պիտի անցնէր. ուստի եթէ զիս դը-  
 ժոխք ալ տանելու ըլլար, սիրելի անձանօթիս  
 պիտի հետեւէի: Գացած ճամբանիս արքայու-  
 թեան ճամբան կը թուէր. աստ անդ բիւրաւոր  
 վայրի ծաղիկներ կը փայլէին, մեծամեծ ծառեր  
 ճամբուն վրայ իրարու հետ կը միաւորուէին, որ-  
 պէս թէ դալարեօք կամար մը պիտի յօրինէին:

Առաւօտ էր, դարնան առաւօտ, ապրիլի ա-  
 ռաւօտ մը: Մացառներու մէջ սպիտակ դժնիկը  
 ծաղկած է, եւ թռչունը կ'երգէ. մարդիկ եւ ա-  
 նասունք, միջատք եւ թեւաւորք դուրսն են ար-  
 դէն. ամենեքին կ'աւարտն եւ կ'աշխատին: Շի-  
 կագոյն մեծամեծ եղինք նախաճաշ կ'աւարտն,  
 և առ ուոյտը ծամելիքէն առ կախեալ ճամբուն եղ-  
 ըր կանդ կ'առնու մեր անցնիլը տեսնելու համար.  
 Քիչ մը հեռուն, գորշագոյն գիրուկ բարի կովեր  
 հլու թեամբ ստինքնին կուտան խոտերու մէջ կըծ-  
 կտած կ'թող գեղջկուհւոյն: Աւելի հեռուն, ոչ-  
 խարք իրենց ծնրադրեալ գառնուկներու վերեւ  
 կեցած են. մինչդեռ խոյերն ու խաշինք ի շրջա-  
 կայս խառնացիր կը ճարակին. այլ միայն ընտանի  
 կենդանիները չեն որ կը զուարթացնեն սոյն երկ-  
 բանկարն. չէ՞ք տեսներ. երիվարներու եւ հաւե-  
 դենեաց ծաղկառատանաց շուրջը ման գալերնին . . .  
 Անդ, իշուն աղմկայոյզ թալթիլին, որ կունկին վը-  
 րայ կը գլորի. ամեն ուրեք աքաղաղի կատակա-  
 խաղերն իւր փետրաւոր կանանոցին միջեւ . . . չէ՞ք  
 լսեր, անթառամներու միջեւ արեւակէզ եղող վը-  
 տակին մէջ տղմերուն վրայ թաւազլոր բաղերու  
 ձագուց միաճայն նուագներն . . .

Բայց եւ այնպէս երկանիւր կը սլանար միշտ,  
 ողջունուելով ճամբուն վրայ ամեն շինականներէ,



ոյք կը հանդպէին մանգաղն ի յուս, նաև իսկ  
ամէն գեղջկուհիներէ, որք աւելի կամ նուազ  
նազանքով դարդարուած, շատախօսելով կ'շտա-  
պէին դէպ ի Հավրի շուկայն, ոմանք հետի, ո-  
մանք սայլերու մէջ, ձիերու կամ էշերու վրայ  
նստած: Սքանչելի էր սա: Ամէն ինչ ցնծումն էր  
եւ ուրախութիւն. ամէն ինչ երգ էր:

«Եկա՛նք.» պուապ յանկարծ Պ. Պրնուա, կե-  
ցնելով իւր երկանիւր Նորմանտական զմայլելի  
այդեատանի հովանոցի մ'առաջ. դրեթէ դղեակ  
մը, որ նկարչական տեսարանի հանդու՛նատպէս՝ քա-  
րածայռի մը գագաթը կը բարձրանայր, եւ որոյ  
պատուհաններէն պիտի տեսնուէր ամենաչքեղ  
տեսարան մը, ոյր նմանը կարելի չէ երեւակայել,  
կէս մը դաշտին վրայ կէս մը ծովուն վրայ:

«Բայց որո՞ւ տունն եկանք, ըսի, ես ալ վար  
իջնելով.

— Իմ լաւ բարեկամներէս միոյն, Պլանչէի  
տունը. ներս մտէ՛ք աներկիւղ:

Հաղիւ պարտիզին մէջ քանի մը քայլ աւեր է-  
ինք, ահա սոյն բնակութեան երջանիկ կալուածա-  
տէրը վազեց զմեզ դիմաւորել: Այս ալ նոյնպէս  
այն բարի եւ անկեղծ դիմագծութիւնն ունէր,  
որ առաջին տեսնուելուն կը սիրուի. իւր արտա-  
յայտութիւնը հիւրասէր էր եւ զուարթարարոյ,  
Նորմանտիոյ շինական աղատականի ճշմարիտ  
տիպար մը:

«Իսկ Պ. փեսան ո՞ւր է, հարցուց նախ եւ ա-  
ռաջ ցնծադին շտապաւ:

— Նա քիչ մը ուշկէկ պիտի գայ. այս աւուր  
տօնահանդէսին համար քանի մը վերջին գնում-  
ներ ունի. պատասխանեց Պ. Պրնուա, եւ մէկէն

ի մէկ խօսքը փոխելով, զիս Պլանշէի ներկայացուց :  
Այս ծանօթացումէն ետքը, հարցուց նմա .

— Է ուրեմն, ո՞ւր է աղջիկդ .

— Եւ չէ՞ք տեսներ, բացառանչեց. ահա՛ւասիկ :  
Բնականաբար հայեացքնիս նորային հետեւեցաւ . այն ատեն նշմարեցի հեշտատեսիլ երեւումն, ոյր նմանը նոյն իսկ երազի մէջ չի կրնար հանդպիլ . . . Հաղիւ եօթնեւտասնամեայ դեռատի աղջիկ մը, խարտիշահեր, վարդագոյն, մատաղահաս . . . Անկլիական դարդանկար մը, հրեշտակային արարած մը, ի մի բան յաւերժահարս մը . . . Բայց եւ այնպէս, արդուդարդի եւ ոչ մի պատրանք չէր յաւելնար այն բոլորովին աննախատես հմայից, զոր կը սիրէր իւր բոլորն : Մեք զինքը, սանկ ըսենք, իւր կուսական անկողնէն մեկնման պահուն կը վերահասէինք : Հաղիւ շըրջապատած էր իւր չքնաղ մարմինը՝ անհամբոյր հնդկական պարզ եւ նուրբ հագուստով . կաշեգուրկ գարշապարով շղուականներ (բանիւֆ) գըրեթէ նորա վարդագոյն եւ մերկ փոքրիկ ոտները բաց կը ցուցնէին : Իւր չքնաղ ուսոց՝ վերայ կ'ոստնուին առատաշուայլ դանդուր մազերն :

Առաջին անգամ որ զմեզ նշմարեց՝ յանկարծակիի եկաւ, և քիչ մնաց գիրկը բռնած հօտաւէտ ծաղիկները վար պիտի ձգէր, այն ծաղիկները՝ զորս արթննալէն՝ ի վեր քաղեր էր :

— Թշուա՛ռ դաւակ, պոռայ բարի մարդուկն Պլանշէ, ի՞նչպէս ալ կը համարձակիս այդ կերպ երեւալ, այսօրուան պէս օր մը, օ՛ր ամուսնութեանդ ընդ . . .

— Ներեցէ՛ք, հայր, ընդմիջեց օրիորդն դո-  
ղահար, թողութիւն ըրէք, այժմ իսկ շուտով  
սպիտակ շրջագգեաստ կը հաղնիմ ու կը վերա-  
դառնամ:

Եւ իւր ետեւէն բուրման շաւիղ մը թողլով,  
խոյս տուաւ:

Բարի Պլանշէ ուզեց չքմեղել իւր աղջիկն:

— Լռէ՛, ձայնեց Պրնուա, մենք շնորհակալու-  
թիւն կը պարտինք նմա, ըդհակ առակն առանց  
արդուզարդի մեզ երեւելուն համար. ես իմ մա-  
սիս կ'ըսեմ թէ, դիս քսան տարի երիտասարդա-  
ցուց վերստին: Ս.յս գեղեցիկ աւուր համօրէն  
զուարթութեանց կենդանի բովանդակութիւնն է,  
ապրիլի ճշմարիտ առաւօտն է քու աղջիկդ:

Բարեբաւտ հայրը հպարտ քմծիծաղով միայն  
պատասխանեց, յետոյ Մատերայի դինի եւ սի-  
կար հրամցնելու պատրուակաւ զմեզ տուն ա-  
ռաջնորդեց:

«Ս.յսպէս ուրեմն, ըսի Պրնուայի, որ քովէս  
կը քայլէր, հարսնեւո՞ր ենք»:

— Ս.յո՛, եւ հարսնիքն ալ յոյժ ցնծալից պի-  
տի ըլլայ:

— Կարծեմ սոյն պաշտելի աղջիկն է ամուսնա-  
ցողն:

- Նոյն ինքն:
- Եւ որո՞ւ հետ կ'ամուսնանայ.
- Ետքը պիտի տեսնէք:
- Լաւ, բայց շատ դժուարս պիտի դայ, ե-  
թէ... որովհետեւ մեծանձն ամուսին մը պէտք  
է, որ այսպիսի դանձի մը արժանանայ:
- Արժանի է, հանգիստ եղիք դուք.
- Ուրեմն սիրային ամուսնութիւ՞ն մ'է.

Բ

11702-17  
309  
42

— Ասկէ աւելի ճշմարիտ սիրային ամուսնութիւն մը եղած չէ՛ :

— Ա՛հ, լաւ . . . բայց ո՞րչափ ասուն կայ որ զիրար կը սիրեն :

— Յո՛յժ երկար . առնուազն 15 տարի :

— Տասն եւ հինգ տարի՛ . . . բայց . . .

— Մի՛թէ չէ՞ք հաւատար տղայոց սիրոյն :

— Կարդացեր եմ Պօղ եւ Վիրգիլնէն, բայց և այնպէս . . .

— Կ'ուզէ՞ք որ ասոր մէկ մտայուած գլուխը պատմեմ ձեզ, որ միւսները պիտի գերազանցէ, բայց վերջապէս մինչեւ որ ճաշի ատենը դայ . . .

— Ականջս քեզի է :

Եւ Պլանչէ պահ մը քովերնուս մեկնելով, գաւաթ մը Մատերայի դինի խմեցինք ու սիկառները վառեցինք :

Պրնուա սկսաւ .

Բ .

«Որպէս զիս կը տեսնէք, սիրելիդ իմ Պարոն, տղայ մ'ունիմ, որու երկար բարակ գովեստն ընելն, իմ հայրութիւնս չարաչար գործածել պիտի ըլլայ . այլ գոհ եղիք միայն դիտնալ թէ, մանկութեան ատենը սքանչելի մանչ մը եղաւ : Այն ժամանակները տակաւին հարուստ չէի, սակայն չարաչար կ'աշխատէի ըլլալ . Հափրի առևտրական թաղը կը բնակէի, եւ իմ սիրուն ճագուկս շատ բարեկամներ ունէր, այլ մանաւանդ մէկ բարեկամուհի մը . իմ վաղեմի բարեկամացս միոյն աղջիկն էր այն, որուն հետ տուներնիս կից էր : Արդ, գաւկնեքնիս միատեղ մեծցան . երբ Վալանթինն ոտք ելաւ, արդէն թիւլ իւր սրունքներուն վրայ ամբապինդ կայտառ մը եղած էր . եւ ինքն նեցուկ եղած էր իւր դրացուհւոյն, զոր առաջ-

նորդեց եւ պաշտպանեց : Առաջին յուղմունք , առաջին խաղ , առաջին արցունք , առաջին ժրպիտք , ամէն բան մէջերնին հասարակաց եղաւ : Անդադար մեկտեղ էին , լսուեցա՞ւ մի վալանթինի ցնծադին ճիշերը , անմիջապէս նորա փոքր ընկերին ուրախ դուարթ պատասխանները պիտի լսուէր : Քիչ մ'առաջ Պօղ եւ վերդինէի խօսքը կը նէիք , Պարոն . Հավրի մէջ ամէն ոք այդ անունը կ'ուտային ասոնց : Քանի մը տարիներ անցնելէ ետքը , վալանթին վեց տարու էր իսկ ժիւլ ութը . Օրիորդն արդէն քիչ մը պչրող էր , պարոնն ալ կ'սկսէր կնահածոյ լինիլ : Մի ժպտիք պա'րոն . . . իրենց խանդակաթ գորովը որքան ալ անմեղ , որքան անարատ , որքան ալ հրեշտակային եղած ըլլային . վերջապէս սէր էր :

Այն միջոցները մեր դրացիներէն մէկուն ամուսնութիւնը տեղի ունեցաւ : Ժիւլ ներկայ կը գտնուէր երբ խօսեցեալը նշանածի կողովը ներկայացուց :

— Ի՞նչ է այս ըսաւ ժիւլ , երբ մէկը Օրիորդ մը կը սիրէ եւ կուզէ նորա այրն ըլլալ , նուէրնե՞ր կուտայ անոր :

— Այդպէս է սովորութիւնը , հաճեցաւ պատասխանել մէկը :

— Ա՛հ , ըսաւ ժիւլ , աչքերը մեծ մեծ բանալով :

— Ստահա՛կ , ընդմիջեցի յանկարծ .

Եւ մտերմային երկու ապտակիկ կպցնելով իւր դէմքին , սրահին միւս ծայրը խրկեցի դինքը :

Ժիւլ բոլորովին մտախօհ մնաց հոն : վալանդին ևս անկէց ոչ հեռի էր , և տղան մտածելով՝ աչքին ծայրովը անոր կը նայէր :

Նոյն ատեններն վալանթին շքեղազարդ պաճուճապատանք (դեպէս) մը ունէր , զոր միս Բօղա-

լի կ'անուանէին : Միս Բողալի կատարեալ հանդերձանոց մ'ուներ . բայց դ լխարկ մը կը պակսէր . այդ գ լխարկը Վալանթին 'ի դուր մօրմէն ուղերէր , զոր ջերմապէս կ'ըղծար ունենալ : Նախնթացօրն արդէն ըսեր էր Ժիւլի . « շատ թշուառ եմ ես . մայրիկս միս Բողալիիս համար գ լխարկ մը տալ չուղեր ինձ : Ա՛հ , երբէք չպիտի ժպտիմ , մինչեւ որ այդ գ լխարկը չունենամ : »

Ահա այս պատճառաւ Ժիւլ սրահին մէկ ծայրը կեցած կ'երազէր : Այլ մէկէն 'ի մէկ ձեռքը ճակտին դարկաւ , որպէս թէ յաղթական ներշնչումով մը միտքը լուսաւորուեցաւ , եւ վազելով աներեւոյթ եղաւ :

Մերձակայ շուկան նորաձեւութեանց վաճառուհի մը կար , որ մեր երկու կանանց պէտքերը կը հայթայթէր : Ժիւլ կը համարձակի ներս մտնել եւ ճօրիւթին ըսել .

— Օ՛րիորդ , «էպէ+ի» ալ գ լխարկ կը շինէ՞ք .

— Անչո՛ւշտ , բարեկամիկս , կը պատասխանէ վաճառուհին , նախապէս զարմանալով :

— Լաւ , կըսէ Ժիւլ ոգեւորեալ , ուրեմն գ լխարկի մը համար ի՞նչ կ'ուղէք .

— Այդ գ լխարկէն կախումն ունի , բարեկամս :

— Ես՝ սա ամենէն գերընտիրը կ'ուղեմ . ամենէն ճոխը եւ ամենէն նորելածը . ուստի ի՞նչ գ ընով կըլլայ .

— Ուրիշներուն համար 5 ֆրանք , կը պատասխանէ մօտիսթը , որ իւր նոր յաճախորդին կարեւորութիւնն ունեցող պզտիկ ձեւերուն վրայ յայտնապէս կը դուարձանար . բայց ձեզի համար , պարո՛ն Ժիւլ , յիսուն «ս» կըլլայ :

— Յիսուն «ս» :

— Ա՛յո ,

— Շատ լաւ , սպասեցէք . . . այժմ իսկ կը վերադառնամ :

Այս խօսքերը ըսելով , խոշոր բարեւ մը տալէ ետքը խանութէն կը մեկնի եւ տուն վերադառնալով սենեակը կելլէ :

Գանձանակն (գանդարա) հոն էր :

Շուտով ընելու համար կը կոտորէ զայն . ի՛նչ դժբաղդութիւն . . . մէջը 34 «... միայն կար . ժիւլարձան կը կտրի , սակայն վայրկեան մը մտածելէ ետքը քաջութիւնը ձեռք կ'առնու եւ կը վերադառնայ մօտիսթին մօտ :

— Օրիորդ , կ'ըսէ բուրբովին ամօթահար կերպիւ . չէ՞ք կրնար այն գեղեցիկ գլխարկն ինձ 34 «...» շինել . . . աւելին չունիմ» : Եւ այն նայուածքըն որ այս հարցումը աղաչանքի կը փոխարկէր , վազրն անդամ 'ի գութ պիտի շարժէր : Սակայն վաճառուհին կատակէն կ'ախորժէր . ուստի կ'ուզէ քիչ մը դիմադրելու հաճոյքը վայելել :

— Անկարելի է . կը պատասխանէ կատարեալ լրջութեամբ . հարիւրին յիսուն զեղջ մը ըրի քեզ , առկէ աւելին անկարելի է :

— Այսպէս ուրեմն յիսուն պիտի ըլլայ :

— Հատ մը պակաս չըլլար :

Եւ տարաբաղդ ժիւլ սիրտը ելած կը վերադառնայ : Բանի մը վայրկեան մտածելէ ետքը շրթունքը կը ժպտին . աչքեր կը փայլին , յեղակարծ գաղափար մը կը ծնի իւր մանկական մտքին մէջ : «Այդ է . . . ճիշդ այդ է . . . կը գոչէ եւ խանութ վերադառնալով կ'ըսէ մօտիսթին ,

— Օրիորդ , այդ գլխարկը ո՞ր օր պատրաստ կրնայ ըլլալ :

— Գալ կիրակի :

— Լաւ ուրեմն . դուք չորձի սկսեցէք , եւ

այնպէս ըրէք որ դեղադարդ ըլլայ. ես ալ կիրա-  
կի առտու ձեր յիսուննսն կը բերեմ:

Օրը հինգշաբթի էր, հետեւեալ երկու օրերը  
տղաս բոլորափքս դարձաւ, որպէս թէ բան մը  
պիտի ուզէր ինձմէ. բայց չէր համարձակէր տա-  
կաւին: Սակայն մի՛ կարծէք թէ խնդիրը 16 սու-  
նոց ստեպղինի մը վրայ էր, որ կը պակսէր իրեն.  
Գոր անշուշտ եթէ ուզէր պիտի աայի. ո՛չ. Ժիւ-  
լի միտքն այդ չէր: Նա կերազէր այնպիսի ընծայ  
մը տալ, որ միայն իրմէ ելած ըլլար, որ միայն  
իրմով իրագործել, մինչեւ իսկ եթէ ՚ի գին զոհո-  
ղութեան մը, ցաւումը եղած ալ ըլլայ:

Եւ արդ, տեսէք թէ իմ խեղճ ստահակս ի՞նչ  
երազէր էր: Ամեն անգամ, որ իւր կաթի ատամ-  
նը սկսէր շարժիլ, քսան սու կուտայի իրեն, թող  
տալու համար որ հանեմ: Անցողակի նշանակենք  
որ երկրորդ ակռաները երբէք լաւ չեն բուսնիր,  
մինչեւ որ առաջինները ժամանակին չը հանուին,  
որպէս զի դուրս ցցուելու ատեն խոչնդոտի չը  
հանդպին, սա ալ կար որ բաւական ժամանակէ  
՚ի վեր Պրնուա ընտանիքին մէջ այդ պարզեւր դոյ-  
ութիւն ունէր: Արդէն քանի մը անգամներ սոյն  
ատամնային թատերախաղը իմ եւ տղուս միջեւ  
խաղցուէր էր, սակայն երկուքիս ալ միեւնոյն քա-  
ջութիւնը պէտք էր. ես իմ մասիս յաջողեր էի  
ունենալ, բայց վերոյիշեալ պարզեւին հակառակ,  
Ժիւլ յիմար սարսափներէ ետքը միայն կը դոր-  
ծադրէր: Ուստի շարաթ երեկոյ որչա՛փ զարմա-  
ցայ, երբ տեսայ որ յանկարծ եկաւ ինձ ըսաւ.  
— Հա՛յր, ակռայ մը ունիմ որ կը շարժի. պէտք  
է որ անմիջապէս քաշէք:

Ուզեցի ճշդել թէ ստիպողակա՞ն էր, բայց հազիւ  
մատիս տակ կը շարժէր ցոյց տուած ատամնը:



— Մ. յդ-չափի փուլթալ պէտք չէ, ըսի, սպասենք :

— Չ'ըլլար, պոռաց աշխուժիւ, չ'ըլլար, այս երեկոյ զիս քաջարի կ'զգամ. եթէ ուրիշ ատեն ըլլայ՝ պիտի վախնամ, ատամնը կը շարժի, հա՛յր ուրեմն շուտ ըրէ՛ք, կ'աղաչեմ. »

Ծնկիս վրայ նստեր կ'աղերսէր, կը փայփայէր զիս. փոքրիկ թաթիկներովը կը բռնէր դահճին ձեռքը եւ իւր վարդադոյն ծամելեաց միջեւ կը մխէր : Չ'երկարեմ, այնչափ, ըրաւ, պարո՛ն. որ վերջապէս տեղի տուի : Ատամնը քաշուեցաւ. ճանջեալը ճիչ մը անդամ չ'արձակեց, միայն թէ իւր գունատ դեմքին վրայ ցաւոյ արագ ձգտում մ'ունեցաւ, եւ լսել կարծեցի որ յոյժ մեղմիկ մը մնջեց : »

«Վալանթինի համա՛ր է այս» :

— Ի՞նչ ըսիր. հարցուցի դարմանահար :

— Ոչինչ, հայր... քսան «...» տուր. թէ որ կը հաճիս : »

Ա՛հ. որչա՛փ խանդաղատանօք պիտի համարուրէի զինքը, եթէ այն ատեն իւր գաղտնիքին վրայ կասկած մը ունենայի : Այս ամենը ժամանակ անցնելէ ետեւ որ մը տիկին Պրնուայի իւր մօտիս թին վաճառատունը այցելելէն ետքը իմացանք : Իսկ հետեւեալ օրը միս Բօղալիի շքեղ գլխարկին վրայ ամենքնիս ալ զմայլեցանք : Վալանթին երախտագէտ եղեր էր, իսկ ժիւլ երջանիկ և հրպարտ. զի ո՛չ ապաքէն իւր բարեկամութեան երջանկութիւն պատճառեր էր. ո՛չ ապաքէն իւր արեամբն էր վճարած :

Պիտի ուրանօք թէ այս երկու տղայք, մին միւսին համար ծնած չըլլային, պարոն, պիտի ըսէ՞ք թէ սա արդէն իսկ սէր չ'էր : »

Գ .

Բարի Պրնուա լուեց , եւ իւր արտասուալից աչքերը  
ինձ ուղղելով , պատասխանիս սպասել թուեցաւ :

— Պատմութեանդ վերջը , գոչեցի անհամբեր-  
ութեամբ . եղբակացութիւնը . . .

Պրնուա առանց պատասխանելու նշան ըրաւ  
ինձ որ քովի սենեակը իրեն հետեւիմ . ուր օրի-  
որդ Պլանչէի հարսանեկան կողովն ինձ ցուցուց :  
Նշանածին ճոխ նուէրներուն վրայ փոքրիկ գզրոց  
մը կար :

«Իուք անձամբ բացէք» ըսաւ ինձ : Գզրոցը  
կը պարունակէր «Ե»-ի մը գլխարկը , ապա մա-  
տանի մը , որ կապիճը (Եւէ) խուն ինչ հար-  
թաձեւ փոքրիկ արեւակնի : «Կաթի ալուայն է  
այդ . մրմնջեց եւ գլխարկն ալ միս Բօզալիի :»

Ապա աչքին ծայրովը ցոյց տուաւ ինձ գօրի-  
որդ Պլանչէ , որ իւր հարսանեկան արտուղարդո-  
վը սենեակ կը մտնէր :

«Ահաւասիկ վալանթին ,» յաւելեց :

Յետոյ , պատուհանը ցուցնելով ինձ նշմարել  
տուաւ ծովային զօրական հետամուտ մը , որ ծաղ-  
կոցաց մէջէն կը յառաջանայր :

«Ահաւասիկ տղաս , եղբակացուց . ահաւասիկ ժիւլ :

— Պրնուա' , ըսի այն ատեն , իրաւունք ունէ-  
իք . այդ կաթի ատամնը անդին յուռո՛ւթ մ'է . .  
եւ անշուշտ երջանկութիւն պիտի բերէ նոցա գըլ-  
խուն . եւ ես սա հաւատքն ունիմ թէ փեսայ մը  
իւր ստացած դրամօժտին մինչեւ իսկ ամբողջու-  
թեամբը ծախու առնելիք նուէրովը այնքան հա-  
ճելի չերեւար իւր հարսին , որչափ իւր քրտանց  
վաստակովը նուէր ընող փեսայն :

(Եւէ Կէ)

Թարգ .

վ . Գ



ՏՕՔԹ • ԲՈՒՆ

Տօքթ. Բոնս, որ այժմ 47 տարեկան է, 1847 զեկ. 13ին ծնած է Հանովրայի Գրավիտթալ աւանը: 1866ին Քօթինկէնի համալսարանէն կը ստանայ բժշկական վկայականը: 1882ին Թորախտի միգրօպը կը գտնէ եւ ձարոնիայի խողեր կոչուած փոքրիկ կենդանիներուն վրայ փորձեր կ'ընէ: 1883ին Գերման կառավարութեան կողմէ յճգիպտոս եւ ի Հնդկաստան ղրկուած բժշկական մասնագործովին կ'ընկերանայ եւ հետախտի միգրօպը կը գտնէ, ու վերջապէս ներկայ 1890ին Թորախտի միգրօպն սչնչացնելու դարմանը կը գտնայ:

## ՏՕՔԹԷՅՈՌ ՔՈԽ

ՄԱՐԳԱՅԻՆ ՄԵՄԱԳՈՅՆ ԲԱՐԵՐԱՐ  
ԻՆՆԵՒՏԱՍՆԵՐՐՈՐԴ ԴԱՐՈՒ

Համօրէն քաղաքակիրթ աշխարհն անպատում  
ցնծութեամբ լցաւ ի լուր մեծանուն զիտնակա-  
նին այն փրկարար զիւտին՝ որ կ'ուզայ մարդկա-  
յին սեռին ամենէն անողոք եւ ամենէն անպար-  
տելի կարծուած ախտին, այն է թոքախտի դէմ  
մաքառելով՝ յաղթահարել զայն եւ իսպառ ան-  
հետացնել :

Այդ մեծ լոյսը, այդ աննման հանճարը այս  
անգամ կը ծագի կուսթէնպէրկի հայրենիքէն :  
Տարբեր դիւցադուններ՝ տարբեր հակառակորդաց  
դէմ : Մին «Եղիցի լոյս» գոչեց, միւսը «կեանք»  
աւետեց : Եւ արդարեւ այս պահուս ո՛րքան յու-  
սարեկ եւ տառապեալ հոգիներ՝ նոր կեանք եւ  
ոգեւորութիւն են զգացած . ո՛րքան մարց եւ ա-  
մուսիներու մշտահոս արտասուքն դադրած է .  
քանի՛ ծաղիկ կեանքեր՝ անճառելի ցնծութեամբ  
լցուած՝ լսել կը կարծեն դերմարդկային ձայն մը  
որ կ'ըսէ իրենց, «Փակէ՛ խաւարակուռ գերեզ-  
մանիդ դուռն, քանզի նոր կեանք ու նոր աշխարհ  
մը պատրաստուած է քեզ համար» :

Այս պահուս, զիտութեան լուսոյ նշանաւոր  
ուխտատեղի մ'է դարձած Պէրլին, եւ բովանդակ  
Քերմանական աշխարհն իրաւամբ կը հպարտանայ  
իւր մեծ քաղաքացիով որ՝ ինքն արդէն կենդան-  
ւոյն անմահացած՝ մարդկային ազգի պատմու-  
թեան ամենէն փառաւոր եւ ամենէն կենսատու  
էջերը կը կտակէ իւր փառապանծ հայրենեաց :

## 102

## ԿԵՂԾ ՄԱՐԴԱՍՊԱՆ ՄԸ

Շատ բաներու կեղծը լսուած էր, բայց մարդասպանին կեղծը ոչ լսուած եւ ոչ ալ տեսնուած էր մինչեւ ցարդ:

Փարիզեան լրագրաց մէջ հետեւեալը կը կարդանք:

«Փրանսայի Պոմբիէն դաւառին մէջ վերջերս Ռամբինօ անուամբ թափառական մը կը ձերբակալուի եւ ոստիկանութեան կողմէ եղած հարցաքննութեան մէջ կը խոստովանի թէ, ինքն մեղսակից է Բէրիէ անուն մարդասպանին, որ մեծաւ փութաջանութեամբ կը փնտռուի ամեն կողմ: Այս խոստովանութեան վրայ անմիջապէս Բարիզ կը ղրկուի, ուր ընդհ. դատախազի կողմէ եղած հարցաքննութեանց եւ խուզարկութեանց վրայ կը հաստատուի թէ՛ յիշեալը պարզ դատարկաշրջիկ մ'է: Ասոր վրայ Ռամբինօ ոստիկանութեան պաշտօնեաները խաբած ըլլալու յանցանօք կը դատապարտուի մէկ շաբաթ բանտարկելութեան եւ ապա կ'արձակուի:

Երբ իրեն կը հարցնեն թէ ի՞նչ նպատակաւ այսպէս վարուած էր, կը պատասխանէ.

— Ի՞նչ ընեմ եղբայր. Բարիզ քաղաքը տեսնել կ'ուզէի, եւ որովհետեւ դրպանս կուտ մը չը կար. այս միջոցաւ միայն կրնայի անկուտիաբար Բարիզն այցելել:

## 103

## ՆՈՐ ԸՆԹԱՑՔ ԾԱՐՍԴԻՐՈՒԹԵԱՆ

ԿԱՄ

## ՍԿԶԻՈՒՆՔ ՏԷԼՄԷ-ՉԱԹՄԱՅԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Իրիկուն մը շողենաւի մը մէջ երկու պարսնաներ կը խօսակցէին, այսպէս .

— Ե՛ղբայր, այսօրուան թերթին մէջ դըքի մը ազդը հրատարակուած է . ես ադկէց բան մը չը հասկնայէս դատ, տակը փակագծի մէջ տեսնուած (Նոյնութեամբ) բառին ինչ նպատակաւ գրուած ըլլայն ալ չը հասկցայ, կը խնդրեմ դուք ալ կարդացէք և ինձ բացատրեցէք» , ըսելով՝ գրպանէն լրագիրը հանեց և ընկերոջը յանձնեց, որ հետեւեալը կարդաց .

«Քրիստանէական իրաճնունդ վարդապետութեանց հեթանոսական մտացածին գաղափարներու վրայ դեռ եւս ըստ արժանւոյն չը պատուաստուելէ յառաջ եկած մոլորութեամբ մը, միեւնոյն արարչութեան միեւնոյն օրինաց ենթակայ միակ տիեզերքը երկու ուրոյն՝ բնական և գերբնական տիրապետութեանց վերածելու և որով իրաց երեւոյթներն մեծաւ պատրանօք մեկնելով, արդի մեթոտին ձախող անտեսութեանը ենթարկուելու փորձութիւնը նշաւակելու փորձ մը է . կը շարունակուի վաճառիլ ի գրավաճառս ի նոյն գին 5 դրչ [Նոյնութեամբ]

1—5

— Եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս : Նախ եւ առաջ, ըսաւ հետաքրքիր ընկերը, սա (Նոյնութեամբ) բառը ի՞նչ պիտի ըլլայ .

— Լրագրին խմբագրութիւնը դիտմամբ դը-

րած է այդ բառը, հասկցնելու համար թէ՛ այդ  
ազդը գրքին հեղինակին կողմէն խմբագրուելով  
իրենց ղրկուած, նոյնութեամբ հրատարակած են :

— Էյ, սա 1—5ը ի՞նչ է .

— Այս թիւն ալ, տակաւին չորս անգամ այդ  
ազդը կարդալու համար վայելելիքնիս կ'աւետէ :

— Բայց ե՛րբայր, այդ ազդին պարունակու-  
նակութենէն ի՞նչ կ'եզրակացնես .

— Ես սա կ'եզրակացնեմ թէ, ասիկայ նմոյշ  
մ'է, ասկէ ետքը ուզողը կրնայ բառերը նոյն օրի-  
նակ «Եւրոպայական դրութեամբ իրարու քով  
դնելով խոչոր հատորներ տպագրել տալ . ի մեծ  
ուրախութիւն տպագրչաց եւ ի դիւրութիւն . . .  
նպարավաճառաց : Մանաւանդ եթէ թերթերը  
միածալ ըլլան . . .

— 0 —

104

### ՄԻՍՄԻՏ ԳԻՒՂԱՑԻ ՄԸ

Միամիտ գիւղացի մը Օֆէնպախի գոյքերուն  
վաճառմանը պատահարար ներկայ գտնուելով, կը  
հիանայ վարպետին ջուր թակին այնքան բարձր գին  
մը տալերնուն համար . և ինքն իրեն . «փայտի մը  
կտորին այդքան ստակ կը տրուի՞ մի ե՛ա, կըսէ,  
ու հետաքրքրութիւնը յադեցնելու համար ջուր-  
թակը աչքէ անցունելէ ետքը ուսերը թոթուելով  
կը յարէ . «նա մանաւանդ՝ ծա՛կ ալ ունի եղեր» :

— 0 —

## 105

## Ք . . . ԿՈՄՍՈՒՀԻՈՅՆ ՊԱՏԱՍԻՍՆԸ

Սիրահար Պ . մը, հրաշագեղ Ք . . . կոմսուհւոյն  
առջեւ ծնրադրած՝ կ'ըսէր .

— Ձեր վրայ, էն սիրած բանս, տիկին, ձեր ա-  
ռաքինութիւնն է .

— Ապա ուրեմն, պ'արոն, ինչ'ու հանապազօր  
ձեր էն սիրած բանը կորսնցնելու վտանգի կ'են-  
թարկէք զիս, պատասխանեց ծիծաղելով ու շիմ  
կոմսուհին .

— 0 —

## 106

## ԵՐԿՈՒ ԿՈՅՐ ՄՈՒՐԱՑԻԿԻ

'ի Փարիզ Սէն դետի կամուրջին վրայ երկու կոյր  
մուրացիկներ կը խօսէին այսպէս .

— Բարեկամ, կըսեն թէ խել մը շինծու Քրանք-  
ներ երեւան ելէր է . արդեօք իրա՞ն է . քեզի ալ  
հանդիպեցա՞ն .

— Սաաանաին ականջը խուլ, մինչև հիմա ա-  
տանկ բանի չի հանդիպեցայ, թէեւ սրբուած Քր-  
անքներ շատ առի .

— Մե՛զք քեզի, կեզ կեքե սրբուած Քրանքն ալ



կառնուի՞ մի եւա՛ . մատդ անգամ մը սանկ վրան  
քնելու ըլլաս նէ՛ յայտնի կըլլայ .

— Աղէկ կըսես ամա՛ . քոան սանդիմ պակասի տա-  
լերնուն պէս՝ ամենեւին յայտնի չըլլաք կոր :

— 0 —

107

### ԳԻՆԵՄՈՒԻ ՄԸ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Գիւղացի կին մը իւր տաներէցին ներկայանա-  
լով , ամուսնոյն չափազանց գինեմոլու թենէն դըժ-  
գոհ , կը խնդրէ երէցէն որպէս զի զանի կանչելով  
պէտք եղած յորդորականները տայ , 'ի մխիթա-  
րութիւն իւր ընտանեաց :

Երէցը ազդու լեզուաւ գիւղացին յուղղու-  
թիւն կը հրաւիրէ , կը յիշեցնէ իւր ընտանեաց  
թշուառութիւնը և կը վերջացնէ իւր խօսքը սա-  
պէս .

— Տղա՛ս , պէտք է համոզուիս թէ այդ անի-  
ծեալ ըմպելին քու եւ ընտանեացդ ամենէն ոխե-  
րիմ թշնամին է . արհամարհէ՛ զանի :

— Սակայն տէր հայր , կը պատասխանէ մեր  
գինեմոլ փիլիսոփայն . միթէ դուք ամեն օր չէ՞ք  
քարոզեր ժողովրդեան , ըսելով թէ՛ «Սիրեցէք  
դժնամիս ձեր . բարի արարէք ատելեաց ձերոց :

— Հասկցանք ամա , մենք՝ ձեր թշնամիները  
«կըլլեցէք» չենք քարոզեր կոր :

— 0 —

## 108

## ԴՐԱՄՕԺԻՏԸ

Երիտասարդ պարոն մը, իրիկուն մը ընթրի-  
քէն ետքը սեղանին առջեւ նստած՝ Գաղիացի հե-  
ղինակի մը երկերէն մին կը կարդար, մտովի .

— Քա՛ եավրում, ըսաւ մամիկը անհամբերու-  
թեամբ, աս ամեն գիշեր հացը ուտելէդ եք կը  
կլօխդ կը կախես ինքիբենդ կը կարդաս . պա-  
րէ մեզի ալ պատմէ քի՛ մենք ալ հասկնանք .

Այս առաջարկութեան վրայ երիտասարդը, հե-  
տեւեալը՝ մամիկին հասկցած լեզուովը թարգմա-  
նեց .

«Դրամօժտի սիրոյն համար կոյր զկուրայն ա-  
մուսնացողք կը նմանին տղու մը՝ որոյ կաղանդ-  
չէք կուտան դարմացուցիչ եւ հրապուրիչ տուփ  
մը . այդ խաղալիքէն հրապուրեալ, տղան սիրա-  
յօժար կ'ընդունի զայն . սակայն մինչեւ որ հետը  
չը խաղայ, չը կրնար գիտնալ թէ մէջինը սատա-  
ն՞այ է մի հրեշտակ .»

— Վո՛ւյ պերանը պագնեմ, գոչեց մամիկը  
զգացած հաճոյքէն խնդալով, բէք աղւոր է նման-  
ցուցեր . հէմ տիյօր հիմա թռախօմայով կարգու-  
ող մեր կիտածուն ճահիլներուն ծառքը տրուած  
ար պիչիմ խութիներուն մէջէն սատանայէն պաշ-  
խա բան մը ելած չունի քի . . .

## 109

## ՍՊԱՍՈՒՀԻՆ՝ ԴԻՍՈՒՀԻ

1889ին Անգղիոյ մէջ երիտասարդ Լորտ մը, իրիկուան մը դէմ խիստ մտադրաղ վիճակի մէջ խորունկ ջրանցքի մը եզրը պտտած ատեն, դժբաղդաբար ոտքը սահելով ջրանցքին մէջ կ'իյնայ: Թէև Անգղիացիք մարմնամարդի մէջ խիստ ճարպիկ լինելու յաւակնութիւնն ունին, բայց Լորտը լողալ չը գիտնալուն, 'ի զո՛ւր ջրոյն մէջ կը տապըլտըկէր: Անյուսալի՛ էր իւր փրկութիւնն, եթէ արի շինական մը օգնութեան չը հասնէր, որ լսեր էր նորա յուսահատ ճիչերը. այս ազնուասիրտ և քաջարի շինականը առանց հագուստները հանելու, կայծակի արագութեամբ ջուրը կը նետուի և կ'աղատէ Լորտը, գրեթէ անկենդան վիճակի մէջ. և իւր հուժկու ձեռքերովը շփելով ընկղմեալին մարմինը, խելքը գլուխը բերելէն ետքը, զնա իւր փառաւոր դղեակը կը փոխադրէ, ուր բժշկաց ճարտարութեամբը քիչ ատենէն կը գտնէ իւր ապաքինութիւնը:

Շարաթ մը ետքը, Լորտը փնտուել գտնել կուտայ ազնուասիրտ շինականը, որ թէև թշուառ վիճակ մը ունէր, այլ կը մերժէ՝ ու է դրամական վարձատրութիւն: Լորտը չ'կրնար համոզել թէ, գոնէ իւր գնելիք մէկ փոքրիկ աղարակն ընդունի. «Ո՛չ», կը կրկնէ շինականը:

— Բայց վերջապէ՛ս, կը գոչէ Լորտը, պէտք է գիտնաք սիրելի բարեկամս, թէ ուխտած եմ գործնականապէս յայտնել ձեզ երախտագիտութիւնս իմ կեանքս անխուսափելի մահուանէ մը ազատելուդ համար. ուրեմն առանց քաշուելու՝ ինչ որ կ'ուզէք խնդրեցէ՛ք ինձմէ, զի կեանքս ձեզի կը պարտիմ:

— Մա՛յ Լորտ, կըսէ այն ատեն շինականը, քանի որ կը պնդէք ինձ հաճելի վարձատրութիւն մ'ընել . . .

— Այո՛, այո՛, սիրայօժա՛ր . . .

— Ուրեմն . . .

Եւ կը վարանի:

— Բայց մի՛ վարանիք, աներկիւղ խօսեցէ՛ք,

— Ուրեմն . . . ես քոյր մը ունիմ, որ 'ի Լոնտրա տան մը մէջ մի քանի տղայոց դայեակի (բաբա) պաշտօն կը վարէ, և որ շատ կը նեղուի այն փոքրիկ անառակներուն ձեռքը:

— Լաւ, ուրիշ պաշտօն մը գտնենք իրեն,

— Բայց Մա՛յ Լորտ, քոյրս պարկեշտ աղջիկ մ'է. վասն զի, ինչպէս որ գիտէք, վերջապէս սպասուհի մ'է . . . եւ իրենցմէ ամենէն հաւատարիմ ու պարկեշտներն իսկ երբեմն կը բամբասուին. դանոնք ուղած կողմերնին քաշող անխիղճներ շատ կը գտնուին:

— Ճշմարիտ է, ուրեմն ի՞նչ պէտք է ընել:

— Կ'առաջարկեմ . . . որ իւր ձեռքը խնդրէք,

հետը ամուսնանաք, եթէ սակայն հաճոյ թուի ձեզ:

Հարկ չէ ըսել թէ, ի լուր այս առաջարկին, Լորտը ափ ի բերան կը մնայ, բայց յիշելով իւր ուխտը, շինականին հետ ուղղակի կ'երթայ ի Լոնտրա, կը տեսնէ նորա քոյրը, որ հրապուրիչ գեղեցկու թեան, միանգանգ ամայն և պարկեշտութեան տիպար մ'էր, ու առանց վայրկեան մը իսկ վարանելու, նորա ձեռքը կը խնդրէ:

Երեկի այն փոքրիկ սպասուհին այսօր դքսուհի եղած է:

— 0 —

## 110

### ԴԵՐԱՍԱՆ ԵՒ ԻՇԽԱՆ

Նշանաւոր կատակերդակ Պ. Միշէլ մինչ ի Մօնաքօ կը գտնուէր, օր մը իշխանին պալատը կանչուեցաւ:

— Ստոյգ է, Պ. Միշէլ, հարցուց անոր Մօնաքօյի իշխանը, թէ քու ընտրած բոլոր դերերուդ մէջ ամենէն աւելի հաճոյք կ'զգաս իմ նրմանութիւնս ընելով, այնչա՛փ կատարելութեամբ:

Պ. Միշէլ խոնարհարար ներում կը խնդրէ, և կը խոստովանի թէ, արդարեւ ընկերութեան մը մէջ յանդգներ էր իշխանին նմանութիւնն ընել:

— Ուրեմն, կ'ըսէ իշխանը, որպէս թէ տակաւին նոյն ընկերութեան մէջ էք, ըրէ՛ք տեսնեմ իմ նմանութիւնս :

Միշէլ՝ իշխանին բարեհաճութենէն քաջալերեալ, այս հրամանը կրկնել չը տար, եւ իշխանին քալուածքը, շարժմունքը, ձեւերը ու ձայնը ճշմարտապէս նմանցնելով,

— Սենեկապե՛տ, կ'ըսէ, հիմա ա՛նմիջապէս 1000 մարք վճարեցէք Պ. Միշէլի, որ մեր թատրոնաց լաւագոյն դերասաններէն մին է :

Հարկ չէ ըսել թէ, իշխանը, որ խնդալէն կը մարէր, իւր նմանողին հրամանը իսկոյն գործադրել տուաւ :

— 0 —

111

### ԶՈՒՍԲՃՍԼԻ ՍԻՍԼ ՄԸ

Տե՛ս Վրագիրը պիտի ծանուցանէր կոմս Բ... ի անյուսաալի հիւանդութիւնը, եւ արդէն գրերը մամլոյ յանձնուած էին, երբ շունչը կտրած եւ լեզուն դուրս ինկած մէկը եկաւ իմացուց նոյն կոմսին մահն : Բայց ժամանակ չ'կար վերստին գրերը ցրուել շարելու, ուստի բաւականացան միայն հիւանդ է բառին տեղ հասած է բառը զետեղել, որով թերթը ելլելէն վերջը կը կը կարդացուէր. «կոմս Բ. անյուսաալի կերպիւ մեռած է» և չն :

— 0 —

## 112

## ՄԻԱՄԻՏ ՄԸ

Գաղիոյ Օթեր-Գոթի կոչուած թատրոնին մէջ, ներկայացման մը միջոցին, խաղին բերմամբը ոստիկանք անմեղ մը կը բռնէին, կարծելով որ սպանութիւն գործողն ինք է, մինչդեռ բուն սպաննիչը այն զինուորներէն մին էր, որք ձերբակալելու եկած էին խեղճ անմեղն։

Միամիտ մը, որ առաջին անգամ ըլլալով թատրոն կ'երթար, տեսնելով այս անիրաւ տեսարանը, բարկութեամբ իւր նստարանէն ցատկելով, — Ամբաններ պօռաց, դէպ ի թատերաբեմ խոյանալով, ահաւասիկ բուն մարդասպանը քովերնիդ է, չէ՞ք տեսներ։

Ներկայք բուռն ծափահարութեամբ հանդարտեցուցին միամիտ բարկացողն։

Հ. Կ

— 0 —

## 113

## ԱՅՐ ԵՒ ԿԻՆ

Երեսուն եւ հինգ տարեկան կին մը, որ ամուսնալէն 'ի վեր դաւակ չէր ունեցած, օր մը իւր էրկանը հետ կը կռուէր. որ խօսք չի խնայեց կնկանը գլխուն թափեց,

— Ա՛հ, ապերա՛խտ: Ի՛նչպէս ալ կը համար-  
ձակիս իմ հետս այդպէս վարուիլ. կ'ըսէր կինը.  
ես որ այնչափ աղէկ բաներ ըրի...

— Ի՞նչ ըրիր, ի՞նչ ըրիր, ըսէ՛ նայինք,

— Վարժարանին մէջ ժամանակաւ սովորած  
ուսմունքս մշակեցի, գր.քե՛ր պատրաստեցի, պա-  
տասխանեց հպարտանօք:

— Սատանա՛ն տանի քեզ, աւելի աղէկ ըրած  
պիտի ըլլայիր եթէ զաւակներ պատրաստէիր.  
գէթ անոնք նպարավաճառին խանութը չէին եր-  
թար:

— 0 —

114

### ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄՔ

Ի՞նչպէս ես նայինք. Ոնտիրիոս աղա.

— Փառք Աստուծոյ, ողջ առողջ եմք.

— Պաճանա՛խդ ինտոր է... խաթրդ չը մնայ  
ամա՛ մարդ բարեւ տալու բիւշման կըլլայ կոր,  
անխտար գլուխ կը ցաւցնէ քի...

— Ես ալ ան թապիյէթին համար չէ՞ր քի իր-  
մէն հեռու փախայ.

— Ի՞նչ կըսես. ի՞նչ ըրիր.

— Եկաւ ինձմէ 200 դրչ. փոխ ուղեց, կուտամ  
ամա՛ իս տեսնելուդ պէս՝ հէմէն պարտքդ պի-



տի տաս ըսի . անկէ 'ի վեր ամենեին երեսը տե-  
սած չունիմ .

— Աղէկ ա' , վաղը ելլէ գայ ստակդ վճարէ  
նէ . . .

— Զի գար , չի գար , հրաւրը չէ՞մք ըլլալուն կը  
նայի :

— 0 —

## 115

### ԿԾԾԻ ՄԸ ԵՒ ԻԻՐ ԾԱՌԱՅՆ

Կծծի մը , իրիկուն մը իւր ծառայն կանչելով  
կ'ըսէ ,

— Մկրտիչ ախպար , չի մոռնաս հա' , վաղն  
առաւօտ ժամը 11 ին պիտի գաս ինծի ձայն տաս ,  
որովհետեւ ժամը 12 ին դուրս պիտի ելլեմ .

— Շատ աղէկ էֆէնտիս . դուն ոտքովդ թա-  
վանին զարնելուդ պէս՝ ես հէմէն կ'ելլեմ . !

Կծծիներուն մօտ ծառայողներ , որք ընդհան-  
րապէս պանիր հացով բռնուած են , Մկրտիչ ախ-  
պարին պէս մարդուկներ կ'ըլլան :

— 0 —

## 116

## ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔ

## ՀԱՃՈՅՔ

- Սպանիացւոյն հաճոյքը՝ շողոլան է .  
 Սուրճը՝ Գերմանացւոյն գինովութեան դեղ-  
 թափը .  
 Թէյը՝ մելամաղձոտ հոլանտացւոյն դուարթա-  
 րար նեկտարն է .  
 Լեմոնադան՝ Իտալացւոյն բարկովութեան ամո-  
 թիչը .  
 Գարեջուրը՝ Շուետացւոյն սրտին զովարար  
 ըմպելին .  
 Օղին՝ Լեհացւոյն մէկ տարրն է .  
 Մխախտոր՝ Տաճկաստանցւոյն սիրուն հաճոյքը .  
 Ճոխ սեղան մը՝ Ֆրանսացւոյն դրախտն է .  
 Մեղրաջուրը՝ Ռուսին նեկտարն է .

## ՍԵՂԱՆ

- Սեղանի վրայ Գերմանացին՝ շատ կ'ուտէ .  
 Անգղիացին՝ կը գինովնայ .  
 Սպանիացին՝ ժուժկալ է .  
 Ֆրանսացին՝ փափուկ .  
 Տաճկաստանցին՝ մեծարող .

## ՊԵՐՃՍՆԻՔ

Պերճութիւնը՝ Գերմանացւոյն քով կը փայլի  
իւր բերդերուն մէջ :

Անգղիացւոյնը՝ իւր նաւատորմիդին մէջ :

Սպանիացւոյնը՝ իւր զինուոց մէջ :

Փրանսացւոյնը՝ իւր պանդոկաց և կահկարա-  
սեաց մէջ :

Իտալացւոյնը՝ իւր եկեղեցեաց մէջ :

Տաճկաստանցիինը՝ մաքրութեան մէջ :

## ԱՐՔ

Գերմանացին՝ իւր կնոջ տէրն է :

Անգղիացին՝ բռնաւորը :

Փրանսացին՝ ընկերը :

Տաճկաստանցին՝ բազդակիցը :

Իտալացին՝ պահապանը :

Սպանիացին՝ դահիճը :

## ԼԵԶՈՒ

Խօսելու համար՝ Իտալերէն :

Պարծենալու համար՝ Սպանեօլերէն :

Շուայլելու համար՝ Փրանսերէն :

Համոզելու համար՝ Յունարէն :

## ԵՐԳ

Սպանեօլը իւր երդովը կուլայ :

Տաճկաստանցին՝ կը հառաչէ :

Իտալացին կը դանդաթի .  
 Գերմանացին՝ կը պուշտայ .  
 Պելճիգացին՝ կ'որոտայ .  
 Յրանսացին՝ ինչպէս որ պէտք է երգել :

— 0 —

Մ .

117

## ՊԱՐՍՆԱՆԴԵՍԸ

Հետաքրքիր պարոն մը , որ առաջին անգամ  
 դիմակաւ որ պարահանդէսի մը մէջ կը դաժնուէր ,  
 հարցուց իւր ընկերին .

— Ի՞նչու համար կանայք դիմակաւ կը ծած-  
 կեն երեսին :

Առ այս ընկերը պատասխանեց .

— Աւելի ապահով կերպիւ սրտերնին ցուցնե-  
 լու ու յայտնելու առիթը դաժնելու համար :

— 0 —

118

## ՊՈՒԷՏԻ ՄԸ ԿԱՐԾԻՔԸ

Նորոգ հանգուցեալ Մարթա անուն բարե-  
 պաշտուհւոյ մը վրայ քարոզիչ մը դամբանական

խօսած ատեն, նորա կենաց տեւողութեան միջոցին ունեցած օրինակելի իմաստութեանը վրայ երկարօրէն կը ճառէր:

— Պա՛հ, ըսաւ Պուէտ մը իւր քովինին. քարոզիչը կըսէ թէ Մարթա միշտ իմաստուն եղաւ, եւ ոչ ոք կըցաւ նորա սիրտը դրաւել. սակայն գրաւ կը դնեմ որ այդ առաքինութիւնը տիկինը իւր տգեղութեանը կը պարտէր:

— 0 —

119

### ԱՆՎՐԵՊ ԴԵՂՍԳԻԲ

Բժիշկ մը իւր աղջիկն ամուսնացուցած ատեն, հետեւեալ դեղագիրը տուաւ անոր.

«Առ 2 լիտր անձին իշխելու կարողութիւն. 2 լիտր համբերութիւն. 1 լիտր խորհրդածութիւն. 1 լիտր կարգաւորութիւն եւ 1 լրտր ալ քաղցրութիւն. Այս ամենուն վրայ խառնէ՛ հաւասար քանակութեամբ աշխատասիրութիւն, յայնժամ կ'ունենաս ընտանեկան երջանկութիւն.»

— 0 —

## 120

ԸՆՏԱՆԵԿԱՆ

## ՆՈՐ ՏԵՍԱՐԱՆ ՄԸ

Ա.

Ս... Գիւղի բնակիչներէն 75 տարեկան պառաւ խաթուն մը, իւր կորուսած նախնի կորովն և ուժը վերստանալու համար 3 տարիներէ 'ի վեր կը մտածէր. որովհետեւ հինգ տարի առաջ իւր ամուրի եղբոր մահուամբը ժառանգած 300 ոսկիներէն չ'էր ուզեր բաժնուիլ. Ամեն ատեն երբ նոր բժշկի մը անունը լսէր, իրար կ'անցնէր. կ ուզէր որ թուն ու աղջիկը այդ բժիշկն իրեն բերէին. բայց անոնք գիտնալով որ բժշկին այցելութիւնը նորա ծերութեանն օգուտ մը պիտի չ'ընէ, նա մանաւանդ ուշ կամ կանուխ իրենց ժառանգելիք նոյն 300 ոսկին յուճալէտս վատներն ալ անմտութիւն է, «վիզիթան հինգ ոսկի է եղեր. հէմ մէկ հեղուն չ'կրնար եղեր աղէկցնել. քիչ մը համբերելու ես որ աժննայ. փարադ մեղք է.» ըսելով կը համոզէին: Խաթունն ալ, որ կծծի էր, հինգ ոսկիին անունն առնելուն պէս, կարծես իւր ուժասպառութիւնը կը մոռնար եւ այցելադնոյն աժննալուն յուսովը կը սպասէր:

Յայտնի է որ Տօքթ. Քոխի անունը քանի մը շաբաթներէ 'ի վեր տուներու մէջ յաճախ լսուած, եւ տիեզերահռչակ բժշկին գիտական յաղթանակը խօսակցութեան նիւթ եղած էր: Մեր պառաւ խաթունն ալ կիմանայ տօքթէօրին համբաւը.

ուստի նոյն իրիկունն երբ թող, Պ. Գեորգ տուն  
կը վերադառնայ, անմիջապէս զայն առանձինն իւր  
քով կը կանչէ :

— Կէ՛որդ, եա՛վրում. մտիկ քէ քի ըսեմ. ասօր  
քովի տունէն՝ մեզի եկան. ըսին քի՛ դազէթային  
մէջ կարդացեր են, շիյանմ ո՞ր մէմլէքէթը նոր  
հէքիմ մը ելեր է, անանկ իլաճ մը կտեր է քի՛  
սա ամեն ցաւի պիրապիր է եղեր. հաթտա աշ-  
խըրքին չորս ծարէն կիւրիճ կիւրիճ հէքիմներ  
անոր իլաճը սորվելու համար օտքը կերթան կոր  
եղեր :

— Մ՛ամիկ, մենք ալ իմացանք ամա ան իլաճը  
վերէմի համար է, ըսին :

— Չէ՛. նէ՞ մինասիպէթ. ութը տասը տարուան  
հինցած ամեն հիւանդութան ալ եարամիշ կըլլայ  
եղեր. հէլպէթաէ սա իմին խալչախա կլխու խոս-  
տուկին ալ ֆայտա մը կընէ : Իիւր բիւրոց հիւ-  
անդներ ցաւերնին մէքթուպներով կիմացնեն կոր  
եղեր տէ՛ հէմէն իլաճը կը խրկէ կոր եղեր : Մու-  
շու էվրանդը (Նրուանդ) քու պարեկամդ է. կը-  
սեմ քի մեր պէրնէն ալ մէքթուպ մը կրել տանք :

— Ատանկ բաները քեզի համար պօշ բաներ են.

— Հա՛, կէնէ պատ մի՛ քաշեր :

— Պատ չեմ քաշեր կոր. աստար տարի է ին-  
տոր անցուցիր նէ քիչ մը ատեն ալ անանկ դնա.  
վաղը մէկայն օր ատոր թէրթիպը սորվող հէքիմ-  
ները կուգան, անոնցմէ մէկուն կը ցուցնենք.

— Մ. եա՛վրում, տիյօր ան ատեն ո՞վ կիտէ

ի՞նչ կըլլամ ի՞նչ չեմ ըլլար . ցորեկուընէ պէրի  
սիրտս թունդ էլած է . մուշու էվրանդին ըսէ ,  
մէքթուպ մը կրէ . բօստա փարասին ալ 40 փա-  
րայ է եղեր . . .

— Բօստա փարասին 40 փարայ է ամա , իլա-  
ճին փարան ի՞նչ պիտի ընենք . շատ սուղ է եղեր  
կըսեն կոր . ելլէ հինգ ոսկի ուզէ նէ . . . .

— Կ'ուզէ նէ տասը ուզէ , հասկցա՞ր , սա իլլէ  
պտոր պերել տամ . կէնէ պատ մի քաշեր կըսեմ  
կոր . ադ ադչէ գարա կիւն իչին տիր :

— Աղէկ կըսես ամա , մամիկս , կէնէ կըսեմ քի  
տօղթօրին գտածը վերէմի իլաճ է . քեզի պէս  
տարիքը առած մէկը վերէմ չըլլար . խալչադ վո՞ւր ,  
ճիյէրդ վո՞ւր :

— Մեղայ , ցաւ ըսածդ կիթ կիտէ մարդուս  
տէյ ճիյէրը կը գարնէ . իսնակին պարկետնին  
իրեք տարին պիտի թամամցունեմ քի սա սէտի-  
րին քէօչէն նստեր կը ճվճվամ . նէ մարըդ նէ ալ  
դուն , հիչ հողերնիդ պիլէ չէք ըներ :

— Ո՞վ ըսաւ . ձեռուընուս եկածը չըրի՞նք մի ,  
թամ տարի մը հէքիմը գնաց եկաւ , ծերութեան  
հիւանդութիւն է , ախպօր պէս հետը պարընմիչ  
ըլլալու է , ըսաւ . ունեցած փարադ անոնց ձեռ-  
քը լեցնես նէ պիլէ , կէնէ ֆայտա չըներ :

— Ինձի նայէ , կէ՛որդ . ինչ կուզես նէ ըսէ ,  
սա մինպահաթ ադ իլաճէն պերել պիտի տամ .  
դուն մուշու էվրանդին կրել պիտի տա՞ս մի չէ՛ ,  
ան ըսէ ինձի :



Պ. Գեորգ. մամիկին այս աստիճան պնդելուն վրայ զարմացաւ, եւ մտածելով որ չպիտի կրնայ համոզել, ու խօսքն ալ պիտի երկարի, ինքնիրեն «արիւնքո՛ւ զլուխքո՛ւ» ըսելէ ետքը, միտքը նոր խորհուրդ մը կուգայ ու կըսէ. «Անքի խարար տուեր ես նէ, վաղու ընէ թէզը չի կայ, գրել կուտամ»:

— Ապրիս. հա՛ իշթէ ասանկ կուգեմ.

— Ծախաթ, հիւանդ ու թիւնդ էնանէսիով գըրել տալու ենք, մէսէլա, քանի՞ տարի է քի աղցաւը ունիս.

— Տայիիդ... սեւ արեւիս մեռած տարիէն, սանկ նիմ եէլ մըն էր, կիթ կիտէ խոստուկի տառձաւ. էյ ըռահաթ 10 տարի կայ.

— Բէք աղէկ, դուն քանի՞ տարու ես.

(Իող ելած) — Տարիքս ի՞նչ պիտի ընես.

— Տարիքդ գրել տալու է քի անոր կէօրէ իլաճը տայ.

— Քա ճանըմ, հիչ տարիքի խօսք չուզեր.

— Ի՞նչ կը վախնաս կոր, հապա ելլայ քեզ ճահիլ կիտնալով դօռլու իլաճ մը դրկէ նէ, շես կրնար դիմանալ, ետքը ձիւն կիջնայ գլխուս.

— Ո՛ւյ, սիրտդ սիրեմ քի իս կը հոգաս.

— Ի՞նչ ըսել է մա՛միկս, հոգալն ալ խօսք է. տարի տիւնեատէ պիր թանէճիք մամիկիմ սին.

— Անանկ է նէ իքիսի օրթասը պան մը կրէ՛.

— Իքիսի օրթասըն ի՞նչ ըսել է.

— Է՛հ . . . սանկ . . . քառսուն . . . բէք բէք  
քառսունը հինգ տարու է , ըսէ :

— Մամի՛կ , խաթրըդ չը մնայ ամա , հիւանդը  
ես չ'եմ , դուն ես . 35 տարու թուան տէր մէկը  
նա՞սըլ քառսունը հինգ տարու կ'ըլլայ . հէքիմը  
խաբենք նէ ետքէն մենք դարարըլը կ'ելլանք :

— Է՛յ ի՞նչ կիտնամ հապա . . . ի՞նչ ըսինք . . .  
ի՞նչ ըսինք . . . դուն ըսէ նայինք .

— Սէքսէնը հինգ պիտի գրել տամ .

— Վո՛ւյ . սախըն հա՛ . ատտար չի գամ . . . .  
սանկ վաթժունին եէթմիչին մէջն է ըսէ :

— Հէքիմը խաբել չ'ըլլար կըսենք կոր քեզի .  
սէքսէնը հինգ — տօխսաննոց է ըսենք երթայ .

— Ո՛ւյ չէ՛ , չէ՛ , անտար մ'ելլար . պարէ օլտու  
օլաճախ , սէքսէննոց է ըսէ :

— Բէք աղէկ , ես վաղը մուշու Երուանդին աղ-  
ւոր Ֆրանկսըզճա շուռու թլու նամակ մը գրել կու-  
տամ կը խրկեմ .

— Զի մոռնաս հա՛ , ճանրմ կէսըգ . մէջը կըել  
տուր քի՛ առտուները խալչաս խաղըխ կը կըել  
կոր .

— Դուն ըռահատ ըրէ . երկու շաբաթէն ճու-  
ղապը կ'առնենք .

Բ

Հետեւեալ օրը Պ . Գէորգ , իւր երկու մտերիմ  
բարեկամներուն հետ տեսնուելով , բռնելիք զու-  
արճալի ընթացքնուն յատակագիծը պատրաստելէ  
ետքը իրիկուան տուն կը վերադառնայ :

Մամիկը, որ մինչեւ իրիկուն անհամբեր անցուցեր էր, թուան վերադարձը լսելուն պէս՝ քովը դրուած և զանգակի տեղ ծառայող գաւազանը երեք անգամ գետնին զարկաւ, որով եւ Պ.Գ.է. որդ շտապեց պառաւին քովը երթալ:

— Պարի էկար եւ վրում: հէլպէթտէ խեր խապար մը պերիր. էս ասօր իրեք հեղ «հարմեր օղջում» ըսի:

— Բէք աղէկ ես ըրեր:

— Մէքթուպը կրել տուի՞ր:

— Հա՞պա, կրել տալն ալ խօսք է. Ֆախաթ թամամ քի բօտային տալու համար շմէնտըֆէռին ստասիօնը գացի, մէյ մ'ալ նայիս, թռէն մը եկաւ, մէջէն իրեք հատ շնորհքով հէքիմներ ելան:

— Վո՞ւրկէց կուգան կոր եղեր:

— Իշթէ ան վերէմին իլաճը կտնող հէքիմին քովէն. անոր թէրթիպը սորվեր եկեր են:

— Վույ առիկայ բէք աղւոր սյան էղաւ, էյ պարէ մէքթուպը չի դրկէիր. պօշ պօշունա 40 փարան վրայ պիտի տայինք:

— Խե՞նթ եմ քի արթըխ նամակը բօտային տամ, կամացուկ մը ճէպս դրի պահեցի, անկէց ստասիօնը կեցող թախըմ մը թէրճիմաններուն գացի, ո՛ր հօթէլը իջնալնին հասկցայ. էյէր վաղը եա մէկալն օր ուղես նէ, պիտի պերենք:

— Մէկալն օրը ի՞նչ է. վա՛ղը. վա՛ղը:

— Իհ, նայինք արթըխ. մարդիկը կլոխնին քե-

րելու վախիթ չպիտի ունենան . 3 օրուան ճամբայ  
ասկէ հեռու իքէն պիւթիւն թէլէկուաֆներ քաշ-  
ուեր է . ուզոյ ուզողի :

— Ույ ճանրմ կէորդ , նայէ քի վաղը պերես .  
սիրտս բէք կը հատնի կոր :

— Մամիկ , նամակը խրկած ըլլայինք նէ , 2 շա-  
բաթ պիտի պէքլէյէյիր , հիմա շե՞ս կրնար կոր օր  
մը համբերել . Փախաթ քիչ մը թուղլուճա կերև-  
այ կոր , 1 լիրա թէրճիմանի բարայ , 2 լիրա ալ  
վիղիթան , 2 լիրա ալ իլաճը՝ 5 օսկի .

— Վո՛ւյ . . . պերանս էրեցաւ , օ՛րթտի :

— Է՛հ . ի՞նչ Փայտա ունի , կուզես նէ :

— Սանկ քէսէն քէս բաղարլըխ ըրի՞ր եա .

— Հա՞պա , իլաճը սուղ է ըսելով տասը լիրայէն  
դուռ բացաւ , իրեք սահաթ շէնեէ եարըչտըրմիշ  
ըրի . եալվար եախար էղայ .

— Իլաճին իլէն վիղիթային բարան նէ իսէ ա-  
մա , թէրճիմանի բարաս ի՛նչ է . հէքիմ ըսածդ ա-  
մեն լեզու կիտնալու է .

— Աղէկ ամա ասոնք հայերէն չիյտեն տէ , հե-  
տերնին թէրճիման ունին ,

— Էյ նէ իսէ , կըլխուս սատախան է ըսելով կու-  
տենք . ամա քանի՞ հեղ պիտի կայ ,

— Զիյտեմ ամա մէկ , բէք բէք էրկու հեղ .

— Ճանրմ կէորդ . Փուխարէ ենք ըսելով մէկ  
հեղուն լմնցունել տուր . եանի ճուրի ճամբայ պի-  
տի ընէ նէ , ես վաղ անցայ . հէմ քեզի պան մը  
ըսեմ . աճապա սա մեր կիտած ուններէն հիւանդ

էղողներուն խապար մը տա՞նք, քի հոս կան  
ինքզինքնին ցուցունեն, մէյմէկ մէծիտիյէ ալ ա-  
նոնք տան նէ, մեր տալիք հինգ օսկիին Փայտա  
կլնէ .

— Անանկ բան չըլլար . հաստա - խանէ՞ պիտի  
ընենք տուներնիս . հէմ մարդը չի նայիր .

— Եարտըմ ըլլայ տէյի կըսեմ կոր երավրում .

— Եարտըմը օլտու օլաճախ, քու վուճուտիդ  
սաղութանը համար 5 չէ՞ 100 լիրա պիլէ խօշնու-  
թութենով կուտանք, քու վուճուտդ պէտք էմեզի .

— Էհ, էհ, դուն կիտես . Ես վաղն առտուընէ  
չամաշըրս կը փոխեմ կը նստիմ . Ամա՛ ճանըմ կէ-  
որդ, ճուրի ճամբայ չընէ .

— Ասոնք անանկ մարդիկ չեն . դուն աս գի-  
շեր ըռահաթ ըրէ, պառկէ, վաղը ինչալլահ հէ-  
քիմը կառնեմ կուգամ .

Գ .

Ժամանակն է ծանուցանելու թէ, Պ . Գէորգի  
երկու վարպետորդի բարեկամներն Եւրոպացի բը-  
ժիշկներ ձեւանալով, դեմքերնին շինծու մօրուք-  
ներ եւ երկայն գլխարկներ գրած պիտի ներ-  
կայանային . եւ սրովհետեւ հարկ անհրաժեշտ էր  
Եւրոպական լեզու մը գիտնալ, ուստի ութը լե-  
զուէ խօսակցութեան բառարանէն օտար լեզ-  
ուաւ մը թիւերը գոց ըրեր էին . որոշած էին նաև  
որ ստանալիք ալցելագնովնին երեք ընկերք ա-  
ռաջին կարգի ճաշարան մը երթան դրօսնուն . բաց

ասկից, տանը մէջ գտնուողներէն չի ճանչցուելու համար գիշերուան ժամը 2 ին պիտի այցելէին:

Այս կարգադրութենէն ետքը Պ. Գէորգ նոյն օրը կանուխէն տուն վերադարձեր և մամիկը համոզեր էր թէ՛ «ցորեկ ատեն մարդիկը գլուխնին քերելու վախիթ չունենալնուն համար գիշերը պիտի կրնան գալ»:

Եւ իրօք նոյն գիշերուան ժամը 2 ին եկան երկու բարեկամներն, որոցմէ մին իբր բժիշկ՝ երկայն կրկնոց մը հազեր եւ կասոյտ ակնոց մը անցուցեր էր շինծու մօրուքին վրայ. իսկ երկրորդն իբրեւ թարդման ձեռքը բռնած էր մեծ պայուսակ մը, զոր վիրաբուժական գործիքներով լեցուած ցուցնելու համար մէկ քանի քօնեաքի պարասպ շիշեր և հին հազուստներով ուռեցուցած էր:

Պ. Գէորգ դանոնք հիւրնկալելով՝ ուղղակի մամիկին սենեակը կ'առաջնորդէ. և իւր մօր կը հրամայէ ուրիշ սենեակ մը երթալ. «քօնցօլթօ ընելու համար մարդիկը մինակ կուզեն կոր մնալ» ըսելով, և ինքն ալ խնդալը արդիւլելու համար մօրը հետ կը մեկնի:

Արդէն մամիկը բժշկաց գալուստը իմանալուն պէս՝ սկսեր էր իւր 'ի վաղուց անտի գիտցած «օղջում քեղ մարիամ. ի շնօրհ տէր օրդեալ տուր 'ի կանանչ» աղօթքն ըսել ցած ձայնիւ. ուստի Տօքթէօրը երբ գլխովը զինքը բարեւեց, ինքն ալ նոյնպէս գլխովը պատասխանեց առանց դադարեցնելու իւր աղօթքը:

Հինգ վարկեան դադարէ մը ետքը վարպե-  
տորդին մամիկին մօտեցաւ, բաղկերակը դննեց,  
ապա սիրտն ու կրնակը մտիկ ընել սկսաւ. իսկ  
ընկերը, որ մէկ ձեռքովը դամբար, միւսովը ժա-  
մացոյցը բռներ էր, սկսաւ հարցնել Տօքթէօրին.

— Այննց վանցի՞հ .

— Օ՛. տրայնց վանցիհ .

— Նայնցընը ա՞խցընը .

— Նա՛յն, զէ ՚հնցընը դիպցընը. (և խաթունին  
ազդրը մատնանիշ կը ցուցնէր .)

— Հ՛ահ, թամամ. իշթէ ադ տեղն է, ըսաւ  
մամիկը .

Թարգմանը հարցուց մամիկին — Զօդ ֆէնտ  
աղրըեօր, էօլլէ՞ մի .

— Հէ՛. հէ՛ աշկը էլլա, թու-թարսա՛ մարիկ  
մարիկ կէթիբիբ .

— Շիմտի էլի օլաճադսըն .

— Իշալլահ, իշալլահ .

Բժիշկը առ թարգմանն — Տրայ ցվայը հո՞ւն-  
տէրտ .

— Ա՛. ֆինվ հունտէրտ .

— Ֆինվի դէքսէ ա՞խթէ .

Թարգմանը խաթունին — Սապահլարը շօդ ֆէ-  
նա աճը վէրիբ, տէյի՞լ մի .

— Հէ՛, հէ՛ .

— (Թարգմանն առ ընկերը) Օ՛, օ՛, ցվայ ֆուֆ-  
ցիյհ նայնէ .

Այսպէս վարպետորդիք ամենայն պաղարիւն-

ութեամբ իրենց զննութիւնը կատարելէ ետքը, խորհրդակցութեան համար քովի սենեակը գացին, Պ. Գէորդ իւր մայրը մամիկին քով դրկելէն ետքը՝ սիկարաները վառեցին, և խնդու քնին արգելելու համար թաշկինակով բերաննին կը գոցէին: Այլ կարգը Պ. Գէորդին եկած էր իւր դերը կատարելու. ուստի 5-10 վայրկեանէ ետքը մամիկին քովը գնաց:

— Ի՞նչ խապար կէ՛որդ.

— Է՛ աշկ օլսուն իրենց. գիտես քի հետդ պարապար մեծցեր են. սա օրը ո՞ր սահաթին ցաւուդ բռնելը պիլէ կըսեն կոր.

— Ապը հիյէթնուն պէլլի էր ամա քի խելացի են. բէք տիխաթլը նայեցաւ. սանկ ծառքը մէյ մը վրաս տրաւ նէ կիտես քի, վրայէս եիւք մը տէֆ էղաւ.

— Անանկ է, հէմ անխտար կուշտ աչուի մարդիկ քի ընոր իլաճըղօւլու ըլլալուն կը վախնանք տալու, մենք վաղ կուգանք էրկու լիրայէն, մեր պէտէլէն շիշէ մը շուռուպ պիտի խրկենք» ըսին. ան շուռուպէն առտու իրիկուն մէյմէկ չօրպայի խաչըխ պիտի խմես, թէքմիլ իլիկներուդ ցաւերը տէֆ պիտի ընէ եղեր.

— Աղէկ ամա, եավրում, ադ ի՞նչ իլաճ է եղեր քի չպիտի կրնամ տիմանալ.

— Ո՞վ կիտէ. իլաճին անունը ինձի կըսե՞ն. թէքրար թէքրար վախ ունի՞ մի տէյի հարցուցի նէ՛ հիչ սիրտ մի՛ հատցունէք, թող աս իլաճը խը մէ, էօմբիւ օլտուխճադ կապրի ըսաւ.



— Էյ հիմա ատոնց ի՞նչ պիտի տանք ,

— Մալիւմ ա' , 2 լիրա հէքէմին' 1 լիրա ալ թէրճիմանին . աս հիսապով , իլաճին բարան , 2 լիրան կը վաստկինք կոր .

— Քա աղջիկ , ավուճ մը բարան ինտո՞ր պիտի տանք ,

— Ի՞նչ պիտի ընենք , տանք պիտի , ալօղաթի մը երթաս բան մը հարցունես նէ՛ «հա» եախօտ «չէ» մը ըսելու համար օսկի մը վիզիթա կառնէ կոր . աս մարդիկը գիշեր ատեն անտար տեղէն ելան էկան . մայէթինտէ ալ շիշէ մը իլաճը իրենց պէտէլէն կուտան կոր :

— Կէնէ պիտի կա՞ն .

— Նէ մինասիպէթ , ճուրի ճամբայ ըսող սոյէն չեն ըսինք , վիզիթան էրկու մէճիտիյէնոց հէքիմէն աղէկ չէ՞ր մի ասիկայ : Ծառքը վրաս դրաւ նէ աղէկցայ , ըսիր :

— Էյ հա' , հա' , աղ ատանկ է .

— Արթըխ սիրտդ ըռահատցաւ ա' , քու վուճուտդ 1000 քէսէ կաժէ . 3 լիրան ի՞նչ պիտի ըլլայ , հէմ քեզի պան մը ըսե՛մ . իլաճդ հատնի նէ պիլէ՛ ես արթըխ ատոնց հետ բարեկամ եղայ , կերթամ անկուտիճէ շինել կուտամ :

Այս միջոցին քովի սենեկէն վարպետորդիներէն մին դրանը զարկաւ .

— Հայտէ' , կերթան կոր , ըսաւ Պ. Գէորգ , ինչ պիտի ընենք . չարուխ ընենք , հա՛յտէ :

Մամիկը Պ. Գէորգին հանած աղմուկէն բոլորովին շուարեալ չկրցաւ խօսքը շարունակել, այլ միայն «պարծիս տակի պէշ թախտայիս մէջէն իրեք օսկի տուէք»ը մրմուալէն ետքը՝ հնհնալով՝ վերմակը գլխուն քաշեց:

••

Պ. Գէորգ եւ իւր երկու ընկերք ըստ կանխագոյն որոշման՝ նոյն երեք օսկիով Ա. կարգի ճաշարանի մը մէջ յաջորդ կիւրակէ օրը զուարթութեամբ անցուցին, եւ ամեն անգամ որ գինւոյ գաւաթները իրարու կը բաղխէին, «այնցընը ախցընը. զիպցընը նայնցընը»ն կրկնելով՝ կը զուարճանային:

Թէեւ Պ. Գէորգ մամիկին համար շիշ մը շամբանեա բերեր էր. բայց խաթունը անկէ օգուտ մը չտեսնելը չէր համարձակեր յայտնելու. վախնալով որ նորէն պէշ — թախտաէն ուրիշ օսկիներ ալ օդ առնելու կ'ելնեն. ուստի այնուհետեւ ամենեւին չէր տրտնջար. որով մերթ ընդ մերթ թէ աղջկան եւ թէ թոռանը պատճառած գլխուցաւերուն ա'լ վերջ տուաւ:

— 0 —

121

### ՈՐԿՐԱՄՈՒ ՈՒԽՏԱԻՈՐԸ

Օր մը նպարավաճառին մէկը խանութին մէջ նստած՝ կը ճաշէր, այն միջոցին իւր բարեկամներէն միոյն մօտէն անցնելը տեսնելով՝ զայն կը բարեւէ եւ անքաղաքավար չի համարուելու

մտօք «հրամմեցէք» մը կըսէ : Բարեկամը ամենայն սիրով կ'ընդունի այս հրաւերը եւ կ'սկսի կերակուրը արագաբար լափել, որով հիւրնկալը զարմանահար՝ կը պարտաւորի կէս կուշտ կէս անօթի ետ քաշուիլ, եւ քաղաքավարութեամբ հարցնել թէ «այնպէս շտապաւ անօթի փորանց ո՞ւր կերթար» :

— Ե՛ղբայր, կ'ըսէ որկրամօլը լեցուն բերնով, երկու երեք շաբաթէ՛ ի վեր ախորժակս դոցուած ըլլալուն՝ ուխտ ըրեր էի եկեղեցի երթալ. յարմար առիթը այսօր դտայ, ու կ'երթայի՝ երբ զիս հրաւիրեցիր :

— Շատ աղէկ որոշեր ես, կը պատասխանէ նպարավաճառը, միայն թէ՛ կը խնդրեմ որ եկեղեցիէն վերադարձիդ, խանութիս առջեւէն չ'անցնիս :

— 0 —

122

ԲԱՌ ՄԸ

Անգղիոյ վարժարաններէն միոյն ուսանողք, ուզեցին խաղ մը ընել իրենց ուսուցիչներէ միոյն. ուստի օ՛չ մը երբ դասերնին աւանդելու համար դասարան կ'երթային, անոնցմէ մին սե տախտակին վրայ կաւիճով գրեց.

«Մեր դասատուն է մի էջ»

Երբ դաստիարակը դասարան մտնելով զայս կը  
Բ

տեսնէ՝ ամենայն պաղարիւնութեամբ կաւիճով  
սա մէկ բառը կաւելցնէ,

«Մեր դասատուն է մի էջ ՔՇՈՂ»

— 0 —

Հ. Լ

123

### ԵՐԿՈՒ ԱՆԱՌԱԿՆԵՐ

Երկու անառակ տղայք ոստիկանութեան պա-  
հականոցը կը տարուին, բժշկական դպրոցի եր-  
կու աշակերտները փողոցէ մը անցած ժամանակ-  
նին՝ լեզու հանելով դանոնք ծաղրելնուն համար:

Երբ ոստիկանապետը կը հարցնէ թէ ի՞նչու  
համար ծաղրեցիք այս պարոնները:

— Քաւ լիցի որ ծաղրենք, կը պատասխանեն  
անառակները. այլ կարծելով թէ այս երկու պա-  
րոնները բժիշկ են, լեզունիս իրենց ցուցուցինք,  
մեր տկարութեան պատճառն լսելու համար:

Այս պատասխանէն անառակք անպարտ կ'ար-  
ձակուին:

— 0 —

124

### ԱՆՀՈԳ ՄԸ

Գաղիացի մը օր մը իւր կնոջը հետ պտտել  
կելնէ. ճամբան վարձու կառք մը բռնելով, նախ

տիկինը կը նստի կառքին մէջ, և երբ ամուսինն  
այ կառք մտնելու վրայ էր, ձիերը բանէ մը կը  
խրտչին եւ կառքը սրարշաւ կը տանին. տիկինը  
'ի դուր կառքին մէջէն կը պոռար, իսկ այրը կառ-  
քին ետեւէն ամի 'ի բերան կը մնայ, եւ երբ ա'լ  
կառքը աչքէն կաներեւութանայ, ինքնիրեն կըսէ.  
— Ելլեմ տուն երթամ, վաղը անշուշտ լրա-  
դրաց մէջ մանրամասնութիւնը կը կարդանք:

— 0 —

## 125

### ԿԱՏԱԿԻ ՄԸ ԼԱԻ ՎԱԽՃԱՆԸ

Ամերիկացի երեւելի բժիշկ մը, կեանքը ազա-  
աած օրիորդի մը տեսութեան դացած ըլլալով,  
օրիորդն, որ յոյժ դեղանի և հարուստ էր, հինգ  
տուար ունենալով ձախ ձեռացը մէջ, բժիշկը վար-  
ձատրելու առթիւ կը հարցնէ.

— Տօգթէ՛ օր, ո՞րչափ վճարելու եմ ձեր մա-  
տուցած այն անգին ծառայութեանը փոխարէն,  
որով կեանքս փրկեցիք.

— Յաճախորդացս կամացը թողած եմ իմ վար-  
ձատրութիւնս, ինչ որ տան, սիրով կ'ընդունիմ:

— Բայց շատ անգամ յուսախար չէ՞ք լինիր,  
կը կրկնէ օրիորդը իւր աջ ձեռքը, որ պարապ էր,  
երկնցնելով բժշկին, ա'հա ուրեմն ընդունեցէք:

— Շնորհակալ եմ, կը պատասխանէ բժիշկը, առանց օրիորդին աջ ձեռքը թողելու, կատարելապէս վարձատրուած եմ:

Իսկ օրիորդը իւր ձախ ձեռքին մէջ պահած հինգ տոլարը բժիշկին ցոյց տալով երբ կըսէ թէ «Այ ձեռքս պարապ է, այցելագիրնսիդ ձախ ձեռքիս մէջն է, կը խնդրեմ որ ընդունիք,» բժիշկը սապէս կը պատասխանէ. «Ձեր աջ ձեռքը (նշան «իրոյ) ինձ տալէ վերջը, դրամ ընդունելով նախատուիլ չեմ ուզեր. դուք յօժարակամ նուիրեցիք ինձ ձեր անձն եւ ձեր սէրը, և ես ընդունեցայ, որոյ վկայ են երկինք»:

Օրիորդն, որ 'ի ներքուստ ուրախ էր ըրած կատակին այնպէս անյուսալի ելք մը ունենալուն, հաճութեամբ կամուսնանայ ճարպիկ բժիշկին հետ:

— 0 —

126

### ԳԻՒՂԱՊԵՏ ՄԸ

Միականի մը, գիւղապետին ներկայանալով անցագիր կուղէ. գիւղապետը անցագրին դիմագծու թեան մասին մէջ հետևեալ կերպով կը գրէ, քիչ մը վարանելէ ետքը,

«Այքերը սե, բայց մեկը պակաս»

— 0 —

## 127

## ԸՆԴՄԻՋՈՒՄ ՄԸ

Երբեք կը պատահին այնպիսի անձնաւորու-  
թիւնք, որք իրենց խօսակցին խօսքը անհամար-  
բու թեամբ ընդմիջելուն համար կը զղջան. ահա-  
ւասիկ օրինակ մը:

Ա, իր կին մը, որոյ ամուսինը դեռ նոր մեռած  
էր, օր մը երիտասարդի մը այցելութիւնը ըն-  
դունեցաւ. Այս վերջինը ծնրադրեց տիկնոջ առ-  
ջեւ, և

— Տի'կէն, արդեօք կրն'ամ խնդրել ձեր...

— Ո'հ, բարեկամս, ընդմիջեց տիկինը, դեռ  
չատ կանուխ է.

— Ներեցէ՛ք, տիկին, սրտերնիդ թունդ մի'  
հանէք. խնդրածս ոչ թէ ձեր՝ այլ ձեր աղջկան  
ձեռքն է, որոյ սաստկապէս սիրահարեալ եմ.

(Արդեօք այս պատասխանէն տիկնոջ դէմքը թ'նչ  
դոյն ստացաւ).

— 0 —

## 128

## ՓԻԼԻՍՈՓԱՅ ԲԺԻՇԿ ՄԸ

Բժիշկ մը իւր յոյժ երիտասարդ որդին ամուս-  
նացնել կ'ելնէ. բարեկամներէ ոմանք սա դիտո-  
ղութիւնը կրնեն թէ,

— Տեօդ թէ՛ օր, շատ կանուխէն կ'ամուսնացնէք

ձեր որդին . աւելի աղէկ չէ՞ր ըլլար քիչ մ'ատեն  
այ մեծնալէ եւ խելքը քիչ մ'այ գլուխը գալէն  
ետքը այդ որոշումը գործադրէիք ,

— Իրաւունք ունիք , կը պատասխանէ տէօք-  
թէօրը , բայց եթէ քիչ մը խելքը գլուխը գայ՝  
ամենեւին չ'ամուսնանար :

— 0 —

129

## ԱՅՐ ԵՒ ԿԻՆ

Նոր ամուսնացած էին . նոյն շաբթուն գոքան-  
չը կը մեռնի . փեսայն այն աստիճան հեծեծանօք  
կուլայ՝ որ աչքերն արիւն կը լեցուի . Հարսը կը  
հարցնէ թէ ,

— Մայրս շա՞տ կը սիրէիք որ այսչափ կուլաք .

— Ի՞նչ կըսես , իւր ինձ ըրած բարիքը մինչեւ  
յաւիտեան չեմ կրնար մոռնալ ,

— Զարմանալի՛ բան որ ես չեմ գիտեր . արդ-  
եօք ո՞րպիսի բարիք էր ձեզի ըրածը ,

— Ահաւասիկ կարգուած շաբթուս կը մեռնի .  
ասկէ աւելի բարիք կը՞լլայ .

— Կը սխալիս սիրելիս , եթէ անոր աստուծոյ կերս-  
րո՞ջս ալ ըլլայ՝ այն ատեն բարիքնիս կատարեալ  
կըլլայ .

— 0 —



## 130

## ԿԱՆՍՆՑ ՏԱՐԻՔԸ

Երեկոյթի մը մէջ տարիքի վրայ խօսք բացուե-  
լով, հետաքրքիր պարուն մը հարցուց թէ՛ արդ-  
եօք ի՞նչ է պատճառը որ կանայք ճիշդ տարիք-  
նին ծածկելով՝ ինքզինքնին իրենց ուղածին չափ  
կուզեն ցուցնել .

— Որովհետեւ, պատասխանեց խոհական անձ  
մը, ընդհանրապէս կանայք այն տարիքը կուզեն  
ուենալ՝ որով կը փափաքին երեւալ .

## 131

## ԿԵՂԾ ԶԵՌՆԱԾՈՒՆ

Ճարտար քսակահատ մը, օր մը Բարիզի ա-  
ռաջնակարգ ճաշարաններէն միոյն մէջ ճաշելու  
կ'երթայ .

Ճաշելու միջոցին, սեղանի սպասներն, որք բո-  
լորովին արծաթէ էին, իւր ուշադրութիւնը կը  
գրաւեն . եւ կը փափաքի անպատճառ անոնցմէ  
գոնէ դգալ մը գրպանել, բայց չտեսնելով որ ա-  
մէն մարդ զինքը կը դիտէ՝ չի համարձակիր . և  
մինչդեռ ասոր ճար մը կը մտածէր, կը տեսնէ  
որ իւր ճիշդ դիմացը նստող յաճախորդ մը, — որ  
այն ալ իրեն պէս քսակահատ մը լինելու էր, —  
ճարպիկութեամբ դգալ մը կը գրպանէ . Զայս  
տեսնելով՝ ճարտար հնարք մը կ'իյնայ միտքը .  
ուստի կը սկսի քովը նստողներուն հետ յարաբե-

րու թիւն հաստատել . և անոնց պատմել թէ ինք  
ճարտար ձեռնածու մ'է , եւ թէ Եւրոպայի շատ  
մը քաղաքներուն մէջ ճարտար փորձեր ընելէն  
ետքը՝ այս անգամ ալ եկած է 'ի Բարիզ իւր բաղ-  
դը փորձել , ու իբր ապացոյց իւր խօսքերուն . — Օ-  
րինակի համար , կըսէ . կուզէ՞ք որ նոյն իսկ այս  
վայրկենիս իմ վարպետութիւնս ցուցնեմ .

— Այո՛ , այո՛ , կը ձայնեն սեղանակիցք .

— Ուրեմն , տեսէ՛ք . ահաւասիկ սա դգալը ա-  
մենուդ աչքին առջեւ դրպանս կը դնեմ , և  
իւր առջեւը դրուած դգալը դրպանելէ ետքը ,  
և Հիմա , տե՛արք , այս դգալը սա իմ դիմացս  
նստող պարոնին դրպանէն պիտի հանեմ . և կըսէ ,  
եւ ձեռքովը դրածի պէս կ'երթայ անոր դրպա-  
նէն դգալը կը հանէ : Հարկ չէ ըսել թէ՛ ներկայք  
յապուշ կը կըթին .

Իսկ միւս քսակահատը , մտածելով որ եթէ  
հակառակորդին կեղծ ձեռնածու մը լինելը երե-  
ւան հանէ՛ իւր ըրած գողութիւնն ալ յայտնուելով  
պիտի խայտառակուի՝ անձայն կը մեկնի ճաշա-  
րանէն , բայց փողոցին մէջ անոր կը սպասէ .

Երբ մեր կեղծ ձեռնածու քսակահատն ալ փո-  
ղոց կ'ելնէ՛ առաջինը զինքը դիմաւորելով կըսէ ,

— Հիմա սա ըրածիդ հաւնե՞ցար , պա՛րոն ,

— Ի՞նչ ընեմ եղբայր , հացի կուիւ է այս :

Ա .

## 132

## ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՇԻԻ ՄԸ

Մարդու մը տարիքն և ծննդեան ամիսն գուշակել կարելի է հետեւեալ կերպով :

Նախ կը պատուիրէք իրեն, գրելիքը ձեզի ցուցնելէ զգուշանալ, ապա նշանակել ծնած ամսոյն տարւոյն քանի՛ երրորդ ամիսն ըլլալը, եւ դայն 2 ով բազմապատկել կուտաք, արտադրեալին վրայ 5 եւս աւելցնել և այն վերջին գումարն ալ 50 ով բազմապատկել տալէ ետքը, իւր տարիքը, զոր ինքը գիտէ, անոր վրայ բարդել տուէք այն ատեն ամբողջ գումարը հարցուցէք, զոր պէտք է ճշգուծեամբ ըսէ, որմէ գուք ալ 250 պիտի զեղչէք :

Ենթադրելով թէ 30 տարեկան է այն անձը և Գեկտեմբերի մէջ ծնած, գործողութիւնն այսպէս պիտի կատարուի :

$$12 \times 2 = 24 + 5 = 29 \times 50 = 1450 + 30 = 1480$$

Արդ այս 1480էն պէտք է զեղչել 250ը, որով կը գտնենք 1230. սոյն գումարին վերջին երկու թիւերը ցոյց կուտան մարդուն տարիքը, այն է 30, իսկ առաջին թիւերը՝ Գեկտեմբերը, որ է տարւոյն 12րդ ամիսը : Հետեւաբար գրողին կը յայտնէք թէ 30 տարեկան է եւ Գեկտեմբեր ամսոյ մէջ ծնած :

## 133

## ԱՆՍԻՍԱԼ ԴԵՂԱԳԻՐ ՄԸ

Անգամ մը, Ամերիկացի վարպետորդի մը լը-  
րագրաց մէջ հրատարակել կուտայ հետեւեալ  
ազդը.

«Անսիսալ միջոց՝ էրիկներէն դժգոհ եղող տի-  
կիները պատուաւոր կերպիւ ազատելու համար :  
Սոյն թանկագին եւ փափաքելի միջոցը կ'ուսուց-  
ուի երկու Ֆրանքի նամակագրոջմ դրկողին.»

Այս ազդը կարդացող հազարաւոր տիկնայք,  
որք անշուշտ էրիկներնէն դժգոհ էին, անմիջա-  
պէս երկերկու Ֆրանքի նամակագրոջմ կը յանձնեն  
թղթատարին, որուն միջոցաւ շարաթ մը ետքը  
կը ստանան հետեւեալ տպուած դեղագրէն մէկ  
մէկ օրինակ :

«Սիրով վարուեցէ՛ք անոր հետ»

Հարկ չէ ըսել թէ, վարպետորդին այն հազա-  
րաւոր Ֆրանքներէն մաս մը տպագրութեան եւ  
թղթատարի ծախսին յատկացնելէ ետքը, մնացա-  
ծըն ալ իւր գրպանին կը յատկացնէ :

— 0 —

## 134

## ԻՆՔՆՍԱԻՍՆ ՊԱՐՈՆ ՄԸ

Տիկին Մ . . . 'ի դուր ջանացեր էր համոզել իւր  
երիտասարդ որդին, մերժելու համար այն  
օրիւրդը, որուն սիրահարեալ էր, ղի օրիորդը

Թէեւ դէմքով գեղեցիկ, բայց բնաւ որու թեամբը  
անասանելի՝ տգեղ մ'էր: Տիկին Մ... բարեկամներ-  
ու միջոցաւ ալ վերջին ճիգ մը ըրեր էր իւր գաւա-  
կը յորդորելու, բայց նա ամենեին ուշ չը դնե-  
լով, և «կնոջս հետ ոչ թէ մայրս, այլ ես պիտի  
պսակուիմ», ըսելով, կիւրակէ օրը կ'ամուսնանայ  
նոյն օրիորդին հետ:

Հարսը՝ որ արդէն ինչպէս պարոնէն իմացած էր  
կեսրոջն իրմէ չ'ախարժիլը, փոխանակ անոր սիր-  
տը շահելու համար հլու թեամբ վարուելու, հետե-  
ւալ օրէն կ'սկսի իւր օրինակը ցուցնել:

Երկուշաբթի առաւօտ տիկին Մ... իւր խու-  
ցին մէջ կը սպասէ որ հարսը վար իջնէ և ձեռ-  
քը պագնէ, հարսն ալ իւր խուցին մէջ կ'սպասէ  
որ կեսուրը իրեն ոտքը երթայ՝ բարի լոյս ըսե-  
լով ձեռքը պագնէ, այսպէս երկուքն ալ սենեակ-  
ներէն դուրս չեն ելլեր մինչև երեկոյ, և անշուշտ  
անօթի պիտի մնային, եթէ առժամանակեայ ըս-  
պասուհին երկուքին կերակուրը դատ դատ չը  
տաներ:

Երիտասարդը իրիկուն ան վերադարձին ուղղա-  
կի մօրը սենեակը կ'երթայ, ուր տեսնել կը կարծէ  
իւր սիրեցեալը. բայց մայրն առանձինն դտնելուն՝  
կը հարցնէ,

— Մայրի՛կ, Մ... հանրմը ո՞ւր է,

— Մինչեւ իրիկուն երեսը ո՞վ տեսաւ քի՛

— Մինչեւ իրիկուն սենեակէն դուրս չ'ելա՞ւ:

— Հապա ի՞նչ դիտցար, հոս նստողը մա՞րդ է

մի ի՞նչ է, հարցնող փնտռող չը կայ :

— Որքեմն հիւանդ ըլլալու է, — ըսելով՝ կ'ա-  
ճապարէ կնոջը քով երթալ :

— Սիրո՛ւնս, թռչնի՛կս, ի՞նչ ունիս, արդեօք  
հիւանդ ես :

— Ինչո՞ւ հիւանդ պիտի ըլլամ, իշթէ ասանկ  
պատն էրէսիս նստեր եմ :

— Ինչո՞ւ վար չես իջներ, հո՛գիտ,

— Ինձի մարդու տեղ տրին տէ պէրան մը  
հրամմէ ըսի՞ն,

— Բայց դուն օտարակա՞ն ես որ հրամմէ ը-  
սեն, տունին հանրմը արթըխ դո՛ւն ես,

— Ան քի ատանկ է նէ՛ տունին մէջ իմ ըսա-  
ծս պիտի ըլլայ :

— Դուն ի՞նչ ըսիր տէ մենք չէ՛ ըրինք, խու-  
շի՛կս,

— Մարդ մէյ մը վեր չելաւ տէ, ի՞նչտոր ես,  
բան մը կուղես մը պիլէ չըսաւ :

— Ան ալ քեզի սպասեր է որ վար իջնաս :

— Զայէր անոր օտկը պիտի երթայի :

— Աղէկ ամա՛ ան վարը դուն վերը, խուլ ու  
մունջ պիտի նստի՞ք մինչեւ իրիկուն :

— Ի՞նչ ընեմ, կլոխս կտրեն նէ՛ ես անոր օտ-  
քը չեմ երթար, ասլը առաջուրնէ իմ հետս գրթ է :

Խելացի պարոնը կնոջը այս խօսքին իրաւունք  
տալով՝ մօրը քով կը դառնայ :

— Մայրի՛կ, հայտէ հարսին քովը երթանք :

— Զայէր ես անոր օտքը պիտի երթայի :

— Էյ նա՞սըլ ընենք, ան վերը նստի դուն վա-  
րը նստիս, ասանկ բան կըլլա՞յ.

— Թո՛ղ ան վար գայ, վայլու մը ի՞նչո՞ր է,  
ես երլըխճի՞ եմ:

— Ոտքդ պագնեմ, մայրիկ, քալէ քի չարը խա-  
փանի:

— Հա՛հ, պուլտուն քի չարը պիտի խափանի,  
տահա անիկայ քեզի նայէ ինչե՛ր պիտի ընէ:

— Ըսել է որ քու չուզածդ ըլլալուն համար՝  
մախտուս կ'ընես կոր:

— Ես ի՞նչ ըրած ունիմ, քանի մը հողիի հար-  
ցուր քի մե՞նծը պզտիկին օտքը կերթայ մի պըզ-  
տիկը մեծին:

Պարոնը նորէն կնկանը քով կերթայ:

— Անուշիկս, խուշիկս. սա ինձի կը սիրես նէ...

— Նաֆիլէ մ'ըսեր, աշխարհք մէկդի կայ նէ՝  
ես անոր օտքը չեմ երթար:

— Հայտէ խուշիկս, խաթրս մի կոտրեր, քու-  
կին ալ մայրդ է,

— Մար ըլլողը մէյ մը կուգայ տէ՛ հալ խաթ-  
ըր կը հարցունէ,

— Իշթէ ան ալ կը պէքիլէ քի՛ առաջ դուն  
իրեն օտքը երթաս,

— Միսերս կտրես նէ՛ չեմ երթար:

— Էյ թամամ, ասոր սօնը ի՞նչ պիտի ըլլայ:

— Սօնը՝ դատ տուն տեղ ըլլանք նէ՛ կռահաթ-  
նանք,

— Վէսսէլամ . . . բայց ես կարողութիւն ունիմ  
զատ տուն տեղ ըլլալու :

— Թող մարդ զատուի :

— Տունը մօրս է , կրնամ դուրս ընել :

— Ի՞նչ ընեմ , չէ նէ թող չի կարգուէրիր :

..

Շաբաթ մը ետքը տիկին Մ . . . իւր տան մէկ  
սենեակը քաշուելով , մնացած 3 սենեկաց վարձքով  
վը կ'ապրէր մինչդեռ ինքնահաւան պարոնը ուրիշ  
տան մը մեջ սենեակ մը վարձեր էր , ուր չէր կըր-  
նար դարձեալ հանդստութիւն վայելել՝ կնոջ խեռ  
րնաւորութենէն , բայց իւր անտանելի վիճակին  
համար չէր յանդգներ մէկու մը տրտնջալ , ան-  
շուշտ ալ եւս խելքը տուն կանչած , յիշելով թէ՛

«Անխելք գլխու ձեռքէն

«Խեղճ ոտքերն ինչե՛ր կը քաշեն» :

Սակայն շատ ուշ էր :

— 0 —

135

ԲԺԻՇԿ ԵՒ ՀԻՒԱՆԴԱՊԱՀ

Գաղիոյ հիւանդանոցներէն մէկուն Ա . բժիշկը  
առաւօտ մը կուգայ հիւանդապահին կը հարցնէ ,

— Քանի՞ մեռեալ ունինք այսօր :

— Ինը ,



— Ի՞նչպէս . . . ես կը կարծէի թէ տասը պիտի ըլլար :

— Իրաւունք ունիք տէր իմ, բայց հիւանդներէն մէկը տուած դեղերնիդ չ'առաւ :

— 0 —

## 136

## ՃԱՇԱՐԱՆԻ ՄԷՋ

Յաճախորդ մը բարկութեամբ կը ձայնէ ,

— Կա՛րսօն ,

— Ի՞նչ կը հրամայէք , տէր իմ ,

— Սա բերած պանիրդ ամենեւին համ հոտ չունի , աս ասանկ ի՞նչ եմ , կըսէ .

— Տասը բարայի պանիրը ի՞նչ կուղէք որ ըսէ . դեմերնիդ կեցած՝ ատենախօսութի՞ւն պիտի ընէ :

— 0 —

## 137

## ԱՅՐ ԵՒ ԿԻՆ

Այբը , շուկայէն վերադարձին . — Բարի երեկոյ , տի՛կին , կը յուսամ թէ բարկութիւննիդ անցաւ , եւ այս երեկոյ հանգիստ պիտի ընենք . շիտակը երէկ իրիկուն զիս չափէ աւելի բարկացուցիք ,

— Աստուած իմ , ե՞ս ,

— Այո՛, դուն. միթէ մուցա՞ր, մազ մնաց որ  
դիս պիտի խենդեցնէիր.

— Ա՛հ, ի՞նչ գեղեցիկ առիթ մ'է եղեր . . .  
խելացի մը կ'առնէի :

— 0 —

138

### ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԸ ՕԺԻՏԸ

Փաստարան մը իւր աղջիկը ամուսնացուցած  
էր երիտասարդ փաստարանի մը հետ, և իբր դը-  
րամօժիտ՝ դատ մը յանձնած էր նմա, զոր եթէ  
շահէր՝ 20,000 ֆրանք պիտի ստանար :

Ամուսնանալնէն գրեթէ ամիս մը վերջը, իրի-  
կուն մը, մինչդեռ հայր եւ աղջիկ փեսին ուշա-  
նալուն վրայ մտատանջութեան մէջ էին, ահա փե-  
սայն ուրախութեամբ վերադարձաւ և ոսկւով լի  
քսակ մը սեղանին վրայ նետելով՝ գոչեց .

— Դատը շահեցայ, հա՛յրիկ . և կը դարմանամ  
որ այդչափ դիւրիւն դատ մը ի՞նչպէս մինչև հի-  
մա դուք չէիք կրցեր շահած :

Եւ մինչդեռ կիներ նորա վզին փարած դայն  
ուրախութեամբ կը համբուրեր ,

— Ո՛ տխմար, պուաց ծերունի փաստարա-  
նը, միթէ ես քեզի չափ խելք չունէի՞ մինչև հի-  
մա այդ դատով վաստկելու . ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳ ՏԱՐԻ  
այդ դատով ապրած եմ, դուն ի՞նչ խելքով եր-  
կու օրուան մէջ լմնացիր . մե՛ղք, մե՛ղք . . .

— 0 —

Հ. Լ.

## 139

## ՏՕՔԹԷՕՐԻՆ ՅԱՃԱԽՈՐԴՆԵՐԸ

— Պարոն , դուն անմիտ մ' ես :

— Դուն ալ տխմարին մէկն ես :

Այսպիսի նախատիքներ կը տեղային իրարու երկու պարոններ , Բարիզի նշանաւոր սրճարաններէն միոյն մէջ . և ցաւալին այն եղաւ որ , այս բանակաւուոյն յաջորդեցին երկու շառաչածայն ապտակներ , որոց արձագանգը տասը վայրկեանէն հազիւ կ'անհետանայ ականջներէ :

— Պարոն , պէտք է դիտնաք թէ այսպիսի նախատինքի մը չեմ կրնար համբերել .

— Նոյնպէս և ես , պարոն .

— Ահաւասիկ այցետոմս .

— Ահաւասիկ իմս ալ :

— Իմ վկայներս վաղն առաւօտ քու տունդ պիտի գան դքեղ գտնեն :

— Այս իրիկուընէ անոնց պիտի սպասեմ :

Սրճարանին մէջ գտնուողք , որ բանակաւուով սկսող եւ կուփամարտով վերջացող այս վէճին հանդիսատես եղած էին , վերջապէս կը յաջողին դանոնք իրարմէ բաժնել : Երկու ախոյեանք իրենց այցետոմսերը փոխանակելէ և մենամարտի որոշումը տալէ ետքը , իւրաքանչիւրն իւր տունը կը մեկնի :

Մէկ ժամ ետքը Թրօնչէ փողոցի տան մը գետնայարկին մէջ կը գտնենք երիտասարդ և եռանդուն պարոն Ս. քիլլէս. — Ս. քիլլէս Հերակլեսեան, եթէ կ'ուզէք — , որ իւր երկու բարեկամացը հետ կը խորհրդակցէր: Սա բարեկամացը յորդորներուն ականջ չը կախելով, պիտի մենամարտի՜մ, կը գոչէր եւ ուժգին քայլերով սենեկին լայնքն ու երկայնքը կը չափէր:

— Ս. յո՛, պիտի մենամարտիմ, կ'ըսէր, հազար անգամ կ'ուզեմ մեռնիլ, քան թէ ալդպիտի նախատինքի մը համբերել:

— Հը՛, հազար անգամ, ըսաւ բարեկամաց մին. բայց պէտք է գիտնալ որ մարդ մէկ անգամ միայն կը մեռնի:

Պ. Ս. քիլլէս պարապ տեղը կ'եռար. այս խօսքին ճշմարտութիւն մ'ըլլալը կը խոստովանի ինքնին. քանի որ մարդ միայն մէկ անգամ կը մեռնի, ի՞նչ հարկ կար մենամարտի մը մէջ ինքզինքը ըսպաննել տալու վտանգին մէջ ինչնիլ: Սակայն իր գոռոզութիւնը չը ներեր որ իւր բարեկամաց յորդորանաց շուտով համոզուի. ուստի իւր յախուռըն դիրքը պահելով հանդերձ, իւր խօսքին այնպիսի դարձուածք մը կուտայ, որ յայտնի կը ցուցնէ թէ, հաշտութեան ճամբայէն շատ հեռու չէ:

— Ս. յդ անպիտանը պէտք է ներողութիւն խնդրէ ինձմէ հանդիսաւոր կերպիւ, ապա թէ ոչ . . .

— Խիստ բարի, ըսաւ վկայից մին, իւր ընկերոջը հետ նշանակալից ակնարկ մը փոխանակելով:

— Վստահ եղիր մեզ, թէ այս դործը պատուաւոր կերպիւ պիտի կարդադրենք, յարեց միւսը... վաղն առաւօտ...

— Այո՛, վաղն առաւօտ կանուխ պիտի երթանք, բայց իւր այցեւորման տեսնելու ենք:

Պարոնը, իր հակառակորդէն առած այցեւորման խօսակցին տուաւ որ բարձրաձայն կարդաց:

**ՏՕՔԹԷՕՌՒ ՖԻՄԻՇՕՆ**  
**ՖԻԼԱՏԷԼՖԻՍՅԻ ՀՍՄԱԼՈՍՐԱՆԷՆ**  
**416, Փողոց Նուվէլ — Հօտրիէթ**  
Խորհրդակցութիւնք առաւօտեան Ժ. 10էն մինչեւ կէս օր

— Օ՛, բժիշկ մ'է եղեր... լաւ. խորհրդակցութեան ժամուն կ'երթանք:

— Եւ քու պատուոյդ կատարեալ գոհացում մը պիտի ստանամք:

— Ձեր վրայ կատարեալ վստահութիւն ունիմ բարեկամք, ուստի այս գիշերը հանդիստ պիտի կրնամ անցնել:

Յաջորդ օրը, տօքթէօրին տան բակը կը մտնէին երկու վկայք, որք վերէն 'ի վար կոճկուած եւ սեւ զգեստներ հագած էին: Փառաւոր հագուած սպասաւոր մը գլխաւորեց զիրենք:

— Տօքթէօս Ֆիւմիշօնը հո՞ս է .

— Այո՛ , պարոններ .

Եւ երբ երկու վկայք դէպ 'ի սանդուղ կը յառաջանային . սպասաւորը ճամբանին կտրելով՝ — Ներեցէք տեարք , յարեց , իւրաքանչիւրդ տասնական ֆրանք պիտի վճարէք :

— Ի՛նչպէս , տասը ֆրանք . . . բայց մենք ինքզինքնիս նայել տալու համար չեկանք հոս :

— Ձեր այդ առարկութիւնը անօգուտ է , տեարք , իւրաքանչիւրդ տասնական ֆրանք պիտի տաք , երկուքիդ համար մէկ նաբօլէոն :

Երկու բարեկամք տեսնելով որ առանց վճարելու չպիտի կարենան տօքթէօրը տեսնել , եւ չուզելով պարասպ ետ դառնալ , միանգամայն իրենց յանձնուած փափուկ պաշտօնը բակին մէջ կատարելու անկարելիութիւնը դուշակելով՝ ըստիպուեցան 20 ֆրանք համրել :

Յայնժամ սպասաւորը խորին յարգանք մատուցանելով անոնց , թիւ մը կուտայ եւ կը հրամայէ սալոն մը՝ ուր արդէն վեց պարոններ , ամենքն ալ մաքուր հագուած , ամենքն ալ հաւասարապէս խոժոռադէմ , իրենց կարգին կը սպասէին :

— Չարմանալի չէ՞ , ըսաւ վկայից մին իւր ընկերոջը , այս բոլոր յաճախորդները ուրտէնկօթ հագնող պարոններ են . կերևայ թէ այս տօքթէօս Ֆիւմիշօնը էրիկ մարդոց համար մասնազէտ մ'է :

— Ճշմարիտ է , պատասխանեց ընկերը , բայց

պէտք չէ զարմանալ, քանի որ այնչափ ինքնակոչ բժիշկներ կան կանանց համար:

Այս փափսուքը կը լսուի ներկայ վեց պարոններէն որք խոժոռ ակնաբկներ կը նետէին նորեկաց վրայ:

— Ի՛նչ տխուր երեւոյթ մը ունի այս տունը, լուռ թիւնն ու անշարժութիւնը պարտաւորիչ է հոս: Կարծես թէ տօքթ. Ֆիւմիշօնի յաճախորդները կանխաւ իրենց թաղմանը ներկայ կը գլուխուին:

Եւ իրօք բնաւ աղմուկ մը, ձայն մը, շշուկ մը չէր լսուէր: Ժամանակ ժամանակ վարագոյր մը վեր կ'առնուէր եւ սալօնին հետ հաղորդակցութիւն ունեցող դուռ մը բացուելով, թիւ մը կը կանչուէր. այն ատեն ամեն մարդ իր թիւը կը նայէր եւ երկու պարոններ տօքթէօրին սենեակը կը մտնէին: Կէս ժամ անցնելէ ետքը ուրիշ թիւ մը կը կանչուի եւ երկու պարոններ եւս կաներեւու թանան. որովհետեւ, զարմանալի՛ բան, տօքթէօրին յաճախորդները զոյգ զոյգ կը մտնեն ու կը մեկնին:

Վերջապէս կարգը կուգայ մեր երկու պարոններուն. ուստի տօքթէօրին խցիկը կը մտնեն եւ իրենց գալուն պատճառն ու նստատակը կը պարզեն:

Երկու երեք խօսքով խնդիրը կը կարգ աղբուի:

Տօքթ. Ֆիւմիչօն, որ Ֆիլատէլֆիայի համալսարանէն ելած է, իւր գեղեցիկ ձեռքով եւ խիստ լաւ կարդացուող գրովը կը հաւանի երկու բարեկամաց ուղածէն ալ աւելի ներողութիւն խնդրող գրութիւն մը յանձնել:

Երկու վկայք, իրենց պաշտօնին այսպիսի յաջող եւ խաղաղ ելք մ'ունենալուն վրայ խիստ գոհ մնացած՝ կը մեկնին, կարծելով թէ մեծ ծանրութիւն մը իրենց վրայէն վերցած էր, առանց հաշուելու այն քսան ֆրանքներուն ծանրութիւնը, զոր տօքթէօրին սպասաւորին վճարել ստիպուեր էին:

••

Այս միջոցին տօքթ. Ֆիւմիչօն, իւր անտուկին հաշիւը նայելով կ'զբաղի, եւ կըսէ ինքն իրեն.

— Երէկ իրիկուան հաշուեցոյցը. դանադան դքսարաններու և սրճարաններու մէջ ութ հատ առաւել կամ նուազ բուռն վիճարանութիւններ, որոց հետեւանօք այսօր ընդունեցայ 16 վկայներու այցելագիրնը. իւրաքանչիւրը 10 ալան ֆրանքէն՝ համագումար 160 ֆրանք:

(Թարգմ.)

Ա. Կ.



## 140

## ԾԱՌԱՅ ՄԸ

Երեկոյթի մը մէջ տան տիրուհին կը հրամայէ իւր սպասաւորին՝ հրաւիրեալներուն օջառակ հրամցնել: Ծառայն անմիջապէս այս հրամանը ի գործ կը դնէ. սակայն դարմանօք կը տեսնուի որ բերած ափսէին մէջ 6 լեցուն եւ 4 ալ պարապ դաւաթներ կան. ուստի ամեն ոք, մանաւանդ տիրուհին դարմանօք կը հարցնէ թէ՛ «առ ի՞նչ կը ծառայեն այդ պարապ դաւաթներն»: որոյ ի պատասխանի չարածնին կ'ըսէ. «Ատոնք ալ այն հրաւիրելոյ համար են, որ «չնորհակալ եմ. մէրսի. կամ՝ ա՛յւսա կը ցաւի» ըսելով բան մը խմել չ'են ուզեր: Ի՛նչ հարկ անտեղի հողնու-թեան...»:

— 0 —

## 141

## ՇՈՂՈՔՈՐԹ ՄԸ

Տիկին մը, հովանոցավաճառի մը խանութը երթալով, հովանոց մը կ'ուզէ. դնել, խանութպանը, որ շատախօս եւ թեթեւսոյլիկին մէկն էր, շատ մը հովանոցներ կը բերէ սեղանին վրայ կը դնէ, բայց աճապարանքէն՝ տիկնոջ հետը բերած հովանոցը (որ սեղանին վրայ դրեր էր) ձեռք առած՝ կ'սկսի շողոքորթել.

— Հաւատացէ՛ք, տիկին, թէ տակաւին չը գործածեցիք այսպիսի գեղեցիկ հովանոց մը, և

պարծենալով կ'ըսեմ թէ՛ ասոր նմանը տեղ մը չպիտի կրնաք գտնել . թէ գոյնը գեղեցիկ եւ թէ կտաւն սքանչելի՛ է . տալիք դրամնիդ հետերնիդ պիտի առնէք տանիք . ուստի ջերմապէս կ'առաջարկեմ ձեզ , որ այս ընտիր հովանոցը գնէք :

Տիկինը չկրնալով ինքզինքը բռնել , կ'սկսի բարձրաձայն խնդալ :

— Թերեւս ըսածներուս չէք հաւատար , տիկին , եւ կը խնդաք , բայց հարցուցէք անգամ մը ուրիշ խանութպաններու թէ . . .

— Գիտեմ , պարոն , գիտեմ , գոչեց տիկինը չը կրնալով իւր խնդուքն արդիւլել , գիտեմ թէ ոչ գոյնը նետած է և ոչ ալ հինցած , ըստ որում բաւական ժամանակէ ի վեր կը գործածէի . . .

Այս յայտարարութեան վրայ՝ շողոքորթին բերանը բաց կը մնայ :

— 0 —

142

### ՅԱՐՄԱՐ ՊԱՏԱՍԻՍԱՆ ՄԸ

Չմեռուան մրրկայոյդ օր մը՝ մարդ մը , որ կըրկնոցը վերէն ի վար կոճկած , ձեռնոցներ դրած եւ վիզը շալ մը բաժտած էր , սաստիկաշունչ ցրտէն սարսուալով մեծ պողոտայէ մը կ'անցնէր , դիմացէն եկող մարդու մը « Ժամը քանի՞ն է , » հարցմանն ի պատասխանի , — Ատոր պատասխանը Յունիսին կը տրուի , — ըսաւ եւ անցաւ :

— 0 —

## 143

## ՇԱՀԵԿԱՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ

ԿԱՄ

«ԱՆՈՒՆՈՎԸ ԱՊՐԻ, ԽԵՐԸ ՏԵՍՆԱՒ»

ԳԻՆ 600 ԴԻՆԵԿԻՆ

Տան մը մէջ .

— Տիրատուը աղա, գիտե՞ս եա, էրկու շաբաթէն Դաւիթ մարգարէ է . Մարգարիկիս ալ անունն է .

— Աստուած շնորհքովը մեծցնէ, անունովը ապրի, խերը տեսնանք .

— Տահա վախիթ ունինք ամա՛ ես հիմակուքնէ պէտք ըլլալիքները ըսեմ քի, կամաց կամաց կըրես, չի նեղուիս .

— Ի՞նչ պիտի կրեմ .

— Աստուած պակաս չընէ՛ էրէյի էկող կացող պիտի ունենանք . 2 հատ աղած խավունի կ'ուզէնք, 4 օխա ալ շէքէր . 2 պէռղամօթ, թաղէ ըլլայ . շէվիրմէյի համար ալ կէս օխա խայմախով 3 օխա շէքէր . օխա ու կէս իքսիր ամպէրես, օխա մըն ալ ածի պատէմ խուռապիյէսի .

— Շէքէրծիի խանո՞ւթ կը բանանք կոր .

— Մեղա՛յ, դուն ալ, շա՞տ բան մըն է քի, տարին հեղ մը չօճուխիս ճիտիկը ծո՞ւռ պիտի ձրգենք . պէշիկին մէջի չօճուխնուն անունին սուվարէները կընեն կոր . իմ դաւակս ութը լմնցուցինը պիտի մտնայ .

— Ադ սուվարէն չըլլայնէ, ութնին մէջը պիտի մնայ :

— Վույ ճանըմ Տիրատուր աղա, կէնէ շախայի մի' տանիր տէ' իս մտիկ ըրէ :

— Բէք աղէկ, մտիկ կ'ընենք. ասը գիշերն ալ էրկան է :

— Հէմ աս ըսելիքներս քեզի համար հիշ բան մը ըսել չէ :

— Հէլպէթ . . . անանկ ըլլալը դուն գիտնալէդ ետքը, հայտէ նայինք :

— Հինգ օխա Ֆէրիկ էլմասի պիտոր առնես, խոշոր սոյէն. 2 օխա սախըղ պատէմի. օխա մը շամ ֆսարղի. 40 հատ խոշոր բօրթուղալ. 2 օխա քէպապ քէստանէ. 2 օխա իքի խավրուլմիշ սուսամը ինճիր. 2 օխա քէպապ Ֆընտրիս, 5 օխա ալ այվա :

— Մանավին խանութը մեր տունը ախտարմա ընենք՝ լմննայ երթայ :

— Կայնէ, շաշըթմիշ մ'ը'ներ քի ըսեմ. շարթական առնելիք միտէդ զատ, ան շարթուն 5 օխա ալ կովի միս կուզենք :

— Ադ ինչո՞ւ համար :

— Չիտե՞ս կոր. սուվարէներուն մէջ առտուան դէմ սուֆրա կը շտկեն. ան միսը սէօյիւշ պիտի ընենք :

— Անանկ է . . . ընելու է եա' :

— Չորս հատ ալ աղւոր հաւ կուզենք :

- Վա՛յ, թավուգ կէօքսիւ, հէ՞՛, էյ բէք աղ-  
 ւոր պիտի ըլլայ՝
- Չէ՛, չէշիտ ըլլայ տէյի՛ ան հաւն ալ սէօ-  
 յիւշ պիտի հանենք՝
- Սնանկ է նէ՛ Տ հատ ալ հինտի առնենք՝
- Հինտին ի՞նչ պիտի ընեմ՝
- Ութը—տասը հատ ալ բիլիճ՝
- Քա ճա՛նքմ...՝
- Չորս—հինգ հատ ալ օւտէկ՝
- Օտկդ պագնեմ, շախայի մի՛ տանիր՝
- Շախա չեմ ըսեր կոր. չէշիտ ըլլայ տէյի...՝
- Չէ՛, չէ՛, մեզի պէս էսնաֆ մարդոց տահա  
 ատանկ բաներ չի վայլեր. մենք վո՞վ էնք քի՛՝
- Շիտակ է. մենք մեր վայլումը ընենք՝
- Օխա մը բաստրմա. պօլճա սուճուխ. քիչ մը  
 սեւ խավեար. պանիր. աղւոր կանանչ զէյթին,  
 նիգօրինօղ պալըղի, խուլթի սարտէլասի, ապու-  
 տառախօ, ևայլս ևայլս՝
- Պօշ տեղը խօսքը էրկնցնելով ինչո՞ւ սիրտդ  
 կը հատցունես, և այլս և այլս կըսես, շէնք շնորք  
 պախալիէյի խանուլթ մը բաց ըսէ ինծի՝
- Աս տար բանը մեզի պէս ո՞ր էսնաֆին տու-  
 նը չը կանուիր՝
- Շիտակ է, պէն իմ տէյէն պախալին խա-  
 նուլթը պիլէ չի գտնուիր՝
- Դուն շախայի կը տանիս կոր ամա՛ ասոնք  
 բիլթիւն պէք կէն. արթըխ մաստիգա, կինի ու  
 գօնեակին ալ ինչ տար էրթալը տուն կիտես՝

— Ես մէխանէճիութիւն ըրած չունիմ քի կիտ-  
նամ . ան ալ կողմաին կը հարցունենք :

— Հալխուն քով պղտիկ չը մնալու համար պօլ  
մը առնելու է :

— Զուլվալներով առնելու է քի աժան ըլլայ .  
հէմ՝ կաղնդուան ծնունդուան համար առնելիք-  
նիս ալ աս սէպէպով պիրտէնճէ առած կ'ըլլանք :

— Աճապա իրա՞ւ կըսես կոր :

— Տէր օղորմեա , ադ ի՞նչ ըսել է :

— Սանկ բէք կակուղ կակուղ կերթաս կոր ամա  
հիչ ումմիչ չեմ ըներ կոր :

— Դուն անանկ գիտցիր , համալները իրարու  
էտելէ կաննէ կը տեսնաս :

— Մենք պաշխասիին տունը կերթանք կուտենք  
կը խմենք կոր :

— Անանկ է , պէտէհավա հացը ո՞վ գտնայնէ  
չուտեր :

— Ի՞նչ մեղքս պահեմ , իմ կիտցած մարդս էս նէ  
բէք միտքդ տրած էդ շաշմիչ չես ըլլար ամա . . .

— Էհ , ի՞նչ ընենք , ամեն մարդ իր խելքին կը  
հաւնի :

— Քա ճանրմ , հալխուն քով պղտիկ պիտի  
մնանք :

— Ի՞նչ կայ քի պղտիկ մնանք :

— Սա միտքդ տրածդ ինձի ըսես պիտի :

— Կայնէ քի ըսեմ . հիմա ադ ըսածներդ առ-  
նելու համար քիչէն քիչ 5-600 դրչ . կուզէ . մէկ  
դիչերուան մը համար ատ խտար բարան խար-

ճեղէ աղէկ չըլլար քի հէմ սա մուխվախին քի-  
րէմիտը տառձուներ տանք, հէմ ալ ծնունդ էր-  
թէսի քեզի շինելիք Քիստաննիս քիչ մը տասա  
ծանրըկէկ շինենք :

— Ասլը խօսք տուած ես, ան Քիստանը ծը-  
նունդ էրթէսի իլլէ պիտոր շինես քի, անճարա-  
կին քրոջս աղջկանը հարսնիքին էրթամ :

— Փախաթ, սա հիմակու ըսածներդ առնենք  
նէ՛ Քիստանցուին էօրնէկը պիլէ չենք կրնար  
տեսնալ :

— Աէ՛, չէ՛, Քիստաննիս բարան խօսել չըլլար :

— Անանկ է նէ՛ տուննիս մէջն ալ մանավի պա-  
խալի խանութներ բանալ չըլլար : Անտար խալա-  
պալըխը տունս կրնամ ժողուել . . . հէմ կեցիր,  
աղէկ միտքս եկաւ . թամ Քրսանթ մըն է . դի-  
տե՞ս եա, ասլը մուխվախին քիրէմիտը պիտի  
դառձունէինք . Մարգարին անունին երկու օր  
մնացած տիւրկէր մը կը կանչենք, եափուն կը  
դնենք, դուռ դրացիին ալ «խալֆան» ծունը չի  
կոխած՝ աս տունը եարու կուզէ, չէ նէ վար կու-  
գայ, չեմ խառնուիր . » ըսելուն համար վայ նա-  
չար շինել կուտանք կոր կըսենք . ասով կը հաս-  
կընան քի սուվարէ չենք կրնար տալ, տեղերնին  
կը նստին :

— Է՛յ եարուն լմնայ նէ ի՞նչ պիտի ըսես :

— Ան ալ ան ատեն կը մտմտանք : Հա՛, կայնէ,  
կիտե՞ս եա՛, Մարգարին անունը Արչակ ալ է .  
կնքահօրը Աստուած բանն յաջողէ քի էրկու ա-  
նուն տրաւ . մեծ բարկենդանի շարթուն Արչա-

կին անուան է ըսելով, շըլըրթըմ մը կընենք.  
 հէմ ան ատեն աս տար մասրաֆ չենք ըներ. շիւն  
 քի ամենուն տունը ան շարթուն քիչ շատ անու-  
 շեղէն հաւեղէն կտնուելուն, անունովը շըլլայ՝  
 մէկ քանիին աշկը քիչ մը օլսուն կշտացած կ'ըլլայ:

— Զայէք անոնք անօթի բորանց պիտի կային:

— Զէ ամա, սա դուն քու վրադ բայ պիչմիչ  
 ըրէ. մէկուն տունը էրթալիք իրիկուննիս, վրաս  
 պիտի հադուիմ ըսելով սուֆրայէն կէս կուշտ  
 կէս անօթի կելլաս՝ սօլուխնիս հոն կառնենք տէ՛  
 առտուան դէմ բորերնիս աղւորիկ մը կը կշտա-  
 դունենք կոր:

— Էյ պարէ խօսք տամ քի ան ատենը աղւոր  
 սուվարէ մը պիտի տանք:

— Սախըն հա՛, մարդ չե՞մ մի, պէլքի տիյօր ան  
 ատեն կը հիւնդնամ:

— Կէնէ ատանկ մի՞տք մը ունիս:

— Ատ ի՞նչ ըսել է.

— Անցած տարի Զատկին շինելիք Ֆիստանիդ  
 ատենն ալ վրաս կոտրած ութին մը կայ ըսելով,  
 բէք նախսըցեր էիր. հիչ հեադ չէր խօրաթուէր  
 կոր. ամա թթման իրիկունը պիրտէն պիրէ ա-  
 դէկցար:

— Էյ մեռնելու էի քի հիւանդ ըլլալուս հաւ-  
 տայիր:

— Աստուած չընէ ամա, պազի անանկ վար-  
 պետութիւններ կը փախցունես:

— Բէք անայիպ լախուտըներ կընես, Հիմա դուն



վաղը օղջ առողջ ելլելու համար ծառքդ սենէտ մը ունի՞ս :

— Չէ՛ :

— Անանկ է նէ ի՞նչ կըսես կոր : «Մի հոգայք վասն վաղիւն» կըսէ . էյ մենք ասօրուանը ձգեր՝ էրկու ամիս ետքինին վրայ կը մտմտանք կոր :

— Ես քու լեզույիդ կրնամ լեզու օգտեցներ . իմ գիտցած մարդս էս նէ՝ ասանկ մօրտօվինաներով նէ գալ շարթու սուվարէ տալիք ունիս , նէ ալ բարկենդանքին :

— Ատանկ ըլլալը գիտնալէդ ետքը , ի՞նչու պօշ տեղը սիրտդ կը հատցունես . ամօթ չէ եա՛ , ամսուան մը տունիս մասրաֆը տեսնալիք փարաս մէկ գիշերուան մէջ անոր ասոր խուռսախը լեցնելով՝ էրթէսի օրը արբաճի խումրուսիի պէս մըտմտացող թախըմ մը շաշխըններէն չեմ . «Անունովը ապրի , թերը տեսնաք» էրկու կտոր թօսքը 600 դրուշի կը կըլլու՞նի մի . . . անոր հախը կէս թաա թահուէ է , քի ութը տասը դրուշին մէջն է . Ես՝ Աստուած լուսաւորէ հոգուն , տէտէիս սա թօսքէն հիշ դուրս չեմ կրնար էլլար ,

«Թահուէ մը կուտաս էկողին ,

Չես քաշեր շատ հոգնութիւն .»

## 144

## ԳՐԱՎԱՃԱՌ ԵՒ ԹԱՐԳՄԱՆԻՉ

Երիտասարդ պարոն մը, տաղտկացուցիչ վէպ մը թարգմանած ըլլալով, կուզէր զայն տպագրել տալ. բայց որովհետեւ տպագրական ծախսը հոգալու կարողութիւն չունէր, ուստի կ'որոշէ ձեռագիրը գրավաճառի մը ծախել և ամեն իրաւունքէ հրաժարիլ. հետեւաբար գրավաճառի մը կը ներկայանայ:

Գրավաճառը ձեռագիրը թղթատելէ վերջը, քիթն ու բերանը ծռմրտկելով զայն տիրոջը կը վերադարձնէ:

— Հիմայ չէ՞ք ուզեր զայս դնել, կը հարցնէ թարգմանիչը:

— Դժբաղդաբար, ո՛չ:

— Զարմանալի՛ բան, բայց ձեզի համար դժուարութիւն մը չ'կայ. դուք տպարանի ալ տէր էք, եւ կրնաք ասկէ 2000 օրինակ տպագրելով...

— 2000 օրինակ տպագրելով խանութին մէկ անկիւնը դնելը բան մը ըսել չէ, բայց կարդացած գրքերնուն փոխարէնը վճարելը տակաւին մկներուն չկրցանք սովրեցնել. ահա դժուարն հոս է:

## 145

## «ՄԱՍ ՄԱՍ»

Զուարճախօսի մը կռնկաին վրայ քաղձկեղ (շիրի-  
բէնչէ) երևան եկած ըլլալով՝ վիրաբուժական գոր-  
ծողութիւնը կատարելու համար երեք բժիշկներ կը  
կանչուին, որք հիւանդին հաղուստները հանել  
տալէ ետքը կ'սկսին խորհրդակցիլ, Երենցմէ մէկը .  
«Սա Բ. մասը վերցնել պէտք է» կըսէ. միւսը,  
«Նախ եւ առաջ սա մասը կտրենք» կը պնդէ. իսկ  
երրորդը, «Ս.յն մասը ձգենք՝ այս մասը հանենք»  
ըսելով երբ կը պատրաստուէր փաստարանել, դու-  
արճախօսը, որուն համբերութիւնը հատած էր,  
գլուխը վեր առնելով,

— Ս'ղբար, կռնակիս վրայ ինկեր ի՞նչ կընէք .  
«մաս մաս» ըսելով, Թափառական հրեային պատ-  
մութիւնը պիտի գրէք — , կը գոչէ .

— 0 —

## 146

## ԿԱՄԱԻ ՏԻՄԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Մարդ մը անուշադրութեամբ շողեկառքին  
գծին վրայէն անցնելուն, ճամբաներու վրայ հըս-  
կող պահապանի մը կողմանէ ձերբակալուելով՝ կը  
ներկայացուի մօտակայ կայարանին Ս. պաշտօնէին ,  
Բ

որ ըստ կանոնագրի՝ 5 ֆրանք տուգանք կը պահանջէ : Այն վայրկեանին ուրիշ պահանջորդ մ'ալ նոյն պաշտօնէին կը ներկայացնէ վայտահար մը՝ որուն էջը երկաթուղւոյն վրայէն անցած ըլլալուն համար 1 ֆրանք պիտի տուժէր :

Հինգ ֆրանք տուգանաց դատապարտողը դարմանօք կը հարցնէ թէ՛ ի՞նչու այդչափ մեծ տարբերութիւն մը կայ իւր եւ միւսին վճարելիքին մէջ :

Առ այս պաշտօնեայն կը պատասխանէ .

— Ըստ կանոնագրի ընկերութեանս, 5 ֆրանք կ'առնուի գծին վրայէն անցնող մարդէ մը, իսկ 1 ֆրանքէ աւելի չ'առնուիր միեւնոյն յանցանքին մէջ գտնուող էջէ մը :

— Ուրեմն, կը գոչէ մարդը, անմիջապէս գըրպանէն ֆրանք մը հանելով, գուք սըւիկայ առէ՛ք, մնացածն ալ ի՛նչ կը սեպէք նէ՛ սէպեցէք . . .

— 0 —

147

### ՄԻԱԿԱՆԻ ՏՐԱՄԱՐԱՆ ՄԸ

Միականի մը գրաւ դրած էր սրատեսի մը հետ, առարկելով թէ ինքն անկէ աւելի շատ կը տեսնէր, մինչդեռ սրատեսը հակառակը կը պնդէր : Երբ գրաւը ընդունեցաւ, «Ես շահեցայ, գոչեց

միականին, որովհետեւ ես քու երկու աչքդ կը տեսնեմ, մինչդեռ դու միայն իմ մէկ աչքս կը տեսնես»

— 0 —

148

### ԵՐԿՈՒ ՄՏԵՐԻՄԻ

— Դէմքերուն մէջ ամենէն աւելի ո՞ր դէմքը կը սիրէք .

— Ինձի փոխ դրամ տալիք մարդուն դէմքը :

— Եւ ո՞ր դէմքը չէք սիրեր ,

— Այն անձին 15 օրէն ետքի դէմքը :

— 0 —

149

### ԶԻՆՉ ՍԵՐՄԱՆԵՍ, ԶԱՅՆ ՀՆՉԵՍ

Ա . . . անուն երաժշտութեան դասատու մը ,  
 Յ . . . փողոցը տան մը մէջ սենեակ մը վարձած  
 կը բնակէր . այս տան դուռը ըստ ընկալեալ սօ-  
 վորութեան՝ գիշերուան ժամը երկուքին կը գոց-  
 ուէր : Իրիկուն մը դասատուն սովորականէն ուշ  
 վերադառնալուն , փողոցի դուռը գոց կը գտնէ .  
 ուստի կ'սկսի դրան դանգալը հնչեցնել այնպիսի  
 ուժգին՝ որով դռնապանը ճարահատեալ անկողնէն  
 կ'ելնէ ու կուգայ դրանը ետեւէն իմացնել թէ ,  
 այն ժամանակը ոչ ոքի կրնայ դուռը բանալ :

Պ. Ա. . . կ'սկսի աղաչել, բայց տեսնելով որ դռնապանը անդրդուելի կը մնայ իւր յայտարարութեան մէջ, 5 ֆրանքնոց մը կը սահեցնէ դրանք տակէն. անմիջապէս օրինապէս դռնապանը կը կահուղնայ եւ դուռը բանալովն հանդերձ, իւր շնորհակալիքն յայտնելու բառ մը չկրնար գտնել:

Պ. Ա. . . հազիւ թէ ոտքը վերնայարկը տանող սանդուղին առաջին աստիճանին վրայ կը դնէ, յանկարծ միտքը եկածի պէս կը դոչէ.

— Ներեցէ՛ք տէր դռնապան, հովանոցս դուրսը մոռցայ, դրան զանգակին կոճակին վրայ կախեցի, կը խնդրեմ որ ներս առնէք:

Մինչդեռ դռնապանը «ամենայն հաճութեամբ» ըսելով, հովանոցը առնելու համար փողոց կ'ելնէ, երաժիշտը կը վազէ դուռը կը դոցէ. Դռնապանը անկողնէն ելած, կիսովին մերկ ըլլալուն ցրտէն կ'սկսի դողալ, կ'զգայ թէ դուռը բանալ տալու համար աղաչելու կարգը իրեն եկած էր. ուստի կըսէ.

— Սիրելի պարոնս, կաղաչեմ որ դուռը բանաք.

— Էաւ, կը պատասխանէ երաժիշտը, բայց այս ժամանակ դուռը բանալ տալու համար պարտիք միևնոյն մուտքը վճարել, յիշելով այն ճշմարտութիւնը թէ «զինչ սերմանես, զայն հնձես»:

Դռնապանը ամենայն հլու թեամբ կը խոնարհի այս պատգամին եւ 5 ֆրանքը տիրոջը կը վերադարձնէ:

150

## ՄԵՂԱՅ

Վեց ամսէ 'ի վեր ամուսնացած էին : Քլէոի ամուսինը Ատրիէն, թէև երիտասարդ, բայց համբաւաւոր դժագրիչ մ'էր, եւ վերջին արուեստահանդիտին մէջ փայլուն յաջողութիւն մ'էր ունեցած : Իսկ կինը, դեռ շատ փոքրիկ էր, գեղեցիկ և շնորհալից, այն երջանիկ դիմագծութեամբ որ անսպառ գուարթութիւն կը խոստանայ ընտանեկան վառարանին :

Ամուսնացած էին սիրոյ դօրութեամբ, ոչ թէ հարստութեան համար, եւ իրենք իրենց մէջ կը գտնէին այն քաղցր փիլիսոփայութիւնը՝ որ դիտէ շափ դնել փառասիրութեան եւ երջանկութեան բոլոր տարերաց :

Գարնան վերջերը փութացին երթալ փնտռել չէզոքացեալ վայր մը, Պալթօնի եղերց անձանօթ մէկ անկիւնը, ուր ապահով էին այլևս անխռով ապրիլ, հեռո՛ւ քաղքին ժխորէն : Հոն երկուքէն դատ ոչ ոք կար. ամեն օր ամայի ծովափանց վըրայ սիրուն շրջագայութիւններ կընէին, նոյնպէս խոպան եւ անմարդաբնակ ժայռերուն վրայ՝ ուր աներկիւղ կելլէին ու կիջնէին : Երբ Ատրիէն իւր ճաշակին յարմար տեղ մը գտնէր, անմիջապէս կ'ուրուագծէր, մինչդեռ Քլէո, ժպիտ 'ի շքթունս, ամուսնոյն ուսին կըթնած, մատիտին և վրձինին շարժմունքը կը դիտէր հիացմամբ :

Ահա այսպէս, երջանկութիւնը չը բաժնուեցաւ իրենցմէ մինչեւ այն օրն՝ յորում արուեստ-

տաղէտը իւր վստահութիւնը վերցուց կնոջը վերայէն : Ամեն օր թղթաբերը լրագիր կը բերէր : Ատրիէն դիտեց որ Քլէռ միշտ պատրուակ մը կը փնտռէ տուն երթալու՝ թղթաբերին անցած պահուն :

Իրենց ընտանիքը սիրող ամուսինները շափազանց կասկածոտ կըլլան :

Օր մը Ատրիէն իւր սիրած ժայռերէն միտին վրայ նստած կը ծխէր, ուրկէ կը վայելէր բնութեան շքեղութիւնները, երբ յանկարծ հեռուէն նշմարեց թղթաբերին կապոյտ տարազը : Քլէռ ընդ առաջ գնաց այն մարդուն եւ ստացաւ նամակ մը, որուն կնիքը խղեց անմիջապէս : Ձէր կարծեր թէ մէկը կը տեսնէ զինքը, մինչդեռ Ատրիէն ժայռին ետեւը պահուրտած՝ զայն կը դիտէր, և այնչափ հեռաւորութենէն կըրցաւ որոշել թէ՛ կինը մեծ ուրախութիւն մ'զգաց այն նամակին ընթերցմամբը եւ սիրուն ժպիտ մը նորա վարդ այտերը փայլեցուց : Քլէռ նամակը կարդալէ եւ լրագիրը աչքէ անցունելէ ետքը ըստ սովորութեան տուն վաղեց : Երբ Ատրիէն ճաշի ժամանակ տուն գնաց, թէ՛ նամակին և թէ՛ լրագրի մասին խօսք մ'իսկ չը բացաւ : Քլէռ սովորականէն աւելի ուրախ էր, եւ կենացը մէջ միայն այն դիշերն էր որ տարօրէնակ ձայնով մը ըսաւ ամուսնոյն,

— Աղէկ միտքս եկաւ, քիչ մնաց որ պիտի մտնայի, այսօր հօրմէս նամակ մը ստացայ, որ կը ծանուցանէր թէ մեր ընտանեաց բարեկամներէն մին՝ ի Պրըթաները ճամբորդութենէ դարձին հոս պիտի այցելէ :

— Շատ մօտէ՞ն կը ճանչնաք այդ բարեկամըսած անձերնիդ, հարցուց Ատրիէն,

— Այո՛, շատ մօտէն, խիստ վայելուչ երիտա-



սարդ մ'է, եւ ապահով եմ թէ անոր հետ յարաբերութիւն հաստատելնէդ ուրախ պիտի ըլլաք:

— Այդ մասին կը սխալիս, ես նախամեծար կը համարէի՝ եթէ չի գար մեր առանձնութիւնը խանդարել... Հայրդ ուրիշ բան մը չե՞ գրած:

— Ո՛չ, երկտողիւ մը իմացուցած է. ահա այսչափ:

Քլէռ նամակը փնտռեց, ցոյց տալու համար, բայց դժբաղդարար չի գտաւ:

— Լրագիրը ի՞նչ եղաւ, հարցուց արուեստագէտը:

Աւագ, լրագիրն ալ կորսուած էր:

Առաջին ստախօսութիւնն էր որ կիներ կընէր իւր ամուսնոյն: Ատրիէն շատ ցաւ զգաց. ինքն արուեստագէտներու յատուկ առոյգ իմացականութիւնն ունէր, որ անձնատուր կըլլան ամբողջովին իրենց տալաւորութեանց:

Քլէռի ըսած երիտասարդը, որուն անունը Յէլիքս էր, յաջորդ օրը պիտի գար. կիներ արաքոյ կարգի փութաշանութիւն մը կը ցուցնէր՝ հիւրը ըստ պատշաճի ընդունելու համար. միշտ կ'աշխատէր ամեն բան կարգի դնել, եւ չուժէր ժամանակ մը ամուսնոյն ըսելու թէ՛ գիւղ երթալով ճաշակաւոր ձուկեր գնէ:

Ատրիէն սաստիկ դայրոյթ կը զգար այդ օտարականին դէմ եւ չէր կրնար կեղծել իւր բարկութիւնը: Քլէռ բան մը չէր նշմարեր, կամ լաւ ևս է ըսել չէր ուզեր նշմարել, ու հակառակ իր զգացած տրտմութեան՝ ուրախ զուարթ կ'երևէր:

Հետեւեալ առաւօտ այցելուն ժամանեց. 25 տարեկան երիտասարդ մը, անկեղծ եւ համակրելի դիմօք, մտերմական եւ յանկուցիչ ձեւերով:

Գծադրիչը սիրով հիւրնկալեց զայն, որ ընտանե-  
ցաւ իսկոյն: Բայց պահ մը ետքը Ատրիէնի են-  
թադրութիւնները ատելութեան փոխուեցան, զի  
նշմարեց որ Քլեռ գաղտագողի կը տեսակցէր երի-  
տասարդին հետ, առանց կասկածելու թէ զիրենք  
դիտողներ կը գտնուին, եւ այնպիսի ժպիտներ կը  
փոխանակէին՝ որով պարզապէս կը մասնէին վա-  
ղեմի յարաբերութիւն մը ունենալնին: Երկուքն  
այ առիթ կը վնասուէին առանձին գտնուելու.  
անդամ մը, այն պահուն, ուր ինքզինքնին մինակ  
կը կարծէին, յանկարծ Ատրիէն սենեկին դուռը  
բացաւ և դիտեց թէ խօսակցութիւնն ընդհա-  
տեցին: Անտարակոյս գաղտնիք մը կար որ կը ջա-  
նալին իրմէ ծածկել, եւ թերեւս ամօթալի գաղտ-  
նիք մը:

Նախանձը սաստիկ կերպիւ սկսեր էր Ատրիէնի  
սիրտը կրծել, զի ո՞չ ապաքէն ամենէն մաքուր և  
ամենավճիտ ջրերն շատ դիւրութեամբ կը պղտո-  
րին:

Ատրիէն կը յիշեր իւր ընկերակցաց ակնարկու-  
թիւններն ու ծաղրաբանութիւնները. կը յիշէր  
խարուած ամուսիններու դիւրահաւանութեան  
մասին եղած անհամ կատակները, որով կատա-  
ղութիւնը կը փայլատակէր իւր աչաց մէջ, 'ի մի-  
բան վրէժիւնդրութեան մտածումը հետզհետէ կա-  
ւելնար սրտին մէջ, այլ սակայն, «Համբերութիւ-  
նը կեանք է,» կըսէր մտովի:

Ճաշէն վերջ, Քլեռ նաւակով պտոյտ մը ընելու  
գաղափարն յղացաւ, Յէլիքս սիրով ընդունեց,  
իսկ Ատրիէն անյօժարութիւն ցոյց տուաւ:

Դէպ 'ի ծովեզր յառաջացան : Ատրիէն , որ բոլոր ձկնորսները կը ճանչնար , դնաց անոնցմէ նաւակ մը վարձեց , եւ վերադարձին տեսաւ որ Քլէռ Փէլիքսին հետ ընտանեբար կը տեսնուէր , երեսները կըակներու մէջ էին , աչքերն անսովոր կերպիւ կը փայլէին , և այնպիսի ուրախութեամբ կը ժպտէր՝ որ կարծես իւր դեղեցկութիւնն ու շնորհալի ընթացքը ուրիշի մը վերապահած էր :

Վարձուած նաւակը շատ փոքր էր , բայց օդն հանդարտ էր . անդդալի սիւզ մը հազիւ թէ կը շարժէր վէտ վէտ հայելոյ մը պէս միացած ջուրին մակերևոյթը . ձկնորսք ապահովապէս յայտարարած էին թէ այն օդին ո եւ է վտանգ չէր պատահեր :

Նախ Փէլիքս ուղեց թիավարել , բայց խեղճ իւր անվարժութիւնը խոստովանելով ետ քաշուեցաւ . յայնժամ արուեստագէտը սկսաւ թիավարել և Փէլիքս ալ դեկավարել , որուն քով նստած էր Քլէռ :

Ատրիէն թիավարելու պաշտօնին տակ ընկճեալ , նաւակին սոսկալի մղում մը տալովն հանդերձ , կը ջանար իւր ընկերաց խօսակցութեանը ուկնդիր ըլլալ . բայց անոնք ցած ձայնիւ խօսելնուն , չէր կրնար խօսից իմաստն ըմբռնել :

Ծովեզրէն բաւական բացուած էին , եւ որովհետեւ Ատրիէն հոգներ էր , թիերը թողուց , որով նաւակը իւր ստացած արագութեամբ բաւական տեղ շարունակեց ընթացքը : Զուրը թափանցիկ

յատակու թիւն մ' ունէր . ծովային թռչունք որք  
 օդը ճեղքելով կ'անցնէին . ստուեր մը կը թողէին  
 ջուրին մէջ կատարեալ հաւատարմութեամբ : Ատրի-  
 էն իւր նայուածքը պատահամբ հոն դարձուցած  
 էր . բայց յանկարծ ամալ մը անցաւ իւր աչքին առջև-  
 էն . հեղուկ հայելին իրեն կը ցուցնէր երկու  
 դէմքերու պատկերը , որք փոխադարձաբար կը  
 ժպտէին , ինչպէս նաև երկու ձեռաց պատկերք ,  
 որք իրարու կը մօտենային : Երա՞ղ մ' էր արդեօք .  
 տեսաւ կամ տեսնել կարծեց երկու այտերու իրա-  
 րու դպչիլը... ա՛յ տարակոյս չ'կար թէ յիմարու-  
 թեամբ խարուած էր , եւ առանց դառնալով ա-  
 նոնց նայելու , սկսաւ թիավարել սոսկալի կատա-  
 դու թեամբ : Քլէռ եւ Ֆէլիքս նշմարեցին իւր կա-  
 տաղի դէմքը եւ անողոք ատելութեամբ փայլող  
 աչքերը , սակայն բան մը չըսին :

Նաւակը կը շարունակէր իւր ակասը գծել ա-  
 րագու թեամբ , եւ հոսանք մը նորա ընթացքը կը  
 փութացնէր մղելով դայն ժայռի մը վրայ՝ դոր կը  
 ծածկէր ծովը . այս ժայռին վերի մասը , որ ծովու  
 մակերեւութէն կէս մէթր բարձր էր , ալիքներէն  
 կը ծածկուէր :

Քլէռ փտանդը նշմարելով , — Ատրիէ՛ն , զգու-  
 շացի՛ր , ժայռին տխրի բաղխինք , ըսաւ երկչոտ  
 ձայնիւ մը :

Ատրիէն չի լսելու դարնելով թիավարեց դէպ 'ի  
 ժայռն : Քանի մը վայրկեան կտքը ահռելի շառա-  
 չիւն մը լսուեցաւ , նաւակին գլխու մասը սեւա-

գորչ ժայռերուն երկայնութեանը խրեցաւ, մինչ-  
դեռ ետեի կողմը դէպ'ի անդունդը: Ալիքները  
նաւակին մէջ բացուած ծակերէն ներս մտան,  
որով նաւակը անհետացաւ: Ծովը իւր ծոցին մէջ  
առաւ երեք նաւաբեկեալները, և պահ մը վեր-  
ջը բան մը չ'տեսնուեցաւ ծովուն մակերեւոյթին  
վրայ: Առաջին անգամ արուեստագէտը լողալ ըս-  
կաւ եւ նշմարեց իւր կիներ՝ որ ժայռին հասնե-  
լու համար 'ի դո՛ւր կը մաքառէր ալիքներուն  
դէմ. անշուշտ քանի վայրկեանէն անդունդը կուլ  
պիտի տար դայն:

Ատրիէն տեսնելով նորա դալկահար դէմքը,  
յիշեց անոր հետ անցուցած երջանկութեան ժա-  
մերը. մուցաւ ատելութիւնն ու վրէժխնդրու-  
թիւնը եւ օգնութեան հասնելու համար դէպ'ի  
անոր խոյացաւ. վերջապէս բռնեց դայն, գրկեց  
եւ ժայռին վրայ տարաւ այնպիսի զգուշութեամբ,  
որ դողցես պահ մը առաջ տեսածը մոռնալով՝  
իւր սէրն հարուածող ու է դէպք չէր պատա-  
հած:

Գթասրտութիւնը երբեմն ուրիշ զգացումները  
կը լուեցնէ:

Քանի մը վայրկեանէն Քլէռի խելքը դլուխը  
եկաւ:

— Փա՛ռք Աստուծոյ. ազատեցիր դիս, ըսաւ  
ամուսնոյն. յետոյ Յէլիքսը մտաբերելով «հապա  
անիկայ», աւելցուց անձկանօք,

— Անիկայ, պատասխանեց Ատրիէն ախուր

ձայնիւ , անիկայ լողալ գիտէ , կրնայ ինքզինքը  
ազատել :

Եւ արդարեւ Ֆէլիքս դարմանալի արագու-  
թեամբ շուրջ ճեղքելով կը յառաջանար , մարմնոյն  
կէսը միշտ ծովուն մակերևոյթին վրայ բռնած .  
բայց վերջապէս զգալով որ հոսանքը զինքը պիտի  
առնէ տանի , վերջին ճիգ մ'ըրաւ ժայռին հաս-  
նելու , այլ յանկարծ միտքը փոխեց , ետ դարձաւ ,  
եւ հակառակ կողմը ճամբայ առնել սկսաւ .

— Ի՞նչու դէպ 'ի մեզ չի դար , հարցուց Քլէո  
դարմանահար :

— Ձե՞ս դիտեր , ի՞նչու , պատասխանեց Ատրի-  
էն , վասն զի յանցաւոր մը միշտ իւր դատաւորէն  
կը փախչի ,

Քլէո ասպշութեամբ անոր երեսը նայելով՝

— Անոր դատաւորը , մրմնջեց . ի՞նչ ըսել կուզէք :

— Թո՛ղ քու սիրահարդ հասկնայ թէ այլ եւս  
չեմ հանդուժեր իւր նախատանաց :

Քլէոն դէմքը մոխրագոյն ներկուեցաւ , եւ  
կակաղելով՝

— Այս կերպով կը դատապարտե՞ս զայն . այն-  
պէս չէ՞ . սակայն ես . . . .

— Այո՛ , դու ալ զիս կոյր կարծեցիր , և եթէ  
ասպահով էիր որ անոր հետ փոխանակած գողուանք-  
ներդ իմ աչքերէս կը վրիպին՝ կը սխալէիր . ձեր  
դաւաճանութիւնը ինձմէ ծածկելու համար աւել-  
ի խոհեմաբար շարժելու էիր :

Քլէո ամուսնոյն կասկածի պատճառ տուող

կէտը իսկոյն հասկցաւ .

— Ուրեմն դայն ծովամայն ընելու համար նաւա-  
կը կամա՞ւ ժայռին բաղեցիր :

— Այո՛ . անանկ կը հաշուէի թէ՛ ովկիանոսը  
երեքնիս ալ կուլ կուտայ . բայց զքեզ վտանգի  
մէջ տեսնելով՝ վատութիւնը յանձն չ'առի , ու  
սրտիս զգացմանցը չ'կրցի ընդդիմանալ , որ կը  
հրամայէր փրկել զքեզ :

Քլէռ ամուսնոյն դէմ ո՛չ բարկութիւն եւ ոչ  
յանդիմանութիւն մը զգաց , այլ միայն անհուն  
գթութիւն մը :

— Ո՛հ , ի՛նչ անմտութիւն , մրմնջեց . խեղճ  
բարեկամս , թերեւս խիղճը կը տանջէ զքեզ այս  
պահուս . եթէ ես քու վրադ տարակուսէի՝ մինչև  
այսօր մեռնելո՞ւ էի . ի՞նչու ուրեմն դու ալ նու-  
ազ վստահութիւն ունեցար իմ վրաս . կ'երդնո՞ւ մ  
քեզ Ատրիէն , թէ ինքզինքս անիծել տալու ըն-  
թացքի մը մէջ չ'դռնուեցայ :

Քլէռ ի այս խօսքերուն մէջ այնպիսի անկեղծու-  
թիւն եւ համարձակութիւն մը կը նշմարուէր՝ որ  
անկարելի էր իրմէ այլ ևս տարակուսիլ . իսկ Ատ-  
րիէն յուզուած լինելով՝ դատասպարտութեան  
վճիռն արձակել կը փորձէր :

— Բայց ո՞վ է այդ օտարականը , դոչեց դէմքը  
պուստելով .

— Այդ օտարականը ինձ նման արժանի չէ՛ քու  
ատելի կասկածանացդ . Իու ինքզինքդ պիտի յան-  
դիմանես՝ ասպնջականութեան պարտաւորու-  
թիւնները բռնաբարելուդ համար . շնորհակալ ե-  
ղիւ երկնից , որ թող շտուաւ դոհ երթալ ազիոզորմ  
անխոհեմութեան մը , վասն զի խիղճդ զքեզ պիտի  
տանջէ՛ր մինչև յաւիտեան :

— Բայց բացատրէ՛ ուրեմն , բացատրէ՛ :

— Դու ամեն բան պիտի գիտնաս, բայց քիչ մը ուշ. հիմա տե՛ս, » ըսաւ մատնանիչ ընելով ժայռը՝ որ կ'աներեւութանար ջուրին յարձակմանց տակ: Ծովը սկսեր էր բարձրանալ, եւ կէս ժամ շանցած՝ աչք մը 'ի դուր պիտի փնտռէր անոնց գտնուած տեղը, այլ եւ մահուանէ փախչելու յոյս չ'կար, զի ծովափը անմարդարնակ եւ այնքան հեռի էր, որ իրենց ձայնը անկարելի էր հոն հասնիլ:

Քլէռ ինքզինքը իւր ճակատագրին յանձնած՝ իւր ամուսնոյն կը փարէր գիրկընդխառն, իսկ Ատրիէն գլուխը խոնարհեցուցած՝ անէ՛ծք կը կարգար ինքնիրեն թէ ի՞նչու անկարող կը գտնուէր ո՞ճիրն քաւելու:

Ջուրը սկսեր էր մինչեւ իրենց ոտքերն հասնիլ:

— Կորսուեցա՛նք, մրմնջեց Ատրիէն յուսահատական շեշտով մը:

— Ազատեցա՛նք. գոչեց Քլէռ ուրախաձայն, մատնանիչ ցուցնելով նաւակ մը՝ որ սասաիկ թիավարութեամբ դէպի իրենց կուգար:

Երեք անձինք կային նաւակին մէջ, որոց մին էր Ֆէլիքս: Երիտասարդը իւր ընկերացը քով գացած պահուն, կուահելով որ եթէ ջուրին մակընթացութիւնը դրաւ էր նոցա ապաստանարան եղող ժայռը, անպատճառ պիտի խեղդուէին, առանց ժամանակ կորսնցնելու լողալով ճամբան շտկեր էր ցամաքին դէպ 'ի այն ծայրը՝ ուր էր ձկնորսներու տնակը: Երկու ձկնորսք ընկերացած էին անոր, եւ ամեն ջանք 'ի դորձ կը դնէին նաւաբեկեալներուն օգնութեան հասնելու համար: Բարեբաղդաբար աղէկ ժամանակին հասան ժայռին քով, վասն զի ալիքները արդէն կ'անցնէին ժայռին վրայէն եւ անոնց ոտքերը կը ծեծէին:



Ատրիէն, որ շրջադայութեան սկիզբները գոհ և  
զուարթ չէր, հիմա ալ նոյն վիճակին մէջն էր, զի  
ինքնիրեն կը զայրանար այն անդարմանելի թշուա-  
ռութեան վրայ որոյ ինք պատճառ պիտի ըլլար փ-  
լէռի գգուանքը եւ Ֆէլիքսի ուրախութիւնը  
չէին կարող ջնջել իւր դառն մտածմունքները ։

Երբ տուն հասան՝ Ատրիէն իւր սենեակը քաշ-  
ուեցաւ ։ Ճաշի զանգակը հնչեց, բայց Ատրիէն  
չերեւաց ։ Քլէռ պարտաւորեցաւ անոր քով եր-  
թալ եւ թախանձանօք սեղանատուն իջեցուց ։

— Կճապարէ՛, կըսէր, աճապարէ՛, զի անօ-  
թութենէ պիտի մեռնիմ ։

Սեղանը շքեղութեամբ զարդարուած և կեդ-  
րոնը դրուած էր հսկայ փունջ մը ։

Քլէռի եւ Ֆէլիքսի փոխանակած ժպիտները  
և նշանները սկսան կարծեցնել արուեստագէտին  
թէ դաւ մը նիւթուած էր ։ սեղան նստաւ, եւ  
երբ անձեռոցը քակեց՝ մէջէն Պատուոյ Լէգէօնի  
Խաչ մը դուրս ինկաւ ։

— Ի՛նչ է այս, գոչեց Ատրիէն զարմանահար ։

— Ասիկայ արուեստիդ հիմնացման մէկ վար-  
ձատրութիւնն է ։ զոր եղբայրս Ֆէլիքս բերաւ  
Քարիզէն, պատասխանեց Քլէռ ։

— Ի՛նչ ըսիք . . . եղբայրդ . . .

— Այո՛, եղբայրս, որ մեր ամուսնութեան մի-  
ջոցին ճանապարհորդութեան մէջ էր ։ այնպէս  
փափաքեցայ որ ՚ի յիշատակ ձեր իրեն ծանօթաց-  
ման, երջանիկ դէպք մը միանայ ձեզ ։

Արուեստագէտը խռովեալ եւ ապշեալ՝ բառ  
մը չէր գտներ պատասխանելու, այլ միշտ կը  
կրկնէր ։

— Եղբայրը . . . եղբայրն է եղեր ։

— Եթէ կ'ընդունիք, ձեր ալ եղբայրն եմ, շա-

բայարեց Յէլիքս : Այս խաչը ձեզ վայելած է .  
գիտնալով թէ դուք շատ հետամուտ չէք այս  
տեսակ պատիւներու , ասոր համար յատկապէս  
ձեզի համար շինուեցաւ :

Ատրիէն կը կարծէր թէ կ'երազէ , այն միջոցին  
Քլէռ կարդաց կամաւ կորսնցուցած լրագրին  
պատուանշանաց բաժնին մէջ նորա անունը :

Զղջման եւ ուրախութեան արտասուք սկսան  
հոսիլ արուեստագէտին աչերէն :

— Ա՛հ , բարեկամս , եղբա՛յրս , ըսաւ յուզեալ  
ձայնիւ , Յէլիքսի երկու ձեռքերը բռնելով , որոյ  
մահն ժամ մը առաջ վճռած էր ինքն , ի՛նչպէս  
յայտնեմ քեզ իմ երախտագիտութիւնս ու շնոր-  
հակալութիւնս , ո՛հ , որչա՛մ տխմար էի , բոլորո-  
վին մուցայ սա կէտը թէ եթէ իմ կարծածիս պէս  
ըլլայիք՝ եթէ կատակ մը չըլլար այս , միթէ իմ  
ներկայութեա՞նս պիտի ունենայիք այն շարժ-  
մունքները . . . պէտք է ուրեմն անգամ մ'ալ խոս-  
տովանիլ թէ՛ մարդս կատարեալ չէ՛ : » Ապա կնոջը  
դառնալով , Քլէ՛ռ , Քլէ՛ռ դոչեց , անշուշտ պիտի  
ներես իմ այս յանցանացս համար . մեղա՛յ , հա-  
ղար անգամ մեղա՛յ :

— Միթէ միշտ կին մը ներողամիտ չը՞ գտնուիր  
մէկ ժամ տեւող յիմարութեան (կատակ) մը հա-  
մար , երբ այն յիմարութիւն իւր ներշնչած սիրոյն  
արդիւնքը լինի , պատասխանեց Քլէռ շնորհալի  
ձայնիւ :

Լուի Քօլլաս

(Թարգմ)

Լ . Ս .

## 151

## ՊԱՐՄ.Պ ԱՌՆԵԼ, ԼԵՑՈՒՆ ԳՏՆԵԼ

Բարիդեան բարեկամի մը նամակէն քաղուած է սա յետ դրութիւնը .

«Յ . Գ . — Կարծեմ այսչափ ճանճրացուցիչ եւ երկար նամակէս վերջը, կը ներեսս ինձ երկտողիւ մը պատմել թեղ անցեալ գիշեր ինձ պատահած դուարձալի մէկ դէպքը :

«Ամսոյս (Գեկտ .) 18ին գիշերուան ժամը Տին սենեակս փակեցի եւ բանալին բանդալօնիս ետեւի գրպանը դնելով, դուրս ելայ քիչ մը պտտելու համար . այն միջոցին դերձակս տեսայ, որոյ ձեռք մը զգեստ ապսպրած էի, Ծննդեան համար . — Եկուր փորձ մը ընենք, — ըսաւ եւ միասին ելանք տունը դացինք . հոն ամբողջ զգեստներս հանեցի եւ նորերս հագայ : Երբ դերձակը փորձը լմնացուց, հին զգեստներս վերստին հագայ եւ «Գիշեր բարի» մաղթելով՝ տանս ճամբան ձեռք առի . հազիւ քիչ մը տեղ հեռացած էի, ահա երկու գողեր դէմս ելան սպառնալից : Պաղարիւնութիւնս չի կորսնցունելով՝ բանդալօնիս ետեւի գրպանէն սենեակիս խոշոր բանալին հանեցի, — իբրեւ թէ ատրճանակ մը ըլլար — եւ գողերէն մէկուն ճակտին ուղղեցի : Զարմանալի՝

բան, երկուքն ալ կծկեցին ի տես սոյն սուտ-ղէն-  
քին, սակայն քիչ մը վերջը երբ զայն օդին մէջ  
երերցնելով ճամբաս կը շարունակէի, ահագին  
պայթիւն մը ունեցաւ. որմէ զգացած երկիւղէս  
քանի մը ոտք վեր ցատկեցի, փախայ և շունչս  
մեր դռնասպանին սենեակն առի, ուր զարմանօք  
տեսայ թէ ձեռքինս իրօք ատրճանակ մ'էր եւ  
ոչ թէ բանալիս :

«Սխալմամբ դերձակիս բանդալօնը հագած էի . . . »

Հ.Լ.

— 0 —

## 152

### ԱՆՄԵՂ ՀԱՐՑՈՒՄ ՄԸ

Երկու աղջկանց հայր աղքատ դիւղացի մը,  
ազնուական Պարոնի մը կառքին տակ մնալով,  
խեղճին մէկ ոտքը ջախջախուած էր. եւ այս փոր-  
ձանքին իբրև տուգանք Պարոնէն ստացած 10,000  
Քրանքովը ամուսնացուցած էր իւր մեծ աղջիկը.  
Ժամանակ մը վերջը պզտիկ աղջիկը կը հարցնէ  
իւր հօրը .

— Հա՛յրիկ, միւս ոտքդ ե՞րբ պիտի կտրես . . . »

— 0 —

## 153

## ԴԱՏԱՐԱՆԻ ՄԷՁ

— Անուանդ ի՞նչ է :

— Անտրէ . . . :

— Արհե՞ստդ :

— Աժխափաճառ :

— Տարի՞քդ քանի է :

(Բաւական վարանումէ վերջը) — Կը ներէք Պ .  
Դատաւոր , դժբաղդարար չեմ համրած . . . :

— 0 —

## 154

## ԴԵՂԱԳՈՐԾ ՄԸ

Դեղարանի մը մէջ ձրիաբար հիւանդ դարմանող  
բժիշկ մը , օր մը հիւանդներէն մէկուն տիրոջը  
հետեւեալ հրամանը կուտայ .

— Եթէ տուած հրահանդէս բաժնուիք ,  
թերևս հիւանդութիւնը սաստկանայ եւ մինչեւ  
խսկ մահ պատահի , ուստի այժմէն կը յատարա-  
բեմ թէ 'ի վերջոյ ինձ դէմ բան մը ըսելու իրաւ-  
ունք չպիտի ունենասք » Այս ըսածին ճշմարտու-  
թեանը վկայ բռնելու համար «նէսրա՞ , մօն շէռ ,  
(այնպէս չէ՞ , բարեկամս ,) կը յարէ դեղադորձին  
դառնալով :

— Ճշմարիտ է . կը պատասխանէ դեղադործը .  
միւսիւ տօքթօրին մինչև հիմա անդիւ աշխարհք  
ղրկածները իրեն կ'օգտէ , պարապ տեղը ի՞նչու  
նորէն մեղքը պիտի մտնէ . . . :

— 0 —

## 155

## ԱՅՐ ԵՒ ԿԻՆ

Վույ ճա՛նըմ Օնօիրիոս աղա , հազար հեղ ը-  
սի քի՛ շիլթէյի կլխու համար առնելիք ճանֆե-  
սըդ անոյշ բէմպէ ըլլայ . դուն կէնէ կացեր սօլ-  
դուն ըրէնկ մը առեր ես . . . քովի Ս . հանըմին  
առածը տեսնաս ի՛նչ անո՛յշ բէմպէ էր :

— Ի՞նչ ընենք , կնիկ , պէս պէլլի՛ անիկայ շէքէ-  
րին բէք աժան էղած վախթը առած ըլլալու է :

— 0 —

## 156

## ԲԱՐԵՊԱՇՏ ԽԱԹՈՒՆ ՄԸ

Ա՛խ , սա ծունկիս ցաւը աճապա թող պիտի  
տայ քի Յնունդին դիշերը օլսուն ժամ մը եր-  
թամ , կ'ըսէր 75նոց խաթուն մը :

— Թամա՛մ , պատասխանեց թուը , ցորեկ ա-  
տեն չես կրնար կոր դուրս ելլալ , դիշերը ինտո՞ր

պիտի ընես . իլլէ աս հավաներուն . դուրս ելլալուդ պէս՝ նորէն կը հիւնդնաս . տունին մէջն ալ օտա մը քաշուելով աղօթքդ ընես նէ՝ ընդունելի կըլլայ :

— Անանկ է ամա , եա՛վրում , Միջակէտենց առած նոր հարսը բէք կը կովեն կոր տէ՝ անանկ աղում օրին հէլպէթտէ ժամ կը պերեն , նայիմ կովածնուն խտար կա՞ , մի , ան հասկնալու համար կուղեմ կոր էրթալ :

— 0 —

157

## ՃՇՄԱՐՏԱՍՈՒՏ

Հրդեհի եւ կենաց ապահովագրական ընկերութեանց նոր հաստատումած տարին , Իտալացի շինական մը լսելով որ եթէ նոյն ընկերութիւններէ միոյն ի կենդանութեան ամսական փոքրիկ գումար մը վճարէ , մեռնելէն ետքը իւր ընտանիքը բաւական գումար մը պիտի ընդունի , ուստի կ'որոշէ իւր կեանքն ապահովագրել տալ , եւ նոյն իրիկունը տուն վերադարձին կը հրամայէ կնոջը որ կիրականօրեայ հագուստները պատրաստէ :

— Բայց վաղը կիրակի չէ , կըսէ կինը դարմանօք :

— Գիտեմ , սակայն անձս ապահովութեան դընել պիտի երթամ :

— Ա՛յ, ինքզինքդ բռնկցնելու մի՞տք ունիս :  
 — Չէ՛, չէ՛, դող մի՛ ելլար . . . Եթէ ամիսը 20  
 ֆրանք վճարեմ, մեռնելէս ետքը զաւակս, Ալ-  
 պէրթոն, պանքայէն 10-15000 ֆրանք պիտի  
 առնէ :

— Ահ, սիրելի ամուսինս, դո՛նէ շուտ մը այդ  
 որոշումդ դործադրէիր, որպէս զի Ալպէրթոնիս  
 ազուր խանութ մը բանայ :

— Հիմա ադ խօսքդ վայլե՞ց :

— Մի՛ բարկանար, հոգիս, անպատճառ այսօր  
 մեռնելու է չեմ ըսեր, անանկ խօսք մ'էր ըրի :  
 Եթէ, ի՞նչ մեղքս պահեմ, պզտիկ դումարի մը  
 փոխարէն այնչափ դիւրութեամբ մեծ գումար մը  
 տալիքնուն խելքս չի պառկիր, բայց անգամ մը  
 դնա՛ նայինք :

Հետեւեալ օրը դիւզացին հագուած սգուած՝  
 ապահովադրական ընկերութեան մը գրասենեա-  
 կը կ'երթայ եւ քարտուղարներէն մէկուն կը ներ-  
 կայանայ :

— Բարի լոյս, պարոն :

— Բարի լոյս . ի՞նչ կ'ուզէք :

— Ինքզինքս ապահովութեան պիտի դնեմ :

— Շատ աղէկ կ'ընէք . Անուննի՞դ :

— Ալֆօնսօ Բէրիթօ, խոհարար ի Բասաճօ տի  
 Ֆլօռա :

— Ի՞նչ պայմանաւ կ'ուզէք ապահովագրուիլ :



- Մեռնելէս ետքը զաւելիս, Ալպէրթօ Բէբի-  
թօյին 10,000 Քրանք ձգել կ'ուզեմ :
- Քանի՞ տարեկան էք :
- Էհ, սանկ, 40—45 :
- Ամիսը 30 Քրանք պիտի վճարէք :
- Շատ աղէկ, կը վճարենք :
- Կառաց եւ Թրամվայից անցած փողոցներէն  
կ'անցնի՞ք :
- Հարկաւ կ'անցնիմ :
- Չեղաւ. ատիկայ մեր կանոնին հակառակ է :
- Ի՞նչպէս :
- Ձի կարելի է որ կառքի կամ Թրամվայի  
մը տակ երթալով . . .
- Տէր ողորմեա, ճամբան աչքս գոց չեմ քա-  
լեր, զանոնք կրնամ տեսնել :
- Աղէկ, բայց չըլլար :
- Ուրեմն այսուհետեւ անանկ փողոցներէ չեմ  
երթար :
- Ծխախոտ կը գործածէ՞ք :
- Ուզեմ չուզեմ կը գործածեմ :
- Այդ ալ չըլլար :
- Ան ինչո՞ւ համար :
- Վասն զի անպատճառ սրտի հիւանդութեան  
ենթակայ կ'ըլլաք, որով ընկերութիւնս կը մնասէ :
- Անանկ է նէ՛ չեմ խմեր. արդէն ես ալ ձը-  
գել կ'ուզեի :
- Թէյ կը խմէ՞ք :
- Հապա՞. արդեօք ա՞յն ալ վտանգաւոր է :

- Որովհետև պնտութիւն կուտայ . . .
- Էհ, ասկէ ետքը ան ալ չեմ գործածեր :
- Ձեր բնակարանին մօտերը գինետուն կա՞յ :
- Շատ չէ. մէկ երկու հատ :
- Ուրեմն չեղաւ . զի գինետուն գտնուած փողոցները բնակող մարդոց կեանքը չենք կրնար ապահովագրել . այս մասին խիստ բացորոշ է ընկերութեանս օրէնքը :
- Ատանկ ըլլալէն ետքը, ես ալ այն փողոցէն կ'ելլեմ ուրիշ տեղ մը կը բնակիմ :
- Թրամվայից գծերու վրայէն չպիտի անցնիք :
- Չեմ անցնիր :
- Վարձու ձի չպիտի հեծնաք :
- Չեմ հեծնար :
- Արևը մարը մտնելէն ետքը սունէն դուրս չպիտի մնաք :
- Չեմ մնար, եղբայր, չեմ մնար :
- Ոգելից ըմպելի չպիտի գործածէք :
- Չեմ գործածեր :
- Գօնասօլիտ չպիտի խաղաք :
- Արդէն չեմ խաղար :
- Մուցանք հարցնել թէ ամուսնացեա՞լ էք :
- Տէր ողորմեա . . . չի կարգուած մարդը զաւակ կունենա՞յ :

- Կինդ ո՞ղջ է .
- Հապա՞ .
- Ամենեւին կնոջդ հետ չպիտի կուուիս .
- Արդէն չեմ կրնար կուուիլ, դի ինձմէ աւելի  
զօրեղ է .
- Ի՞նչ գործով կը պարապիք .
- Կարծեմ անունիս հետ իմացուցի թէ խո-  
հարար եմ .
- Ա՛յ, ա՛յ, ա՛յ, տեսա՞ր մի հիմա, ատիկայ ա-  
մենեւին չեղաւ, չեղա՛ւ, չեղա՛ւ .
- Ի՞նչ կայ որ չեղաւ .
- Վասն զի աւելցած կերակուրներէն կուտէք  
եւ ստամոքսը . . .
- Ներեցէ՛ք պարոն, ընդմիջեց գլուղացին ան-  
համբերութեամբ, հոս գամբիւղ մը ունի՞ք .
- Ի՞նչ պիտի ընէք .
- Գոնէ անոր մէջ մտնելով սա առաստաղէն  
վար, օդին մէջ (հասկում) կախուիմ. եթէ այդ ա-  
մեն ըսածներդ ընելու ըլլամ, ես գքեզ սիկուր-  
դան կը դնեմ .» ըսելով կ'առնէ կը քայլէ .

°°

Իրիկուան տուն վերադարձին, կինը անձկանօք  
կը հարցնէ թէ

- Ի՞նչ ըրիր, յարմարեցա՞ր .
- Ի՞նչը պիտի յարմարիմ, ադ մարդիկը իմ  
ողջութեանս, յօժար կամօքս իրենց տալիք դրա-  
մըս ընդունելու համար այսչափ դժուարութիւն  
կը հանեն, է՛յ մեռնելէս ետքը այդ գումարին  
տասնապատիկը ի՞նչպէս ետ առնելնուս վրայ իմ  
կարճ խելքս չպառկեցաւ գնաց .

— 0 —

## 158

## ՊԶՏԻԿ ՄՆԱԼ

Ստանձնած սլաշտօնին կամ ընտրած մէկ արհեստին գաղտնեացը տեղեակ չեղողը, 'ի վերջոյ սլաշտիկ կը մնայ, ասոր մէկ օրինակը կրնայ համարուիլ հետեւեալը :

Մեծ քաղաքի մը մէկ թաղին գաւառացի գիշերապահը փափաքելով իւր ընտանեաց գիրկը վերագառնալ, նամակաւ մը իւր մօտակայ աղգականներէն մէկը բերել կուտայ, նորա պարտականութեան սահմանը կը գծէ եւ զայն թաղեցւոց ներկայացնելով իր տեղը գիշերապահ կարգիւէ վերջը՝ գոհ սրտով իւր ծննդավայրը կը վերագառնայ : Նորա յաջորդը կ'սկսի ամեն գիշեր մինչեւ առաւօտ նոյն թաղին պահպանութեանը հսկել : Քանի մը շարաթներ անցնելէ ետքը, գիշեր մը մերձակայ թաղերէն մէկուն մէջ հրդեհ կը ծագի, զոր ըստ սովորութեան, ամեն գիշերապահք կ'սկսին իրենց թաղերու ընակչաց աղգարարել, բայց մեր նորեկ պահնորդը հրդեհը չի կանչէր : Հետեւեալ առաւօտ թաղեցիք տեղեկանալով որ գիշերը հրդեհ պատահեր բայց գիշերապահը իրենց չէ խմացուցեր, կը կանչեն զայն եւ կը հարցնեն թէ ի՞նչու իւր պարտականութեանը մէջ թերացաւ :

— Ներեցէք, կըսէ պահնորդը անկեղծութեամբ,

իմ նախորդս ինձ պատուիրեց հրդեհ կանչել ,  
բայց փառք Աստուծոյ , մեր թաղին մէջ հրդեհ  
չպատահեցաւ որ կանչէի :

Թաղեցիք այս բացատրութենէն հասկնալով որ  
պարզամիտ մարդը թիւրիմացութեանը պատճա-  
ռաւ հրդեհ չէր կանչած , կը պատուիրեն որ յետ  
այնորիկ եթէ տեղ մը հրդեհ պատահի՝ անմիջա-  
պէս թաղեցւոց աղղարարէ , ապա թէ ոչ՝ պիտի  
ճամբուի եւ հացէն ըլլայ : Հարկ չէ ըսել թէ գի-  
շերապահը կը խոստանայ ուրիշ անդամ իւր սոյն  
պարտաւորութեանը մէջ ալ չը թերանալ :

Այս խօսակցութեան ունկնդիր եղող դուար-  
ճասէր պարոն մը միտքը կը դնէ գիշերապահին  
խաղ մը ընել . ուստի մէկ երկու օր վերջը անոր  
գտնուած սրճարանը երթալով՝ ներկայ գտնուող  
ներքը բարձրաճայն բարեւելէ ետքը ,

— Ինտէ՞ք , բարեկա՛մք , կըսէ , թէ Սմերիկայի  
Պօսթն քաղաքին մէջ սարսափելի հրդեհ մը ծա-  
գեր է եւ երեք օրէ ՚ի վեր կը վառի եղեր — :

Ի լուր այս յայտարարութեան , մեր գիշերա-  
պահը անմիջապէս սրճարանէն դուրս կը նետուի ,  
եւ իւր պահնորդական «օք» առած՝ կ'սկսի «Սմե-  
րիկայի Պօսթն քաղաքին մէջ հրդեհ կա՛յ .» պո-  
ռալով փողոցները դառնալ :

Անցորդք , ցորեկ ժամանակ հրդեհ չը կանչուի-  
լը , եւ մանաւանդ 3-4 ամսուան ճամբայ հեռու  
քաղաքի մը մէջ պատահած հրդեհը իրենց աղ-  
ղարարելը անօգուտ բան ըլլալը յայտարարելով

Թէեւ կը ջանան զինքն համողել, բայց մարդը առանց մտիկ ընելու՝ իւր «հրդեհ կայն» կը կըրկնէր :

Խնդացոյներու եւ յորդորողներու բազմութիւնը հետզհետէ կաւելնայ, բայց գիշերապահը, «ինձմէ ի՞նչ կուզէք, հացէ՞ս պիտի ընէք» ըսելով իւր երգը կը շարունակէ, մինչեւ որ ոստիկանք վրայ հասնելով զայն պահականոց կը տանին, ուր հաստատուելով թէ կատակի մը զո՞հ գացած էր խեղճը, կը համողեն եւ ազատ կը թողուն, որ գլխակոր եւ ամօթահար իւր խրճիթը կ'երթայ և կ'սկսի մտածել :

Այս դէպքը անմիջապէս մօտակայ թաղերու ալ տարածայնուելէն՝ գիշերապահին մէկը կ'ելլէ իւր պաշտօնակցին այցելութեան կուգայ :

— Անցած ըլլայ, ի՞նչ ըրիր նախնք :

— Աղբար, ինչ ընելիքս ես ալ կորսունցուցի • կրակ մը եղաւ չի պոռացիլնք՝ քիչ մնաց հացերնուս պիտի ըլլայինք, կրակ մ'ալ եղաւ պոռացիլնք նէ՝ քիչ մնաց յիմարանոց պիտի երթայինք :

— Անանկ է, ըսաւ փորձառու պաշտօնակիցը • թաղեցիք իրաւունք ունին, աքաղաղն անգամ եթէ չի խօսի, կամ եթէ ան ժամանակ խօսի՝ կը պատժուի : Աճէմիու թիւնը ասանկ բաներ կ'ընէ :

## 159

(Չորս օրուան դպրոցէ ելնող և խօսքս անոր չըր-  
ջանաւարտ անունը կրելով՝ հայրիկներնուն հացը  
ուտող, տասը բարա վաստկելուն ճամբան չ'դիտ-  
ցող կարգ մը օղապարիկ միւսիւ բանաստեղծնե-  
րուն համար սքանչելի դաս մ'է հետեւեալը։)

## ԲՅՆՏԻՇԷՐԻԻ ԲԱՆԱՍՏԵՂԵԸ

Օր մը՝ երիտասարդ բանաստեղծ մը եկաւ տես-  
նել զիս — ինչպէս գրեթէ ամէն օր անսլակաս են  
եկողները — և իմ խելքիս, հանճարոյս, ճաշակիս,  
բարեսրտութեանս եւ այլ հանդամանցս մասին  
(թէ եւ ոչ մէկ տառին կը հաւատամ, քանի որ  
միւսէնոյն խօսքերը քսան տարիէ ի վեր անընդահատ  
կը լրսեմ) աժանցած քաղաքավարական ձեւերէ  
եւ սովորական պարզ խօսակցութենէ մը յետոյ,  
գրպանէն թուղթ մը հանեց եւ ինձ ներկայացնե-  
լով ըսաւ «Ասոնք իմ գրած ոտանաւորներս են» —  
— Ոտանաւոր մի, հարցուցի։

— Ա.յո՛, Պարոն, եւ կը յուսամ թէ դոցա մասին  
պիտի բարեհաճիք ձեր կարծիքն յայտնել ինձ։

— Կը սիրէ՞ք ճշմարտութիւնը։

— Տարակոյս չկայ, Պարոն, եւ ճիշդ զայն կը  
խնդրեմ ձենէ։

— Ա.յն ատեն պիտի ըսեմ ձեզ։

— Բայց ներեցէք, ըսաւ երիտասարդն աշխու-  
ժիւ, կը կարծէ՞ք թէ բանաստեղծ մը ճշմարտու-  
թիւնը ձեզնէ դալ լսելու չափ ապուշ ըլլայ։

— Ա.յո՛, Պարոն։

— Եւ դուք այդ համարձակութիւնը կ'ունենո՞ք։

— Տարակոյս չկայ։

— Առաջ քաշուելու :

— Ինչո՞ւ չէ, որովհետեւ՝ եթէ քաշուելով խօսիմ, օրինակի համար ձեր գործն ըստ արժանւոյն գնահատած չպիտի լինիմ, մինչդեռ եթէ ճշմարտութենէ չէք վիրաւորուիր, այն ատեն պիտի ըսեմ ձեզ «Դուք անճարակ եւ ողորմելի բանաստեղծ մ'էք, պարոն, եւ որովհետեւ ճշմարտութիւնը լսելու չափ կորով չունիք, պէտք է աւելցնեմ նաև թէ դուք միեւնոյն ժամանակ տափակ մարդուն մէկն էք » :

— Եւ այդ աստիճան անկեղծութեամբ բան մը չէ՞ք կորուսած :

— Ընդհակառակը . միշտ շահած եմ :

Կարդացի երիտասարդ բանաստեղծին գրածները եւ ըսի իրեն «Ձեր ոտանաւորներն ո՛չ միայն անհամ են, այլ և ինչ որ աւելի ճշմարիտ է, համոզուեցայ թէ ասոնցմէ լաւագոյնն ալ չ'պիտի կարողանայք գրել երբէք » :

— Այն ատեն, գէշ աղէկ պէտք է շարունակեմ, որովհետեւ անհնար է ինձ ոտանաւոր չը գրել :

— Ահա ելի հայհոյութիւն մ'է այդ, պարոն, պատասխանեցի, դիտէ՞ք թէ ինչ վատթարութեան մէջ կ'իյնաք այդ կերպով . Ո՛չ աստուածք և ոչ մարդիկ ներած են բանաստեղծին միջակութեանը . այսպէս կ'ըսէ Հօբան :

— Ատի դիտեմ :

— Այն ատեն դիս մտիկ ըրէք . Հարո՞ւստ էք :

— Ո՛չ :

— Սղթա՞տ էք :

— Շատ աղքատ :

— Եւ այդ աղքատութեան վրայ պիտի աւելցնէք նաև անլի ոտանաւորներու այլանդակութիւնը . . . Այո՛, պարոն, ձեր բոլոր կեանքը պի-



տի կորուսանէ՛ք ընդ ունայն՝ ժամանակէն առաջ  
 ծերանալով։ Խորհեցէք միանգամ, ծեր, աղքատ  
 եւ գէշ բանաստեղծ, ոհ, ի՛նչ սղորմելի դեր։

— Ճշմարիտ է ձեր ըսածը, պարոն, միայն թէ  
 անգամ մը յակամայս բռնուեցայ այս ախտէն։

— Պղպականներ ունի՞ք։

— Այո՛։

— Նիւթական ի՞նչ վիճակ ունին։

— Գոհարավաճառ են։

— Կը յուսա՞ք թէ ձեզ համար գոհողութիւն մը  
 յանձն առնուն։

— Թերեւս։

— Լաւ ուրեմն, այն ատեն գացէք տեսնել զա-  
 նոնք եւ առաջարկեցէք իրենց որպէս զի ստորին  
 տեսակէ գոհարեղէններու ծրար մը յանձնեն  
 ձեզ. եթէ յաջողիք, անմիջապէս ճամբայ ելէք  
 դէպ ի Բօնտիշերի եւ եթէ կը փափաքիք, նաև ուն  
 մէջն ալ կրնաք պաղուկ պաղուկ ոտանաւորներ  
 գրել։ Գացէք հոն և ապահով եղիք թէ պիտի շա-  
 հիք։ Երբ բաղդերնիդ շինէք եւ հոս վերադառ-  
 նաք, ուղածնուգ չափ բանաստեղծութիւն գը-  
 րեցէք, սա պայմանաւ որ տպագրել չտաք զա-  
 նոնք, որովհետեւ քաղաքավարութեան դէմ է  
 մարդու գլխուցաւ պատճառել։

Այս խորհուրդէս գոհ՝ դուրս ելաւ երիտասարդ  
 բանաստեղծը։

••

Տասն երկու տարիներ անցած էին, երբ օր մը  
 մէկը ներկայացաւ ինձ։ Չկրցի ճանչել զայն ա-  
 ռաջին անգամ։

— Պարո՛ն, չէ՞ք յիշեր, ըսաւ, այն երիտասարդ  
 բանաստեղծն, որու ասկից տասն երկու տարի

առաջ խորհուրդ տուիք իւր բազմը շինելու համար Բօնտիչէրի երթալ, Հետեւեցայ ձեր խորհրդին եւ 100,000 Քրանք շահեցայ, վերադարձիս կրկին անգամ սկսայ ոտանաւորներ գրել՝ որոց լաւագոյնները պատիւ ունիմ ձեզ ներկայացնել, յուսամ որ այս անգամ չհաւնելիք չպիտի ընէք:

— Միշտ նոյն բանն է, պարոն, անհամ եւ անարուեստ: Միայն թէ՛ որովհետեւ այժմ նիւթական բարւօք վիճակ մ' ունիք եւ ԿՈՒՇՏ փորով կը գրէք, գացէ՛ք, ուղածնօ՛ւղ չափ գրեցէք: Այս է անա իմ կարծիքս:

Թարգմ. Գ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

ՏԵՆԻ-ՏԻՏՐՕ

— 0 —

Գաւառացի հարուստ մը իւր գաւակացը համար դասատու մը բռնած ըլլալով, դանոնք տանը մէջ դաստիարակել կուտար. կաղանդի առթիւ դասատուն աշակերտացը հօրը ներկայանալով կըսէ:

— Աստուած շատ տարիներու հասցնէ, կը մաղթեմ որ ձեզ համար երջանիկ տարի մը ըլլայ այս տարին եւ բոլոր փափաքներնիդ կատարուին:

— Վա՛րժապետ, քեզի բան մը ըսե՛մ, կըսէ հարուստը, իմ փափաքս կաղանդչէք չը տալ է:

— 0 —

## 161

Հետեւեալը՝ դար մը առաջ, (1791)ին գրուած  
ձեռագիր տետրակէ մը ընդօրինակեալ է :

## ՆՈՐ ՏԱՐԻ

Շա՛տ տարիներ այսպէս կուգան կը սահի՛ն ,  
Մինչդեռ , ե՛ղբայր , խօսին թելերն քոյ կեանքին .  
Բայց ի՞նչ արդեօք անկէց մնայ քեզ բաժին ,  
Որ վայելուչ խինդ մ՛ ունենաս եւ անդին .  
Խորհէ՛ , թէ ի՞նչ արդիւնք ունիս այս տարի ,  
Որ քու կենացդ մէկ թերթն առած կը տանի՛ :

Թէ օր աւուր հաշիւըդ լեցուած դտնես ,  
Եւ կամ ընդ միշտ շահ մը կըցեր քաղեր ես ,  
Ուրախ եղիր , երջանիկ ես ամենէն ,  
Փա՛ռք տուր ՎԵՀԻԴ , քեզ կայ բարիք այս օրէն :

Իսկ թէ օրերդ , աւա՛ղ , յուճակեսս են սահեր ,  
Թէ շռայլած ես ժամանակդ շատ օրեր ,  
Ողբա՛ վրադ , լա՛ց ու կոժէ՛ , սուդ մտիր ,  
Մե՛ծ է կորուստդ , զի ժամանակդ գոհեցիր :

Ողբա՛ կըսեմ , ես ալ քեզ հետ միասին ,  
Զի ըրեր ես թշուառութիւն քեզ բաժին .  
Ուխտէ՛ , ե՛ղբայր , գործ բռնել կանոնաւոր ,  
Որ ըսեմ քեզ , «ՏԱՐԻԴ ԼԻՆԻ ՇՆՈՐՀԱԽՈՐ» :

## 162

## ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ ՄԸ

Ձը գիտեմք, քանի՞ տարի առաջ, Դեկտեմբեր 31ի գիշերը, տան մը մէջ այր եւ կին կաղանդական սեղանին առջեւ նստած, կը խօսակցին եղեր այսպէս.

— Ելիկում աղա, կիտե՞ս չը յաջողեցանք:

— Ի՞նչ բան.

— Վարժապետին կաղանդչէք չը ղրկելիքդ անցած տարուընէ գիտնալուս, աս կաղանդին 2-3 օր մնացած՝ վրան բարի Գրարոսնիս սէօղտէ քէֆ չունի ըսելով դպրատուն չի ղրկեցի ամա, նէ՞ ֆայտա, չի յաջողեցանք:

— Քեզի ո՞վ ըսաւ քի ատանկ բաներ ընես, վաղն ալ կ'ելլաս՝ տղաքը տունին մէջը մեզ խափուռ խափուռ կը բերեն կոր կրեսս:

— Քա ճանրմ, պղտիկութին մը չըլլայ տէ յի ըրի, ֆախաթ, վարժապետը մենէ խուռնազ բըրթելով աս իրիկուն տնտեսին հետ սա նամակը ղրկեր, ուռումիդտէն կը հասկցնէ կոր քի՛ կաղանդչէքը չի մոռնանք:

— Մենք ալ ուռումիդտէն կը հասկցնենք քի՛ ադ պախաշիշ տալուն ատէթը շատոնց է քի մոռցանք:

— Արթըլս չիյտեմ, տուն սա նամակը կարդայ քի հասկնաս:

Եւ Ելիկում աղա հետեւեալ նամակը կը կարդայ:

«Մեծ. Տէր

Ներկայիւս կը փութամ ձեզ եւ ձեր համեստափայլ ընտանեաց շատ տարիներ բարեմաղթել, մաղթել միանդամայն որ սիրատուն, ուշիմ, կայ-

տառ եւ ժրագլուխ որդինիդ Պ. Գրաբոսիկ այս  
տարի աւելի յառաջադիմէ իւր դասերուն մէջ,  
'ի պարծանս ձեր եւ ձեր ազնիւ դերդաստանին :

Մնամ ակնկալու

վարժապետ

Պ. Գրաբոսի

Կինը — Նայէ ի՞նչ աղւոր շուռութլու կրեր է :  
— Ես ալ քովի խանութիս եաղրճիին շուռութ-  
լու խարչըլըս մը պիտի գրել տամ ու վարժապե-  
տը շնորհաւորեմ :

— Մինակ չոր չորունա նամա՞կ մը պիտի գրկես :  
— Անոր գրկածը թաց թացընա՞ էր :  
— Չքսե՞ս . չօճուխիս ճիտիկը կէնէ պիտի ծռի :  
— Քէչի պուշնուղի՞ է ատոր ճիտը քի ծռի :  
— Աստուած լուսաւորէ հոգուն , մամիկս «Տա-  
րին հեղ մը օլսուն վարժապետը խնդացնելու է»  
կրսէր :

— Ան ատենի վարժապետները տպէտ մարդոց  
ծառքը մնայնուն , իրաւ ամեն օր կուլան եղեր .  
Փախաթ հիմա փառք Աստուծոյ , խելացի հոգա-  
բարձուներու սայիէն՝ հիչ լալու քէօչէ մը շունին :

— Ես իս կիտելի , կաղանդին վարժապետին  
պախչիչ կը տանին . ասմաւուրքին մէջը պիլէ իրա-  
բու կաղանդչէք տալը գրուած է :

— Անանկ է նէ՛ էրկու հատ խոչոր բօրթու-  
գայ տուր քի տանի :

— Մեղայ , տահա նէլէր , կաղանդչէք ըսածը  
փարայ ըսել է ,

— Ասմաւուրքին մէջը ատանկ բան մը շարթ  
գրուած չէ . սրտէդ էկածը պիտի տաս . պագըը-  
շարթն ճինսինէ , աղլըղընա չօղլուղունա սլաղըլ-

մաղ կրօնն , հէմ ապը տարին մէկ էրկու հեղ ա-  
տոնց փարայ պախշիշ կուտանք կոր , ե՞նչ կըլլայ ,  
մէկ հեղ մնայ թո՛ղ բօրթուգայ ըլլայ ,

— Տարին մէկ էրկու հեղ ե՞րբ պախշիշ տուած  
ու՛նիս քի ,

— Մտիկ ըրէ քի ըսեմ , Ամառը Յու՛նիսին Յու-  
լիսին վագանձա կրնեն կոր նէ՛ տղոց շարաթա-  
կանները մենք կէնէ կուտանք՝ վարժապետն ալ  
իր ամսականը կառնէ կոր . ասիկա պախշիշ չէ  
տէ ե՞նչ է : Չատկին , Ծնունդին , մեծ բարեկեն-  
դանին էրկերկու շարաթ վագանցա կրնեն , տը-  
ղաքները մեզ տունին մէջ խափուռ խափուռ բե-  
րելնին սանքի չ՛օգտեր , մէյ մ՛ալ մն չի դացած  
շարաթականներն ալ թէքմիլ կը տանին՝ վարժա-  
պետը իր ամսականը կառնէ կոր . ասիկայ պախ-  
շիշ չէ տէ ե՞նչ է : Հէլէ Չ ամիսը հեղ մը լան գիր-  
քը ձգէ , աս գիրքէն պիտի առնես ըսելով քչե-  
լիք գիրքին տիրոջմէն առած թէլլալըխներ ո՞ւր  
դնենք : Չեր ատենը ասանկ բաներ չըլլալէն դատ ,  
տղաքներուն 100 ին սէքսէնը հաֆթալըխ , այլըխ  
չտանեխուն՝ տարին հեղ մը պախշիշ կը տարուէր .  
հիմա 100 ին սէքսէնը քիչ շատ իր կարողութեա-  
նը կէօրէ հաֆթալըխ կը տանի կոր . արթըխ պախ-  
շիշն ալ բէք էվէլ կուգայ կոր .

— Աղէկ կրօնս ամա , վարժապետին խըյմէթը  
գիտնալու է .

— Վարժապետն ալ մեր խըյմէթը գիտնալու  
է . միւշտէրի՞ն խանութպանին խըյմէթը կը գիտ-  
նայ մի՛ խանութպանը միւշտէրիին .

— Հէլպէթտէ խանութպանը միւշտէրիին ,

— Անանկ է նէ , վարժապետը տարին իրեք  
չորս հեղ չի յողնելով առած այլըխները միտքը  
բերէ ու խարշըլըխ սեպելով , տարին հեղ մը ինք

Թո՛ղ կաղընդէ աշկերտները . տէյիլ քի ասանկ  
նամակներով աշկերտէն կաղընդ-չէք պէքլէյէ :

— Աման ճանրմ Ելիկում աղա , նոր ատէ՛թ պի-  
տի հանես .

— Ատէ՛թ չէ , իրաւունքը աս է , տղաքները  
չըլլան նէ վարժապետութիւնը ո՞րի պիտի ընէ :

— Անանկ է ամա , աղ զավալըներն ալ բէք  
չատ բան կը քաշեն կոր ,

— Ամեն մարդ ալ իր գէնահատիւն մէջ շատ բան  
կը քաշէ կոր .

— Հա ամա վարժապետը սիրտ կը հատցունէ :

— Էյ ես ի՞նչ կը հատցունեմ , էրկու փարայ  
վասակելիք միւշտէրիս ծառքէ չի փախցնելու հա-  
մար հողիս կը քաղուի կոր , Քախաթ հիչ մէկը  
ինձի տարին քանի մը հեղ առ սա փարան տէ՛  
ըռահատ ըրէ , յոգնութիւն ա՛ռ չըսեր կոր .

— Ամեն մարդ էյէր քեզի պէս մտմտայ նէ՛  
վա՛յ է եկեր անոնց գլխուն .

— Ամեն մարդ թող ուզածին պէս մտմտայ ,  
ես հիմա սա դիմացս դրուած գինիին աղւորու-  
թեանը վրայ կը մտմտամ կոր , եկո՛ աղ պախշիշ  
կուղեմնոց նամակին վրայէն մէյմէկ գինի խմենք , »  
ըսելով գաւաթները լեցուցեր եւ Աստուած շատ  
տարիներու հասցնէ , շնորհաւոր նոր տարի ե բա-  
րի կաղանդ » մաղթելէ ետքը գինիին խմելու  
մըղեղինաց սեղանին մտեցեր են եղեր :

## 163

## ԱՆՈՂՈՐՄ ԱԳԱՀ ՊԱՏԿԵՐԻ ՆՄԱՆ

Մուրացիկ մը, պատկերհանի մը խանութին առջեւ կեցած՝ ազահ մարդու մը պատկերին կը նայէր ուշադրութեամբ. նոյն միջոցին ազահը պատահամամբ անկէց անցնելուն, կը հարցնէ մուրացիկին,

— Ի՞նչ կը նայիս, արդեօք ինձի կը նմանի՞ .

— Հապա՞, կը պատասխանէ աղքատը, ամենեւին նոյն եւ նմանդ է. վասն զի աս ալ քեզի պէս շկրնար ողորմութիւն տալ .

— 0 —

## 164

## ՔԱՐՈՋԻ ՄԸ ԱՌԹԻԻ

Սրճարանի մը մէջ վարդապետի մը դովեստը կընէին, նորա գլխութեան վրայ խօսած մի նոր քարոզին առթիւ .

— Հայր սուրբը ա՛յն աստիճան ճարտասանօրէն խօսեցաւ, ըսաւ ունկնդիր մը, որ ամեն մարդու սրտին մէջ մուրացկան ըլլալու վափաք մը արթնցուց .



— Սնանկ է, կրկնեց երկրորդ մը, անցած օր  
ալ ննջեցեալի մը ա'յնչափ երանու թիւն տուաւ՝ որ  
իմ ալ մեռնիլս եկաւ :

— 0 —

## 165

## ՊԱՏԺԱԿԱՆ ԱՏԵՆԻ ՄԷՋ

Դատաւորն առ ամբաստանեալն ,

— Անշուշտ կը խոստովանիք թէ այս գողու-  
թեան հեղինակը դուք էք :

— Բնա՛ւ երբէք, տէր դատաւոր :

— Կը մտնա՞ք ուրեմն թէ չորս վկայներ ձեր  
գողնալը տեսած ըլլալնին կը խոստովանին :

— Զարմանալի՛ բան, ես ալ ձեզի կրնամ չորս  
միլեօն հոգի ցուցնել, որք իմ գողութիւնս չեն  
տեսած :

— 0 —

## 166

## ՔԱՂԱՔԱՑԻ ԵՒ ԳԻՒՂԱՑԻ

Քաղաքացի մը, կինն հիւանդ ելող գիւղացիի  
մը կ'ըսէ .

— Ի՞նչու բժիշկ մը չես բերեր .

— Ի՞նչ ընեմ եղբայր, մենք աղքատ մաշդիկներ եմք, ինքնիրեննիս կը մեռնինք, բժշկին օգնութեամբը մեռնելու անկարող եմք . . .

— 0 —

167

## ՏԱՆ ՄԸ ՄԷՉ

Ս. յր եւ կին .

Կինը — Կաղմո՛ւս աղա, անցած օր Փօթօկրաֆճիի մը խանութին առջեւէն անցնելու ատեննիս, ճամէքեանին մէջ Մովկիմ աղային ու կնկանը, մատամ Բբիկին պատկերները տեսանք, Մովկիմ աղան թըպխըսըն էլեր էր ամա, Բբիկ հանըմը հիչ ան չէր . սանկ բէք տիխաթլը մը պիլէ նայիս նէ՛ կէնէ չես ճանչնար . մէնչուր Փօթօկրաֆճիէ տէյի անո՞ւն ալ հանած չըլլայ . . . հիչ աղւոր չի հաներ կոր .

— Պօչ լախըռտը . Փօթօկրաֆճին ի՞նչ խապահաթ ունի . դուք ամեն օր երեսնիդ մէյմէկ պիլչիմ փոխելնուդ՝ Փօթօկրաֆ հանել տուած օրերնիդ ինչ պիլչիմ շտկեր էք նէ՛ Փօթօկրաֆնիդ ալ անանկ պիտի էլլայ . ձեր ասըլ բնական դէմքը ո՞վ տեսած ունի . . .

— 0 —

## 168

## ՆՄՈՅՇ ՄԸ ՀԻՆ ԼՐՈԳՐՈՒԹԵՆԷՆ

(Գաղափար մը տալու համար Յ քառորդ դար առջի եւ ներկայ աշխարհաբառին անհուն տարբերութեան վրայ՝ 1812ին հրատարակուած ԴԻՏԱԿ ԲԻԻՉՍՆԻԵԱՆ անուն կիսամտայ հանդէսէն նոյնութեամբ կ'արտատպեմք՝ հետեւեալն, որ նորահնար կաղամարի մը վրայ կը ճառէ :)

«Մէկ նորագիւտ կաղամարի մը վրայ գրելու պատմելու անցած թղթին մէջ խոստացայ, ամա տարակուսեր մնացերեմ, չէ՛ թէ մէկ հերու տեղ մնէ տէ, աղէկ մը շեմ տեսեր, ասոր համար կը վախնամ գրելու, որ օրն 'ի բուն ձեռքիս տակն է, գրիչս մէջնէ, կամ թէ մէկ խըրթըմըմըմ բաներովս շինած, ո՞ր մէկը հասկցնեմ պիտի տէյի տարակուսերեմ. որ մէկ հասարակ՝ պարզ շինուած քմնէ, այլ ան է տարակոյսս որ մէկը օր աչքով չէ՛ դիտած, ի՛նչոք պիտի կարող ըլլայ դըրածս հասկընայ տէյի, դէրեմ որչափ որ խօլայ է ասոր մէջէն գրելը, անչափ դժար է ասոր վըրայ գրելը ու հասկընելը : Ս՛մա ինչ որ էնէ, գրենք ամենայն պարզութեամբ, գիտցնենք մեր գրասէրներուն որչափ որ կարելի է :

«Երևակայէ մէկ կըսկըլօր պուռնուլթիի խու-  
թիի մը պէս, երեք մատի թանձրուլթեամբ միա-  
կտուր պիլլօրէ աման մը. ասոր վրայի երեսին օր-  
թա տեղացը մէկ պիլլօրէ խուռնի մը՝ գրիչի մը  
հաստուլթեան ծակով դէպի ամանին մէջը իջած  
է, այնչափ՝ որ խուռնիին ծայրը, ամանին մէջի  
տակին չէ հասած, այլ մէկ պղտի մատի հաստու-  
լթեամբ մը բարձր է. ու աս խուռնի ըսածնիս՝ ա-  
մանէն դատած բան մը չէ՛, այլ ամանին հետը  
կըպած՝ շիտակ մէկ կտոր է: Աս ամանին երեսը՝  
մէկ քօվով, կըլօր ծակ մըն է բացված, ու ծա-  
կին մէկ պիլլօռէ թխելիք մը դրված է, որ պէտք  
եղած ատենը՝ կը բանաս կը գոցես: Իչտէ աս է  
Նարախիսի կողմերը. հիմայ տեսնենք ասոր գործա-  
ծուլթիւնը:

«Երբոր մէջը միւրէքէպ կուղես լեցընել,  
պէտք է որ բանաս ան պիլլօռ թխելիքը, ու օր-  
թայէն՝ ան խուռնիի պէս տեղէն՝ լեցընես միւրէ-  
քէպը կաղամարին մէջ ինչվան բերանը. որ թէօր  
չի բանաս ան թխելիքը նէ՛ չի լեցվիր կաղամա-  
րըդ, դէրէմ մէջի օդը տեղ չի տար միւրէքէպին,  
լեցվելէն ետև՝ գոցէ պիլլօռ թխելիքով ծակը,  
և այլն:

«Աս կաղամարը աս տարի գտեր է մէկ խե-  
լացի նիմցէ մը, ու սկսերեն նիմցիստանի գրա-  
գիրները շուտ մը գործածել, ու վէնետիկցի մէկ  
պիլլօռնի մը անտեղերաց ճամբայ ընելիքէն աս  
տարի տեսեր է, առեր բերերէ վենետիկ ասոր

օրինակը . ու կըշինէ մենծ , պղտիկ , կըլօր , քա-  
ռակուսի , ու գինը մէկ ղըշ , երկու ղըշ , հինկ  
ղըշ . մենծութեան ու պիլլօուին կէօրէ : »

— 0 —

169

### ՄԵՌՆԵՍԼԻՆ ԱՊՏԱԿԸ

Ռուսիոյ ժէլիսավէթօկրատ քաղաքին մէջ բը-  
նակեալ կրօսման անուն հարուստ հրէի մը հայրը  
(75 տարեկան) վերջերս կը մեռնի , եւ ըստ սո-  
վորութեան Ռուսիաքնակ հրէից , խախամատու-  
նը լուր ղրկուելով , նոյն գիշերը մինչեւ առաւօտ  
ննջեցելոյն քով աղօթելու համար բարունի մը կը  
կանչուի , որ անմիջապէս կը սկսի իւր պարտա-  
կանութիւնը կատարել : Գիշերուան ժամը ճին ,  
բարունին տեսնելով որ մեռեալը կը շարժի , կը  
դողայ , բայց պարտ էր իւր պաշօնը շարունակել ,  
այն միջոցին ծերունին կամաց կամաց կ'ելլէ դա-  
դաղին մէջ կը նստի , և խօսքը , վախէն լեզուն  
կապկպուած բարունիին ուղղելով ,

— Ծարաւէս կը մարիմ կոր , գոնէ գաւաթ մը  
օղի տուէք ինծի . — կ'ըսէ :

Բարունին առջի բերան ինչ ըսելիքը կը կոր-  
սնցնէ , բայց վերջապէս խելքը գլուխը ժողուե-  
լով — Դուն մեռած մարդ մ'եմ , կը պատասխա-

նէ, ի՞նչպէս կ'ըլլայ որ ծարաւիս, հայտէ նայինք, հանդիստ ըրէ, պառկէ՛, ապա թէ ոչ...

Բարունին չի կրնար խօսքը շարունակել, զի մեռեալ կարծուած ծերունին ոտք ելած այնպիսի շառաչածայն ապտակ մը կ'իջեցնէ խեղճին, որուն արձակած աղաղակէն տնեցիք վեր կը վազեն: Հարկ է ըսել թէ, ծերունին (Էրարժի) ըսուած հիւանդութեան մը ենթարկուելէն 3 օրէ ի վեր մեռեալի պէս պառկած էր:

Տնեցիք, որ քիչ մը առաջ կ'ողբային, կ'ըսկսին ուրախութեան աղաղակ բառնալ, իսկ բարունին անկիւն մը քաշուած, տրտմութեամբ կը մտածէր, մինչեւ որ ծերունւոյն տղան հասնելով ներողութիւն կը խնդրէ և առատօրէն կը մխիթարէ զայն:

— 0 —

170

### ԲԺՇԿԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ ՄԸ

Օճօքառ և Ալօքառ երկու բժշկաց մէջ տաք վիճարանութիւն մը տեղի կ'ունենար: Նոյն պահուն ունկնդրաց մին այս վիճարանութեան ծանր հետեւանքը նշմարելով, դորժը անոյշ տեղը կապելու նպատակաւ հետեւեալ իմաստալից գէպքը պատմեց:

« Երբտասարդ կին մը, ըսաւ, մահուան վը-

տանգի մէջ էր : Իւր ամուսինը յուսահատութե-  
նէն ինչ ընելիքը չգիտնալով՝ ամենէն նշանաւոր  
բժշկաց օգնութեանը կը դիմէ , բայց ի գուր :  
Ի վերջոյ հնդիկ կախարդ մը կը գտնէ , որ մեծ  
համբաւ կը վայելէր իր գործած հրաշքներուն  
համար . կախարդը կ'առաջարկէ յուսահատ ա-  
մուսնոյն՝ իւր տալիք բժժանքը (նուսգա) իւր  
հետ առնուլ , որով պիտի կարողանար մարդկային  
աչաց անտեսանելի ամեն առարկայ յստակօրէն  
որոշել : Խեղճ երիտասարդը իր հարստութեան  
կէսը կուտայ այս թանկագին գանձը ձեռք ձը-  
գելու համար եւ անմիջապէս կը վազէ քաղաքին  
ամենէն համբաւաւոր կարծուած բժշկին դուռը ,  
հոն կը հանէ բժժանքը գրպանէն եւ ի՞նչ տեսնէ  
աղէկ . սպիտակ պատանքի մէջ փաթտուած ո-  
ղորմելի էակներու անվերջ բանակ մը՝ որ ծած-  
կած էր ամբողջ պոպոտայն . ասոնք այն խեղճ հո-  
գիներն էին , զորս սպաննած էր մողական բժիշ-  
կը : Երիտասարդը սարսափահար խոյս կուտայ ան-  
միջապէս՝ սրտովին շնորհակալ ըլլալով կախար-  
դին , որ իւր կինը հողեառի մը չէր յանձնած :  
Այսպէս միշտ բժժանքն ի ձեռին ամենէն հրո-  
շակաւոր բժշկաց դուռն ափ կ'առնու , բայց միշտ  
նոյն ահարկու տեսարանին ականատես՝ սարսա-  
փահար կ'առնէ կը քալէ :

Վերջ ի վերջոյ , քաղքին աննշան մէկ փողոցին  
մէջ համեստ եւ նարեկուկ բժշկի մը տունը ցոյց  
կուտան իրեն . կը համակերպի երիտասարդը , կը

փուլթայ հոն, եւ կրկին իւր մոգական բժժանքն ի ձեռին, կ'սկսի բուրբախքը դիտել. այս անգամ երկու պղտի հոգիներ միայն կը տեսնէ. կը զարնէ բժշկին դուռը, կը ներկայանայ նմա, կ'աղերսէ կը պաղատի, որպէս զի իւր մահամերձ կնոջ դարման մը դռնելի.

«— Բայց զարմանալի բան, կըսէ բժիշկը, այդքան ծանր պարագայի մը մէջ ի՞նչպէս կ'ըլլայ որ իմ մեծանուն պաշտօնակցացս խորհրդակցութեանը չէք գիմած, եւ մանաւանդ աւելի կը զարմանամ թէ ի՞նչպէս կրցաք գալ զիս դռնել:

«— Խնդրեմ, տօղթէօռ, ձեր համեստութիւնն է որ այսպէս խօսեցնել կուտայ. ընդհակառակը, ձեր համբաւն եւ արուեստին գիտակցութիւնն է որ զիս հոս առաջարկեցին:

«— Աւա՛ղ, բարեկամս, ի՞նչպէս կարելի է համբաւ շահած ըլլամ, երբ տակաւին երկու օրէ ի վեր բժշկութիւն կրնեմ հոս, եւ մինչև հիմա երկու հիւանդ միայն տեսած եմ:

«— Եւ զորս արդէն անդիլի աշխարհք զրկած ես, կ'ըսէ երիտասարդը մտովի, եւ կը բաժնուի:

— Արդ, պարոններ, կ'ուզէք Օմէօբատ եղիք, կ'ուզէք Ալօբատ, սա չէ՞ մի քաջագործութիւննիդ, միայն կը զարմանամ որ այդ երիտասարդը մոգական բժժանքի մը պէտք ունեցեր է այս ճշմարտութիւնը տեսնելու համար, մինչդեռ մարդկային պարզ աչօք դժուարին չէ այդ տը-



խուր ճշմարտութեան փորձերուն ականատես  
ըլլալ :

Հարկ չէ ըսել թէ՛ երկու տողթէօուները չը  
կրնայով սլատասխան մը գտնել, ճայներնին կը  
կտրեն ու կ'առնեն կը քայեն :

Թարգմ.

ԲԻԿՄԱԼԵՅՆ

— 0 —

171

### ԿՏՐՈՒԿ ՊԱՏԱՍԻՍԱՆ ՄԸ

Կոմս Բ . . . կը տառապի սաստիկ հիւանդու-  
թեանէ մը, եւ յոյս չ'կայ մահուանէ ազատելուն :

Դագաղաղործ մը, ամեն օր կ'երթայ կուգայ  
եւ կը հարցնէ տան մէկ սպասաւորին՝ իւր տիրոջ  
ի՞նչ վիճակի մէջ լինելը. հարկ չէ ըսել թէ՛ լաւ վի-  
ճակի մէջ՝ գտնուելուն լուրը առած օրը տխրու-  
թեամբ կը մեկնի : Բայց վերջապէս օր մը, ըսպա-  
սաւորն, որ այլ եւս ճանճրացած էր այս երթե-  
կութեանէն՝ կը գոչէ .

— Ա՛ղբար, ի՞նչ կ'ուզես, միշտ կ'երթաս կու-  
գաս :

— Տէրերնիդ մեռա՞ւ, կը հարցնէ դագաղա-  
ղործը անհամբերութեամբ :

— Մեռաւ . . . ո՛չ, ո՛չ, չմեռաւ :

— Բայց բա՛րեկամ, մեռաւ կ'ըսես, չ'մեռաւ կ'ըսես, ո՞ր ըսածիդ հաւատալու է:

— Շիտակը կ'ուզե՞ս, սակարկութեան վրայ եմք, եթէ յարմարի՝ պիտի մեռնի, եթէ չի յարմարի՝ մինչև յաւիտեան պիտի ապրի. օ՛ն ուրեմն, երթաւ բարով, Պ. հետաքրքիր . . .

— օ —

Հ. Ա.

## 172

## ՀԱՅՐ ԵՒ ԴՈՒՍՏՐ

Օրիորդ մը հարցուց իւր հօրը թէ, ի՞նչու համար կը տեսնուի այն ինչ անձին հետ, զոր շատերը խարդախ կ'անուանեն:

— Հոգ մի՛ ըներ դաւակս, պատասխանեց հայրը, բժիշկներն ալ հիւանդաց հետ կը տեսնուին, բայց անոնց ունեցած հիւանդութեանցը չեն մասնակցիր:

— օ —

## 173

## ԵՐԿՈՒ ՕՐԻՈՐԴԻՔ

— Իմացա՞ք, օրիորդ Հրաբիրի մայրը կը պնդէ թէ ինքը տակաւին 35 տարեկան է, մինչդեռ 12 տարեկան թող մը ունի:

— Զարմանալի չէ՛, թերեւս 15 տարեկանս ծընած է, ի՞նչ գիտնանք . . .

— օ —

## 174

## Ի ՊԱՐԱՀԱՆԴԵՍ

Երիտասարդ մը ընկերոջը ցուցնելով կին մը՝  
որ այն պահուն քովերնուն կ'անցնէր .

— Ո՛հ, ի՛նչ պաշտելի եւ խարտեաչ կին մ'է  
սա իւր ոսկեթել մազերով .

— Հը՛մ. այո՛, այդ մազերն առ նուազն 3000  
Փրանքի ապրանք եղած են իրեն .

— Բայց իւր ակռանե՞րը կարծես թէ մարդա-  
րիտներու շարք մ'է .

— Այո՛, ատամնարոյժ ք...ին շինածն է, որ  
երեք տարուան համար ապահոված է .

— Շրջազգեստը ընտիր շղարչ եւ բարեձեւ է .

— Իերձակուհոյն հաշիւն ալ դեռ մաքրու-  
ած չէ .

— Բայց լարո՛ն, կարծեմ անվայել բան մ'է  
կնոջ մը վրայ այս աստիճան շարախօսելը, մա-  
նաւանդ ո զինքը չէք ճանչնար .

— Ընդակառակն զինքը ճանչնալուս համար  
կըսեմ .

— Կը՛անչնաք մի՛... ուրեմն ո՞վ է .

— (Տայ մը) Կի՛նս է... .

175

## ՍԱՊԱՏՈՂ ՄԸ

Իւր մայրը ծեծած լինելու ամբաստանութեամբ  
պատժական ատենին ներկայացուած էր .

Գատաւորը խօսքը՝ ամբաստանելոյն ուղղելով .

— Ի՞նչպէս համարձակեցար այդպիսի յանցանք  
մը գործելու, քու մայրդ որ դքեղ ծներ, սնու-  
ցեր, մեծցուցեր, վերջապէս քեզի գէշութիւն մը  
է ըրեր . . .

Սատողը — Ինձի գէշութիւն չէ ըրեր մի՛ . . .  
Սապա՛ստող, անգամ մը սա կռնկիս նայեցէք  
տէ՛ր գատաւոր, անգամ մը սա կռնկիս նայեցէք  
եւ ըսէ՛ք թէ՛ այս գէշութիւնը ո՞վ է ըրեր ինձի :

— 0 —

176

## ԳԻՆՈՎԻ ՄԸ ՊԱՏԱՍԻՍԱՆ

Սաստիկ արբեալ մը, մեծ փողոցի մէջ պառ-  
կած է : Ոստիկանք կը հասնին եւ կ'սկին մշտել՝  
արթնցնելու համար զինքը : Քիչ մը վերջ կէս մը  
կ'ելլէ կը նստի եւ ,

— Ի՞նչ կ'ուզէք ինէ, կը հարցնէ բարկու-  
թեամբ .

— Ելի՛ր, պահականոց պիտի երթաք :

— Պահականոց մի . . . թամա'մ . . . իմ տունս սըտեղն է, հոն չեմ կրնար կոր երթալ, մինչեւ պահականոց պիտի երթամ, — կրսէ ու վերստին կը փռուի կը քնանայ :

— 0 —

177

### ԵՐԿԱԹՈՒՂԻՈՅ ԱՐԿԱԾ ՄԸ

Շողեկառքը դժէն դուրս կ'ելնէ, և ճամբորդներէն մէկուն թեւը կը կոտրի . սա՛ երկաթուղւոյն տնօրէնին ներկայանալով .

— Պաշտօնեայք իրենց պարտականութեանցը մէջ կը թերանան, կրսէ, ահա այս արկածը առնուչադրութեան արդիւնք է . . . նայեցէ՛ք, մէկ թեւս կոտրեցաւ .

— Մէկ թեւերնիդ կոտրեցա՛ւ, կը պատասխանէ պաշտօնեայն զարմանօք, բայց ներեցէք, սիրելի բարեկամս, ըսել ձեզ թէ՛ այսպիսի պզտիկ բանի մը համար չարժեր ո՞ր բողոքէք, զի դեռ անցեալ ամիս ասոր նման արկած մը պատահելով, 35 ճամբորդք մէկէն մեռան, բայց իրենցմէ եւ ոչ մէկը բերանը բանալով դիտողութիւն մը չ'ըրաւ . . . .

— 0 —

## 178

## ԱՐՁ ԹԷ ՑՈՒԼ

Նիւ - Եօրքի մէջ արժեթղթոց վրայ խաղացողք  
եթէ գնող են՝ ՊէՅՐ (արջ), եւ եթէ վաճառող են  
ՊՈՒԼ (ցուլ) կ'անուանուին եղեր :

Տղայ մը, որուն հայրն ալ խաղացող մ'էր, մօ-  
րը կը հարցնէ թէ, — Հայրս ա՞րջ է թէ ցուլ :

— Լաւ չեմ գիտեր, կը պատասխանէ մայրի-  
կը, թէ ո՞րն է . զայս միայն գիտեմ թէ, կատար-  
եալ գազան մ'է նա . . . :

— 0 —

## 179

## ԵՐԱՋ ՄԸ

Ժամանակաւ լուսարար մը, երազին մէջ տեսեր  
է երկու բարեպաշտ խաթուններ, որք հետեւեալ  
կերպով կ'աղօթեն եղեր :

— Արարիչ հիրեշտակաց եւ մարդկան եւ ամե-  
նայն էղելոց, » կէնսինէ 'տու, սա առջեւի սրբան  
կայնող էրկան կէնճը վո՞վ է :

— Օղորմեա ինձ տէր, դի հիւանդ էմ ես, »  
մեղայ, չի ճանչցա՞ր, անճրկածենց նոր առած  
հարսն է :

— Իրա՞ն կըսես կոր, «ի խնդիր մորուեայ օչ-  
խարի» քուրո՞ւկ, բէք պօլլու է .

— Քաւե՛ա զանօրէնութիւնս իմ, » տեսնողները՝  
սանկ պիչիմ մը բան է կըսեն կոր .

— Օղորմեա քո արարածոյ, » մե՛ղք տգուն .  
«եւ ինձ բազմամեղիս .» հիչ չէ վայլեր .

— Ա՛խ քուրուկ . «հայ էրկնաւոր Ասված  
ճիշմարիտ» հիմա վայլումը նայող կա՞յ մի, փարա-  
յին կը նային .

— Առաւել լուա՛ զիս, » ըռահաթ քառսուն  
տարու կայ . «մեղք իմ առջի իմ են ամենայն ժամ .»  
ան չէ ամա՛ Մամանուչ խաթունը թողը կար-  
գե՞ց .

— Մեղա՛ էրկինս եւ առաջի, » անճարակին է  
մնացեր .

— Բէք աղւոր ժամեր կըլլայ կոր . «ա՛խ, մաք-  
ե՛ա զիս վերստին ասվածային ըրով քով .

— Որ խոնարհեցար ՚ի հարեական ծոցոյ .» պօլը  
սիրեմ, թողանս, Անտիկիս ծանը անտար խալա-  
պալըխին մէջէն կը ճաշնամ կոր .

— Խէրիկը տեսնաս, «Զանօրէնութիւնս իմ ես  
ինձէն կիտեմ .» փեսայ ընես . «եւ մեղք իմ առա-  
ջի քո .» ա՛խ աչկս էլլայ, իմ թողնիկս ալ օղջ մնար  
նէ՛ հիմա պիւլպիւլ պիտի կըրեէր ,

— Յողեա իս միշկաւ եւ սուրբ էղեց, » խա-  
թրա միւրվէթ, բէք էրկան կը բռնեն կոր . կրա-

կին վրայ խաշլամա՞ մի տրեր ես, չօւպա՞ մը ու-  
նիս էփելիք,

— Լուա եւ քան զծուն սպիտակ էղեւ .» ան  
չէ ամա, օղջում պերի՞ն .

— Փռկել զմեզ 'ի փորձութենէ .» պէսպէլլի  
ժամկոչը թապախի էլած է տէ մուցած է :

— Ա'խ տո'ւր զօրութին ծառայի քո .» տիօր  
առաքելոց կը պերեն .

— Քուրուկ, կտոր մը անդին ալ չեն էրթար  
քի, էրկրպագութին մը ընես . նըտեղի կէնը  
տիրէկի պէս կայներ է . էկածէն պէրի էրկրպա-  
գութին մը պիլէ չըբաւ :

— Խուռսէն թող կուտա՞ քի ծռի . «այ փըր-  
եա' ի շարէ» մէկն ալ իմ հարսս չէ՞ .

— Տեղերնին մնան, «թո'ղ մեղ զպարտիս մեր .»  
տէր օղորմեաին վախիթը պիլէ չէն կրնար կոր  
նստիլ .

— Զի դու միսիթարեցեր դիս,» աս ինչէ՞նի ալ  
լավանտա քսուեր էն . խունկին հոտէն կարօտ  
մնացինք .

— Զառաւօտու դաղօթս,» աս շարթու օր մը,  
«եւ դրառաւոր պաշտօնս» մեղի հրամմեցէք :

— Սէպէպ մը չըլայ նէ՛ «յաւխտեանս յաւի-  
տենից ամէն» կուգանք . Գ .



## 180

## ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄՔ

— Օվրեստես աղա, իմացայ որ աղջիկդ Շամշազրամ աղային տղուն նշաներ ես. շիտակը զարմացայ, միանգամայն ցաւեցայ թէ ի՛նչպէս վքեղ անպատուող, անանկ խեռ բնաւորութիւն մը ունեցող տղու մը կուգես տալ աղջիկդ.

— Դուն ատանկ գիտես, ես անոր անանկ գոքանչ մը պիտի տամ, որ կեանքին մէջ այլ եւս քացախի կարօտ չպիտի ըլլայ:

— Անանկ է նէ՛ Աստուած թամամին հասցնէ:

— 0 —

## 181

## ՏԱՆ ՄԸ ՄԷՉ

Մայր եւ որդի.

— Օ՛ղլում, ութօրէնքին հինկը պիտի թամամցունես քի աղջկանը օտկը կապեր էս, աս քա՞նի առջի պսակներ, օխտը շարթուներ, լքսաւորիչներ Ս. Սերդիսներ ու անճարակներ անցան, տուն տահա չես կարգուիր կոր, ամծթ է նէ՞. հէմ մեղք է:

— Ի՞նչ ընեմ, մա՛րիկ, թամամ քի օտկի կել-  
լամ կոր նէ՝ գործս չարբըխ կ'երթայ կոր :

— Քեզի պան մը ըսե՞մ, տուն էրէսի ճուրով  
տեղդ նստէ, ան քի հիմակուց տեղէդ էրերալովդ  
գործդ չարբըխ կ'երթայ կոր, վաղը ճամբայ էլլաս  
կարգուիս նէ՝ հէմէն տէվրի-տայիմ պիտի կաս,  
էյ ես աս տարիքիս մէջ անգամալուծ նայելու կա-  
րողութիւն չունիմ :

— 0 —

## 182

## ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՄԸ ԱՌԹԻԻ

Կը հարցուի ծերունի հօր մը.

— Քանի՞ զաւակ ունիս :

— Քանի՞ զաւակ ունի՛մ . . . (մատներուն վրայ  
կ'սկսի համրել, մրմուալով) Օհաննէսը՝ մէկ . Մեղ-  
րինէն՝ երկուք, Անիկտոսը՝ իրեք, Վարդանը՝ չորս,  
Արուսը՝ հինգ . հինգ զաւակ պա՛րոն :

Պաշտօնեայն գրիչը ձեռք կառնու եւ պիտի  
դրէ . երբ յանկարծ ծերունին նորա թեւը բռնե-  
լով,

— Պարո՛ն մոռցայ . մէյ մ'ալ Բուրմիլնէն՝ վեց :

Պաշտօնեայն գրիչը կը թողու եւ — է՛յ սանկ  
քէօշէ-պուճախ աղէկ մը փնտռէիր . տահա մնա-  
ցած չ'ըլլայ . . . — կըսէ :

— 0 —

## 183

## ԵՐԵՒԱԿԱՅԻՆ ԹԻՒՆ

Քաղղատոմսեր ունեցող ընտանիքներէ ոմանք , մէկ կամ երկու ամիսը անդամ մը , վիճակահանութեանց քաշուելու ժամանակին մտերը , կարծես ի ձեռին ունենալով անպատճառ առաջին պարգեւը իրենց շահելու մասին ասպահովագիր մը , կ'սկսին ամեն գործերնին կարգի դնել , և այլ եւս երջանիկ ապրելու նոր դարագլուխ մը կ'երևակայեն :

Զորօրինակ , տիկին կիթառիկ միտքը դրած է — որովհետև առաջին պարգեւը իւր ունեցած թիւը պիտի շահի , — Փարիզէն շրջագրեստներ , գլխարկներ բերել տալ , քարուկիր տուներ եւ ծովեզերեայ ամառանոցներ դնել , սպասուհի , խոհարար , ցամաքը երկձի կառք մը և ծովուն վըրայ քառաթի մակոյկ մը ունենալ . ուստի իւր ամուսնոյն Մովկիմ աղային իրիկուն մը կը հարցնէ .

— Մովկիմ աղա , Համպուրկի վիճակահանութեան քաշուելուն քանի՞ օր մնաց :

— Ալաֆրանկա Փետրվար Ղին պիտի սկսի քաշուիլ :

— Ես հիմա ալաֆրանկային հաշիւը ի՞նչպէս պիտի դտնամ :

— Տէր ողորմեա , ի՞նչպէս չես կրնար դտնալ , քանի որ ալաֆրանկայէն մազիւ շափ չես շեղիր :

— Իրաւ, Մովկիմ աղա, կատակը մէկդի :

— Ուրեմն 5-6 օր մնաց Համպուրկին, բայց այս հինգերորդ անգամն ըլլալուն, առաջին պարգևը 50,000 Ֆրանք է, Սաքսօնեայինն ալ, որ երկու շաբաթ վերջը պիտի քաշուի, առաջին պարգևը 80,000 Ֆրանք է. ընդ ամենը 130,000 Ֆրանք :

— Թո՛ղ այնչափ ըլլայ, քի՛չ բան է . . . աղւոր տուն մը կ'առնենք, քանի մը հատ ալ կալուած գնելով՝ վարդի պէս կ'ապրինք :

— Ես պատրաստ կալուած չ'եմ առներ, ըլլալէն ետքը, ուղածիս պէս պիտի շինել տամ :

— Զը մոռնամ ըսելու, լուացատունը խոհանոցէն զատ ըլլայ. մէկ մ'ալ, գաւիթը մութ չ'ըլլայ :

— Քեզի բան մը ըսե՛մ, կիթառիկ, փոխանակ սիրտ հատցունելով տուն շինելու, աղւոր բասած մը առնենք, աղէկ չ'ըլլար :

— Բայց սիրելիս, բասածին մէջ կը նստուի՞. եթէ ինձ կը հարցնես, Պօղիկտոս աղայենք տուներնին պիտի ծախեն եղեր, հիմակուց հարցուր փնտռէ՛, թէ որ աժան բան մ'է՛ ձեռքէ չենք փախցներ :

— Հարիւր հատ ալ «Վիլ տը Բառի»ի թուղթ առնելու է որ, անոր վիճակահանութենէն շահելիքովնիս ալ կալուած աւելցնենք :

— Շատ աղէկ կ'ըլլայ :

— Անցած օր ծաղկէ փողոցին մէջ մէկ կարգի վրայ ութը հատ խոշոր տուներ տեսայ. շիտակը,

զմայլեցայ մնացի . ի՞նչ կուզէ ըլլայ, անպատճառ  
զանոնք պիտի գնեմ :

— Մատամ ժօպիենցմէ՝ ամեն եղանակի շրջազ-  
գեստները Բարիզի ո՞ր վաճառատունէն բերել  
տալերնին հասկնալով, մենք ալ անկէց բերել  
կուտանք :

— Ի՞նչ հարկ կայ անոր ասոր բերան ծռելու,  
Տը Միլվիլին ասլրանք տուող Բարիզի մեծ Ֆապ-  
րիգային հետ ուղղակի բանակցութեան կը մըտ-  
նեմ և պէտք ունեցածներդ բերել կուտամ :

— Մեզ այցելելիք հիւրերը ըստ պատշաճի  
մեծարելու համար՝ Գաղղիացի սիվիլիզէ շնորհքով  
երիտասարդ մը բռնելու է :

— Նմանապէս տան բարեկարգութեանը հրս-  
կելու համար բանգէտ եւ սիվիլիզէ մանկամարդ  
Ֆրանսուհի մը բերել տալու է :

— Սիրելիս, հիմակուց կիմացնեմ քեզ թէ՛  
սա տիկին Փարուհիէնց եւ մատամ Սյգիսէէնց  
հետ մէկ մ'ալ չպիտի տեսնուինք :

— Արդէն ասկէ ետքը այն կարգի անձանց հետ  
տեսնուելը մեր պատուոյն չի վայլեր :

Վերջապէս, այր եւ կին իրենց երեւակայական  
հարստութիւնը ա՛յն աստիճանի կը հասցնեն, որ  
հռչակաւոր Պ. Ռոչիլտի հարստութեան հետ մըր-  
ցել կը յանդգնին . բայց աւա՛ղ, ամեն ատենուան  
պէս այս անգամ ալ ուրախութիւննին փորերնին  
կը մնայ, տեսնելով որ ունեցած բաղդատումսե-  
րուն թիւերը աճօ՞ւն անգամ չի դարնելով, բոլո-  
րովին ոչնչացած և դրամներն ալ վրայ տուած  
են . . .

## 184

## ԽՈՐԱՄԱՆԿ ԳԻՒՂԱՑԻ ՄԸ

Խռովութեան մը միջոցին 'ի Գաղիա, գիւղացիք կը կողոպտեն հարուստ աղնուակնի մը տունը. Ասոնցմէ մին արծաթեղեններով լի պարկ մը կը գտնէ, սակայն իրաւամբ վախնալով թէ մի' գուցէ ձեռքէն յափշտակեն, հետեւեալ հնարքը 'ի գործ կը գնէ իւր գանձը անվնաս ազատելու համար:

Անմիջապէս խոհանոց կը վազէ, սան մը կառնու, որուն մէջ կը տեղաւորէ իւր գողոնը եւ բերանը գոցելով՝ սանը գլուխը կառնէ եւ աճապարանօք կանցնի բազմութեան մէջէն:

Տեսնողները կ'սկսին ծաղրել գիւղացւոյն անխելքութիւնը, ըսելով թէ՝ «այ բան չգտաւ, երկու դահեկանի մսին աչք է տնկեր, այդ ալ գողնալիք չբա՞ն է.» ամենեւին չտարակուսելով թէ այս ճարտար եղանակաւ գանձի մը կը տիրանար: Իսկ գիւղացին անտարբերութեամբ կը սլատասխանէր. — Ի՞նչ ընեմ եղբարք, իմ բաժինս ալ աս խաչած մսին կտորն է եղեր, անոր ալ շնորհակալ եմ:»

## 185

## ՀԱՄԵՂ ԿԱՐԿԱՆԴԱԿ ՄԸ

Տեսարանն է Ֆրանսայի Զ... քաղաքին մէջ, որուն կանայք նշանաւոր են իրենց ազնուականութեամբ:

Իրիկուն մը, այս կարգի տիկիններէ մէկ քանին, Կ... Մարքիզին խաղ մը ընելու համար իրենց մէջ միաբանելով՝ նորա անկողնոյն մէջ մէկ քանի քիօկրամ ալիւր կը զրուեն:

Հարկ չէ ըսել թէ՛ երբ Մարքիզը իրիկունը անկողին կը մտնէ՛ վրան գլուխը ալիւրը թաթխուելով, շաղացականէ մը աւելի կը ճերմկնայ. բայց առանց խռովելու անկողնէն կ'ընէ, վերմակը, սաւանը եւ բարձերը մաքրել տալէ ետքը, ասոր փոխարէն խաղ մ'ալ ինքն կը մտածէ. Քանի մը օր ետքը, այն տիկինները, որոց վրայ կասկած ունէր՝ իրիկուն մը թէյի կը հրաւիրէ, շատ պատիւներ կընէ անոնց, շատ մը քաղցրաւենիներ կը հրամայնէ, բայց ամենուն ուշադրութիւնը կենդրոնացած է գեղեցիկ կարկանդակի մը վրայ, որ իւր ոսկեղօծեալ չքնաղ տեսքով եւ անոյշ հստովն՝ ամենուն աչքը յինքն կը հրաւիրէր: Վերջապէս տիկնայք կը ճաշակեն զայն ալ եւ խիստ համեղ կը գտնեն:

— Խիստ համով էր այս կարկանդակն, այնպէս

չէ՞ ազնիւ տիկնայք, կըսէ այն ատեն Մարգիղը,  
խնդալով:

— Այո՛, այո՛, սքանչելի՛ էր, կը ձայնեն տիկ-  
նայք միաբերան:

— Բայց գիտէ՞ք ասոր այսչափ համեղ լինելուն  
պատճառը:

— Դժբաղդարար ոչ...

— Որովհետեւ ասոր ալիւրը ձեզմէ ստացած  
եմ...

Այս յայտարարութեան վրայ երեւակայելու  
է տիկնանց ապուշ դէմքն եւ հանած ժխորը:

— 0 —

## 186

### ԿԱՐՃ ՃՍՄԲԱՆ

— Հոս եկու պարո՛ն Կապոս, ըսաւ Պարոն մը  
իւր ապուշ սպասաւորին, ուրիշ կերպ չպիտի կըր-  
նաս խօսք հասկնալ, սա սեղանը հոս բեր, (Կապոս  
սեղանը կը մօտեցնէ) կաւիճն ալ ինձ տո՛ւր եւ  
մտիկ ըրէ:

Այս հրամանն ալ կատարուելէ ետքը Պարոնը  
կաւիճով սեղանին վրայ կը գծէ, եւ կը շարու-  
նակէ:

— Դիցուք թէ սա մեր տունն է. աս ալ դու-  
ռըն է. դունէն դուրս ելա՞ր մի...



— Տակաւին ձեր քովն եմ, տէր իմ:

— Ապո՛ւշ, մտիկ ըրէ. հիմա սա փողոցէն գացիր, դարձար, քիչ մ'ալ գացիր, սա անկիւնի դռնէն ներս կը մտնես, պարոն Մոնոնիկը հո՞ս է, կը հարցնես . . . :

— Բայց տէ՛ր իմ, կընդմիջէ ապուշ սպասաւորը սեղանին վրայ ցատկելով, ասանկ կարճ ճամբայ մը գիտէք նէ ի՞նչու երկու ժամ սիրտ կը հատցնէք.» եւ սեղանին վրայ կ'սկսի քայել. քիչ մը վերջը կանգ առնելով. «պարոն Մոնոնիկը հո՞ս է» կը պուռայ: Պատասխան չի կայ, հարցումը կը կրկնէ, դարձեալ պատասխան չիկայ. ուստի սեղանէն վար կը ցատկէ եւ տիրոջը մտենալով, որ մօրուքը բռնած կը մտածէր այս աստիճան ապուշութեան վրայ.

— Տէր իմ, տունը մարդ չիկայ եղեր, — կըսէ ու սենեկէն դուրս կ'ելնէ: Հ. Ա.

— 0 —

187

### ԴԵՐՁԱԿ ՄԸ

Դերձակ մը բարի կլին մը ունէր, բայց ինքը ընտրտ մարդ մը ըլլալով, շատ անգամ իւր կլինը կը ծեծէր. դրացիք միջամտելով դժուարաւ կազատէին խեղճը անգուժ մարդուն ձեռքէն:

Օր մը դրացիներէն մէկը դերձակը յանդիմանեց.

— Չե՞ս ամչնար պէ մարդ. Աստուծմէ չե՞ս վախնար, առ ամեն իրիկուն է, ամեն բան չափ մը ունի, պարէ պիտի ծեծես նէ՝ չափով ծեծէ,  
— Գուն հոգ մի՛ ըներ պարո՛ն աղա, ես իմ ըրածս գիտեմ, պատասխանեց դերձակը ծաղրածու եղանակաւ, առանց չափի չեմ ծեծեր, խախանութիս էնտադէն կը գործածեմ կոր . . .

— 0 —

188

### ԿԾԾԻ ԸՐ ՇՈՒՅԼՈՒԹԻՒՆԸ

Կծծի մը օր մը իւր կնոջը հետ հանրակառքով կը ճամբորդէր, ասոնց դէմը նստած էին երեք անձինք, զորս կծծին կը ճանչնար, եւ որոց երկուքին չ՛ծխելէն ալ տեղեակ էր. ուստի բարեպատեհ առիթ կը համարի անոնց յարգանք մը ըրած ըլլալու՝ կամ, սանկ ըսենք, իւր կծծի չըլլալը հաստատելու մտօք՝ ծխատուփը հանելով այն երկու պարոններուն սիկար հրամցնել, որոցմէ, «Շնորհակալ եմք, չեմք գործածեր» պատասխանը առնելէն՝ ծխատուփը գրպանը կը դնէ. այն միջոցին կինը կծծիին ականջէն կամացուկ մը կը հարցնէ թէ՛ ի՞նչու համար երրորդ պարոնին ալ չէր հրամցուներ,

— Լուէ՛, կըսէ կծծին, նոյն եղանակաւ. ես գիտեմ թէ անիկայ կը ծխէ . . .

— 0 —

## 189

## ՑԱՆԻՉԻ(\*) ՀԱՐՈՒԱԾՆԵՐԸ

Պրանսայի ազգային ժողովոյն մէջ ամուսնալուծման օրինաց համար վերջին որոշումը տրուելէն քանի մը օր առաջ, ամեն տեղ այս փափուկ խնդիրն խորին ուշադրութեան եւ սաստիկ վիճարանութեանց առարկայ եղած էր, Իրիկուն մը, բարեկամական ակմբի մը մէջ, խօսքը սոյն նիւթին վրայ դառնալով, հոն դտնուող արբայ մը հետեւեալը կը պատմէ.

«Ալճէրիոյ նորակազմ թեմերէն մէկուն տեղապահ եղած ատենս, օր մը երէցներէս միոյն կը ներկայանան երկու դժտեալ այր եւ կին, որք միաձայն հաւանութեամբ ամուսնալուծութիւն կը խնդրեն: — Անշուշտ ամուսնալուծութեան մէկ հնարը կայ, կըսէ այրը: — Պ. Երէց, կը յաւելու կինը, ինչպէս որ դմեղ պսակեցիր, այնպէս ալ կրնաս պսակնիս քակել:»

«Բայց հակառակ երէցին համոզմանց եւ մերժմանց, երկուքն ալ անդրդուելի կը մնան իրենց որոշման մէջ. ուստի երէցը ճարահատեալ՝ «Վաղը եկէ՛ք, եթէ դարձեալ պնդէք՝ բան մը կ'ընենք», ըսելով կը ճամբէ:

(\*) Զուր սրսկելո գործիք, Տաճկերէն կէտարտարան բառին կը համապատասխանէ:

«Հետեւեալ օրը գժտեալ այր եւ կին վերստին ներկայացան երէցին, որ զիս այն պահուն իբր օգնական կոչած էր, դանոնք տարաւ աւանդատունը եւ քովէ քով ի ծունր իջեցնել տուաւ, ապա ձեռքն առաւ օրհնած ջուր սրսկելու խոշոր և ծանր պղնձեայ ցանիչ մը՝ ու խօսքն առ այրն ուղղելով, հարցուց. — Վերջնապէս որոշած ես կինդ թողուլ: « — Այո՛, պարոն Երէց», — Դու ալ, տիկին, վերջնապէս որոշած ես այրդ թողուլ: « — Այո՛, պարոն Երէց»:

« — Խիստ բարի, պատասխանեց Երէցը, եւ սկսաւ արտասանել հետեւեալ աղօթքը:

«ՅԱՆՈՒՆ ՀՕՐ, (Յանիչի թեթեւ հարուած մը իջեցուց էրկանը գլխուն.) ԵՒ ՈՐԴԻՈՅ, (նոյնպէս հարուած մ'ալ կնկանը գլխուն.) ԵՒ ՀՈԴԻՈՅՆ, (ցանիչի քիչ մը զօրեղ հարուած էրկանը գլխուն.) ՍՐԲՈՅ, (նոյնպէս հարուած [մը կնկանը գլխուն), ՀԱՅՐ ՄԵՐ, (աւելի զօրաւոր հարուած մը էրկանը գլխուն.) ՈՐ ՅԵՐԿԻՆՍ ԵՄ, (նոյնպէս կնկանը գլխուն.) ՍՈՒՐԲ ԵՂԻՑԻ ԱՆՈՒՆ ՔՈ... բայց որովհետեւ հարուածները հետզհետէ կը սաստկանային, այր եւ կին չը կրնալով ցաւուն դիմանալ, հարցուցին.

« — Պարոն Երէց, արդեօք այս աղօթքն երկա՞ր պիտի տևէ:

« — Վերջը յայտնի կըլլայ, պատասխանեց Երէցը, ցանիչը բարձրացնելով:

« — Բայց վերջը կ'ըսես նէ , ե՞րբ յայտնի պիտի ըլլայ :

« — Մինչեւ որ երկու քէդ մէկը այս ցանիչի հարուածովը մեռցնեմ :

« — Ի՞նչ , մեռցնել մի՞ , գոչեցին միաբերան .

« — Ի՞նչ ընեմ որդեակք , պսակ քակելու համար ասկէց դատ աղօթք չը դիտեմ . . .

« Այս յայտարարութեան վրայ երկու դժտեալ ամուսինք հաշտուեցան եւ ելան գացին . »

Թարգմ.

Ա .

— 0 —

190

### ԹԻԿՆԱՊԱՀ ՄԸ

Լուի ԺԴրդի թիկնապահներէն մին , ժամացոյցի ոսկի շղթայ մը ընծայ ընդունեց , բայց չը կրնալով ժամացոյց մը գնելու չափ դրամ հաւաքել , շղթային ծայրը հրացանի գնտակ մը անցուց , զոր միշտ գրպանը կը պահէր : Թափաւորը թիկնապահին փառասիրութիւնը դիտնալով , դայն ծայր ընելու համար հարցուց թէ , — Ժամը քանի՞ն է :

— Տէր արքայ , ըսաւ թիկնապահը , իմ ժամացոյցս ժամանակ չը ցուցնէր , այլ ինձ կը յիշեցնէ թէ ամեն ժամ Ձեր վեհափառութեան համար կեանքս տալու պատրաստ լինելու եմ :

Թագաւորը այս պատասխանէն այնքան դու՛  
 եղաւ, որ իւր աղամանդազարդ ժամացոյցը ա-  
 նոր շնորհեց :

— 0 —

191

## ՍԱՓՐԻՉ ՄԸ

Տօգթէօու մը, իւր խնամոցը յանձնուած հիւ-  
 անդ է մը արիւն առնելու կամ չառնելու վերջ-  
 նական որոշում մը տալու համար իւր մէկ պաշ-  
 տօնակցին հետ առանձին սենեկի մը մէջ կը խոր-  
 հրդակցէր, այն միջոցին սափրիչն ալ արիւն առ-  
 նելիք գործիքներովը կազմ եւ պատրաստ՝ հիւան-  
 դին սնարը նստած կ'ըսպասէր : Մէկ երկու ժա-  
 մեր անցան, եւ կերեւի թէ բժիշկիք չէին կրցած  
 տակաւին իրենց մէջ համաձայնիլ . բայց սափրի-  
 չը տեսնելով որ հիւանդը հետզհետէ կը ծանրա-  
 նայ, կամացուկ մը գործիքները կը հաւաքէ եւ  
 կը պատրաստուի մեկնիլ : Հիւանդին տէրը փո-  
 դոցին դրանը մէջ անոր ետեւէն կը հասնի, եւ  
 « ո՛ւր կ'երթաք » կը հարցնէ :

— Զգեցէք որ երթամ, կը պատասխանէ սափ-  
 րիչը, անոնք մինչեւ որ իրար համոզեն՝ հիւան-  
 դը ասդին պիտի մեռնի . թողէ՛ք երթամ որ ինձի  
 ալ բան մը չը պլշկի . . . .

## 192

## ՀԱՐՈՒՍՏԻ ՀԻՒԱՆԳՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ԱՆՈՐ ԴԱՐՄԱՆԸ

Ա.

Ֆ. Մ. Մարքիզուհին, որ քսան եւ հինգ տարեկան, գեղեցիկ, այրի եւ հարիւր հազար Քլորանքի տարեկան եկամուտ, անձնիշխան, ազատ, վերջապէս աշխարհիս վրայ ամենեւին հոգ ընելու բան մը չունէր, հիւանդ էր, կամ լաւ եւս այնպէս ըլլալ կը կարծէր, թէպէտ եւ այնպէս չէր. Բժիշկք 'ի զուր խորհրդակցութեան կը հրաւիրուէին, իրենցմէ եւ ոչ մին Մարքիզուհւոյն հիւանդութեանը խելք չկրցաւ հասցնել, եւ գերադոյն հնարքը Գերմանացի տօքթէօր Միւլլէրին մնաց, որ գիշեր մը ժամը 2ին հասաւ, ուր այն միջոցին բժիշկք ալ ներկայ էին. Արագօրէն փոխանակեալ ակնարկ մը բժշկաց իւրաքանչիւրն ալ համոզեց թէ՛ ամենքն ալ իրենց կարծիքը փոխած չեն, թէ Մարքիզուհւոյն հիւանդութիւնը, տժգնութիւնը անհասկնալի ըլլալուն՝ անյոյս էր.

Մարքիզուհին, որ բժշկաց այս կարծիքն շատնց կռահած էր, փութաց Տօքթէօր Միւլլէրի ընդառաջելի՝ հատկիւն ձայնիւ մրմնջելով,

— Ա՛հ, Տէօքթէօր, դիս պիտի փրկէ՛ք.

— Կը յուսամ, պատասխանեց Միւլլէր եղական

դիմաժռութեամբ, որ կրնար զանազան կերպով մեկնուիլ :

— Կը հաճի՞ք որ անմիջապէս ներքնասենեակս ելնենք :

— Անօդուտ է, տիկին Մարքիզուհի, պէտք չէ խուճապել. հոս շատ աղէկ ենք. թող խօսակցութիւնը շարունակուի կատարելապէս՝ որպէս թէ ես հոս եղած չըլլամ :

— Բայց, Տօ՛քթէօր, հիւանդութիւնս . . . . եւ այս խորհրդակցութիւնը . . .

— Աներկիւղ եղիք, Մարքիզուհի, ես զձեզ չեմ մտնար. բաղկերակնիդ կը նայիմ :

Եւ նորա բազուկը բռնելով՝ քովիկը նստելէն ետքը, խնդրեց իւր պաշտօնակիցներէն որ իրենց կարծիքը յայտնեն :

Երբ ամենքն ալ իրենց միեւնոյն կարծիքը բացատրեցին հպարտանօք, Տօքթէօր Միւլլէր պատասխանեց երկայն քարոզութեամբ մը, յոյժ սգւոր, թէպէտեւ աատիկ մթամած, եւ որ կը թուէր եզրակացնել զատենարանն պարզ բժշկի մը տեղ անցնիլ կամենալ քան զմիւս բժիշկներն և նոցա համակարծիք լինել :

Ընդ այս Մարքիզուհին եւս քան զեւս յոյսն 'ի դերեւ ելած :

— Այլ սակայն, տօգթէօ՛ր, դոչեց, հրաշալի բժշկական դարմանում մը ընելնիդ կը պատմեն :

— Բայց տիկին Մարքիզուհի, ըսաւ ներկայից մին, Տօքթէօր Միւլլէրն, այժմ բացատրեց ինքնին



այն դադտնիքներն, — եթէ երբէք դադտնիքներ  
կան, — տօքթէօրը իւր հին դպրոցը պաշտօնակցա-  
ցը պէս այն դրուժեան կը հետեւի, զոր մեկնե-  
լու համար տեսակ մը լատինական առած կը գոր-  
ծածէին, կարծեմ սապէս,

«Ս.ռ.ողջ միտք մը յառողջ մարմնոյ» :

— Ճիշդ . Պ . դերկամս . հեզնեց ներբամտօրէն  
տօքթէօրն, ճիշդ է, սակայն բաց 'ի երկրորդ  
բառէն :

— «Միտք . . . »

— Որ ըսել է իոհականութիւն, եւ որ ձեր  
ծառային համար յոյժ նիւթապաշտական դաս մը  
կը թողու . միայն թէ անոր տեղ դրէք «հողի»  
բառը, վասն զի իմ խնամած բանս հողի՛ն է .

— Ուրեմն տօքթէօր, ձայնեց Մարքիզուհին,  
ձեր այդ հանապազօրեայ ըրած բաները պարզա-  
պէս քրիստոնէական դեղն է .

— Ճշդիւ, մարքիզուհի, ես շատ գրադարա-  
նից փոշիները թո՛թուած եմ, դիտական հալոցին  
մէջ հազարաւոր հատորներ նետած, եւ այն ան-  
հետեւի նիւթերու կոյտէն անոր խորը մնացած է  
մի միայն ոսկւոյ մասնիկ մը . . . ՍԻԵՏԱՐԱՆԸ, մի  
միայն պարբերութիւն մը . . . «ՍԻԲՍԱՋԻՒՔ ԶՄԻՄ-  
ԵԱՆՅ» : Այո՛, պարոնայք . ամեն ինչ ի նմա է .  
անձամբ անձին բժշկելու համար սկսեցէք նախ  
դայլս բժշկել . մինչ տգիտութեան, թշուառու-  
թեան եւ նախանձու ախտերը կան՝ յաճախ պի-  
տի պատահի արհամարհանքն, անգործութիւնն

եւ եսութիւնը . ահա ասոնք են մարդկային հիւանդութեանց գլխաւորներն , իսկ ասոնց տիեզերական համադրեղն է «Սիրեցէք զմիմեանս» .

— Բայց այս դրութիւն մը չէ՛ , դոչեց բժիշկ մը , այլ քարոզ մը .

Եւ աւելցուցին ոմանք , — Այս եղբայրական սկզբունքներուն վսեմութիւնը ծափահարելով հանդերձ , չպիտի կրնանք հաւատալ թէ այդչափ ամենազօրաւոր լինի ի դեղահատն :

— Ճշմարիտ է , բայց եւ այնպէս եթէ պէտք լինի՝ կրնամ մէկէ աւելի օրինակներով ապացուցանել .

— Լռեցէ՛ք , ընդմիջեց Մարքիզուհին աժիտութիւ , տօքթօրը այժմ պատմութիւն մը պիտի պատմէ մեզի . թերեւս տիկին տը Գին . ա,սօրուան կանանց մատաղագունին , որ ամեն ուրեք կը հռչակէ թէ՛ ասկէ քանի մը տարիներ առաջ , գրեթէ մեռեալ ՚ի կեանս , դուք՝ սանկ ըսենք , յարութիւն առնել տուիք Ղազարի աղջկան նրման :

— Չպիտի կրնայի ադ կէ աւելի համոզիչ ապացոյց մը ընտրել , եւ եթէ կը հաճիք արտօնել . . .

— Աւելին կընեմ , կադաչե՛մ :

Իսկոյն ասթօռները տօքթօրին շուրջը բոլորուեցան , ձայները լռեցին և ունկնդիր եղան :

Բ.

— Մարքիզուհւոյն ականարկած ծաղկահաս կիներն , ըսաւ Տօքթէօռ Միւլլէր , տիկին տը Գ . . . .  
այն ատեն՝ վեշտասանամեայ էր եւ կը կոչուէր

Էտիթ վան — Օվէն, Հոլանտացի անուանի դրամատիրոջ աղջիկն էր այն. այս մարդուն անհատնում հարստութիւնն ու նահապետական բարեւորութիւնն տիեզերահռչակ եղած էր: Վաճառականային գուտ իրաւախոհութեամբ մը ամուսնացած՝ եւ գրեթէ իսկոյն այրի մնացած վան — Օվէն, իւր կենացը մէջ միակ ուրախութիւն, միակ բանաստեղծութիւն, միակ սէր մը ունեցած էր... իւր աղջիկը: Կատարեալ բարեբաստութեան իտէականն միայն հարստութեան տիրանալուն մէջ երեւակայելով՝ մեր մարդուկը մարմինըն ու հոգին սպաններ էր, որպէս զի Էտիթ եւրոպիոյ ամենափարթամ ժառանգորդուհիներէն մին լինի: Երբ սոյն երազն իրագործուեցաւ, վան — Օվէն միամտաբար մտածեց որ աղջկանց ամենէն երջանկադոյնը պիտի լինի իւր աղջիկը, զի միլիոններ ուներ: Բայց յանկարծ, շեմ գիտեր ո՞րպիսի յաղթական գործառնութենէ մը ետքը վան — Օվէնի վրայ յուսահատութիւն և ապշութիւն մը կը տիրէ. զի իւր աղջիկը, Էտիթ, տըրտում պարտասեալ... հիւանդ կըլլայ:

«Հոլանտացի կրէսոսի ապարանքը կը թափին ամբողջ բժշկական գիտութիւններն, գիտական բանախօսութիւնք անդ իրարու կը զարնուին, (ամենքն ալ նոյն բնութիւնն, նոյն յատկութիւնն ունեցող գիտնականներ...) հարիւրաւոր անհաճոյ հարցումներ յուճապէտս կը յագնեցունեն մանկամարդ հիւանդը եւ ՚ի վերջոյ, միաձայն հաւանութեամբ կը յայտարարեն թէ՛ ախտը անհասկանալի, ծածկախորհուրդ եւ անբուժելի է:

«Այն ատեն ահա ինձ կը դիմուի. ուստի անմիջապէս կը վազեմ:

Երբ հիւանդին գտնուած սենեկին դուռը հա-

սայ, «Տօքթէօ՛ր, աղաղակեց հայրը արտասուալից  
աչօք բաղկացս մէջնեռուով, տօքթէ՛օր, աղջիկս  
կը մեռնի. ազատեցէ՛ք զինքը .

— Շշ՛թ . ըրի իմ յուսաբեկիչ անխուովութեամբ  
բըս . շշ՛թ, եթէ ըսածնիդ խելու ըլլայ . .

— Այո՛ . այո՛, իրաւունք ունիք, կակաղեց  
ողորմելին եւ թեւովը սրբելով իւր արցունքները,  
այո՛ . . . ոհ, խելքս թռա՛ւ գլխէս . . . սակայն ա-  
պահով եղիք . խելօք պիտի կենամ . . . կը հաս-  
կնամ միտքերնիդ . աղջիկս, հրեշտակս հոն է . ցա-  
ծէն խօսինք ու ներս մտնենք .

Եւ նոյն ատեն դուռը բացաւ .

Ներս մտանք, հիանալի խցիկ մ'էր, կիսաբաց  
պատուհանին մօտ, փառահեղ բազմոցի մը վրայ  
մատաղագեղ հիւանդը մեղմօրէն փուռեր էր, աչ-  
քերը կիսափակ, գլուխը յետս հակած, երեսն  
ա՛յնքան թալկահար որ կրնար մարմարիոնէ ար-  
ձան կամ մեռեալ մը կարծուիլ . դրան բացուե-  
լու աղմուկէն և ոչ իսկ թուեցաւ թէ կարթննայ,  
մօտեցանք, դարձեալ տեղէն չի շարժեցաւ : Վան  
— Օվէն ակնարկ մը ուղղեց ինձ, որով ըսել կու-  
զեր թէ (կը տեսնէ՞ք,) ապա ժպտել ջանալով, կա-  
րելք խոցեալ, բազմոցին մօտիկը դարչապարին  
վրայ կծկելով ողոքական կերպիւ ձեռքը ծնկուը-  
ներուն զարնելով կեղծ ուրախութեամբ մը երեք  
անգամ մըմնջեց վշտագին . էտի՛թ, էտի՛թ, է-  
տի՛թ .

Յայնժամ այս հայրենի ձայնին աղմկան ՚ի լուր,  
էտիթ բացաւ իւր կապոյտ աչքերը : Արտեանուն-  
քը մէկզմէկէ բաժնուած ատեն, վտիտ այտերուն  
վրայ արտասուաց երկու կաթիլներ գլտորեցան .  
զայս տեսնելով Վան Օվէն աշխուժիւ գլուխը մէկ-  
դի դարձուց, հեծկլտուքը խեղդելու համար,

բայց հակառակ իւր զգուշութեան՝ աղջիկը լսեց զայն կամ լաւ եւս գուշակեց, ինչու որ անմիջապէս բուռն սաստկութեամբ մը ոտք ելաւ և ծերունի միլիոնատիրոջ գիրկը նետուեցաւ: «Պրափօ՛, ձայնեցի յայնժամ, մէկէն ի մէկ երեւնալով, պըրափօ՛ եւ բարի լոյս:»

Էտի՞ զարմացած ու շփոթած դէպ ի ինձ դարձաւ — Բժիշկ մ'է սա, բացատրեց միլիոնատէրն:  
— Ա՛հ, ըրաւ աղջիկը զմայլելի փոքրիկ ծամածռութեամբ մը, որ բացայայտ կը նշանակէր թէ՛ «դարձեա՛լ բժիշկ:»

Ապա, ինքզինքը թեւաթռալի մը վրայ նետելով՝ գրեթէ թափանցիկ ձեռաց մէկն ինձ թողուց, մինչդեռ միւսովս սկսաւ մելամաղձօրէն իւր պաշտելի ոսկեհեր պորուն խօսքայներուն հետ խաղալ: Վան — Օվէն սկսեր էր նկարագրել մանրամասնաբար թէ ի՞նչպէս տարիներէ ՚ի վեր աղջիկը հետդհետէ կը նուաղեր ու կը տկարանար, թէ ի՞նչպէս գրեթէ վեց շաբաթէ ի վեր նոյն իսկ չէր ուզեր այդ սենեկէն դուրս ելնել, ուր բան մը իւր աչքին հաճելի չէր երեւէր. եւ կը թուէր թէ ինքզինքը յամբ առ յամբ կը թողուր մեռանիլ, վեշտասան հասակին մէջ:

Իրամատէրն շարունակեց, «Արդ պարոն բժիշկ, ինչպէս որ կը տէսնէք, հոս ոչինչ կը պակսի իրեն ինչ որ կը հրամայէ երիտասարդութիւնը, ինչ որ հարստութիւնը կարող է տալ: Աղջիկս ճշմարտապէս փոքրիկ դշխոյ մ'է, գգուանօք երես կուտամ իրեն, այն աստիճան, որ սակարանին մէջ դիւ առածի կարդ անցուցած է, սակայն պարտիք գիտնալ թէ այլ եւս փափաք մը չի յայտներ, թէ եւ ամեն բան ունի եւ ես ժամանակ չեմ թողուր ուզելու:»

Թերեւս Վան — Օվէն մինչեւ իրիկուն պիտի  
խօսէր այնպէս, բայց ես քանի մը վայրկեանէ 'ի-  
վեր աղջկան բազկերակին ունկնդիր էի, որմէ ա-  
մեն բան հասկցեր էի:

— Այո՛, Մարքիղուհի, այո՛ տեարք, դուշա-  
կեցի թէ սոյն սքանչելի հրաշալեօք օժտեալ էա-  
կը ի՞նչու համար չէր սիրեր այլեւս ոչ դաշտն,  
ոչ քաղաքն, ոչ իւր ապարանքն, ոչ դղեակներն,  
ոչ հանդէսներն, ոչ արդուզարդն, ոչ իւր դաշ-  
նակն, ոչ իւր գրքերն, ծաղիկներն եւ ոչ իսկ  
իւր հէզ թռչնիկներն. վասն զի իւր անձը ոսկե-  
պօծեալ վանդակի մը մէջ փակուած կզգար, վասն  
զի իւր վեշտասանամեայ սրտին մէջ ոչ ինչ կ'եր-  
գեր, զի կը տաղտկանար յոյժ երջանիկ լինելու  
համար. զի ամեն իրական պէրճու թեանց մէջ տեղ  
կը մեռնէ՛ր իւր հոգւոյն պաշար չի դտնուելուն  
համար, իւր հանճարոյն պայքարի պակասութեան  
համար, ինքզինքն օգտակար զգալու գթութեան  
եւ սիրոյ՛ զգայութեան համար:

Վերջապէս, կը հաւատա՞ք պարոններ, առա-  
ջարկեցի զինքն ամուսնացնել Ֆրանքֆորթի երի-  
տասարդ Սթօրֆիւս անուն զմայլելի եւ մատաղ  
դրամատիրոջն հետ:

Էտի՛թ յայտնապէս կը բողոքէր:

Շատ աղէկ, ըսի, խնդիրը հասկցուեցաւ:

Վան — Օվէն խենդի պէս սենեկէն դուրս կը  
վազեր դեղագիր գրելու նիւթեր բերելու համար:

«Անօգո՛ւտ է, պարոն, պատասխանեցի, ինձ  
երկնցուցած գրիչը ետ մղելով, յետոյ էտի՛թի  
դառնալով հարցուցի, Օրի՞րդ, արդեօք փոքրիկ  
եւ աննշան դլխարկ մը ունի՞ք:

— Այո՛ Տօքթէօր, սակայն...

— Յիսի մը կամ յոյժ պարզ ուսնոց վերարկո՞ւ

մը , այդ հիւանդի վարչասակի վրայէն անվու-  
թօրէն առնելու համար .

— Անշուշտ , բայց . . .

— Վերջապէս պարզ քաղաքացիի հազուստով ,  
որ ներէ ձեզ ամեն ուրէք երթալու .

— Բայց ինչո՞ւ համար , ինչո՞ւ համար .

— Է՛հ , ի՞նչու համար պիտի ըլլայ , հետս  
դուրս ելնելու համար .

— Ձեր հե՛տը մի . . .

— Եւ ո՞ւր պիտի տանիք զինքը , հարցուց հայ-  
րը դարմանօք .

— Այդ իմ գիտնալիք բանս է .

— Ա՛հ ,

— Օրիորդ , ձեզ կսպասեմ , 5 վայրկեան ունիք .

Եւ վերջապէս զայն հնազանդեցնելու համար  
կամացուկ մը նորա ականջէն սա խոշոր սուտը  
դլորեցի , « խնդիրը ձեր հօրը կենաց վրայ է . »

Ապա վան — Օվէնի դառնալով , թողունք որ  
օրիորդը հազուի , ըսի , եւ թեւէն բռնելով զայն  
սենեկէն դուրս սրահը տարի .

— Բայց ի՞նչ է այս , հարցուց հայրը դարմա-  
նօք , վերջապէս պիտի ըսէ՞ք թէ ի՞նչ կը նշանա-  
կէ այս .

— Վան — Օվէն , աղջիկնիդ հիւանդ է . . ծանր  
հիւանդ . . .

— Բարէ՛ , զայդ շատ լաւ գիտեմ .

— Ուրեմն առանց զիս հարցափորձելու , թո-  
ղէք որ բժշկեմ զինքը .

— Կերաշխաւօրէ՞ք .

— Այո՛ , եթէ սակայն կուրօրէն ինձ անձնա-  
տուր լինիք , եթէ սպիտակ ստորագրեալ քար-  
տէս տաք ինձ .

— Ըսէ՛ք , ի՞նչ կը պահանջէք ինձմէ .

— Կը պահանջեմ որ ամեն երկու օրն անդամ մը էտիթ հետս դուրս ելնէ, առ աւօտներն, երեքական ժամ,

— Բայց գոնէ դրուցեցէք ինձ թէ . . .

— Բան մը չեմ կրնար ըսել . . . այո՛ կամ ոչ, կուզէ՞ք որ ազատեմ զինքը .

— Այլ սակայն, արդեօք ինքը պիտի զիջանի՞ .

— Գէթ աչքովսիդ տեսէք :

Նոյն վայրկենին դուռը բացուելով՝ էտիթ սեռամին վրայ երեւցաւ .

Մուտ շեփորուկի դոյնով եւ պարզ ծալքերով ճենացի շղարշ մը իւր սպիտակ բեհեզէ շրջադգեստին վրայ կիսնար, անզարդ փոքրիկ գլխարկ մը, անտառաց ճշմարիտ մանիշակ մը իւր քնքոյշ գլխարկը կը ծածկէր . կարծեմ դեռ աչքիս առջեւն է . . . սիրելի էտիթ . . . այն ձեւով պաշտելի կրնէր զինքը .

— Այո՛ կամ ոչ, կրկնեցի Վան — Օվէնի, անգթարար .

Այս հարցմանս վրայ բարի մարդուկը ջլաձգաբար դրկեց զաղջիկն եւ բաղկացս մէջ նետեց, եւ անստոյգ լինելով թէ պիտի բժշկուէր, խոյս տուաւ, սակարան գնաց, որպէս զի միլիոն մը աւելի շահի անոր համար .

Իսկ ես, էտիթը թեւս առի, քայլ առ քայլ օգնեցի նմա սանդուխներէն իջած ատեննիս, եւ զինքը իմ փոքրիկ քուրէիս մէջ նստեցնելէ ետքը .

— Կառավար, խարազանէ՛ ձիերը, գոչեցի . . .

«Տօքթէօր, գոչեց Մարքիզուհին անհամբեր, շուտով իսկ ըսէք մեզ, ո՞ւր կուզէիք տանիլ ամեն առաւօտ գօրիորդ Վան — Օվէն .

— Եւ ո՞ւր պիտի տանէի, ուղղակի աղքատաց տունը, իմ սովորական այցելութեանցս . Կերդ-



հուժմ ձեզ, որ անդ կը գտնուէր Էտիթի համար համակրուելու, յուզուելու, արտասուելու, գործելու և ապրելու շա՛տ բաներ: Ամենեւին չխնայեցի իրմէ ոչ մի թշուառութիւն, ոչ մի վիշտ, ամենն ալ ցոյց տուի:

«Ազնիւ եւ առատաձե՛ռն աղջիկ... Ահ, լաւ գուշակէր էի նորա սիրտն»:

Առաջին տան մէջ, ուր կայ առինք, պարտաւորեցայ զինքը գրեթէ գիրկս առնելով մինչեւ հինգերորդ դասիկոնը հանել: Երկրորդ ցեղնամէջը մինակուկ ելաւ: Երրորդին, ինձմէ շատ առաջ հասած էր: Սակայն մատաղ աղջկան փոքրիկ քսակին մէջ ալ ստակ չմնաց:

Ձեզ փոխ կուտամ, ըսի նմա, մի՛ երկնչիք, վան — Օվէնը չե՛նք կործաներ, մխիթարելու և նպաստելու համար ուրիշ միջոց մ'ալ կայ:

— Ո՞րն է.

— Օն յառաջ երթանք... պիտի տեսնէ՛ք:

Խեղճ եօթանասնամեայ մը որ անկելանոց դըրուիլ կը խնդրէր՝ չէր յաջողած. ուստի յուսահատ իւր մահուանը կսպասէր: Իեռ երէկ, կըսէր մեզ, ներքին գործոց պաշտօնէին քսաներորդ անգամն ըլլալով գրեցի:

— Նախարարը մեր ազգականներէն է մրմուաց ծաղկահաս ընկերուհիս:

Իարձեալ քիչ մը հեռուն, աղքատ աղջկունք, որոնց լաւագոյն ինչքն էր մնալ համեստ ու պարկեշտ, եւ ոյց արժանապէս վճարուած գործ պէտք էր: Իժբաղդարար Էտիթ իւր կար կարողը, հանդերձապահը. դերձակ նորաձեւուհին ևն. ունէր:

Վերջապէս մեր այցելու թիւնքը վերջացան ամբողջ ընտանիքի մը, որք հիւանդութեան, աղքատութեան մատնուած էին, զի անդրանիկնին

իրենց միակ ապաւէնը, զինւոր էր հինգ տարիէ հետէ, եւ յուսահատեր էր արձակուող մը ստանալ զոր իւր վաշտին գնդապետը կը մերժէր, այդ վաշտը յայնժամ՝ ի կրքնօպլ պահականգունդ էր:

«Ի կրքնօպլ, պոռաց էտիթ ցնծագինս . գընդապետն հօրս մտերմագոյն բարեկամներէ մէկն է . ինչ բարեբաղդուծիւն, ինչ պատեհ առիթ:

— Զաւա՛կս . պատասխանեցի ճակատն համբուրելով ձեզի պէս հարստուծիւն, բարձր դիրք, մատաղատի գեղեցկուծիւն ունեցողները միշտ պատեհուծիւն կունենան:

Վերջապէս երբ ապարանքը վերադարձանք. էտիթ յուշատետրս առաւ ձեռքէս եւ աչքիս ծայրովը առաջին երեսին վրայ կարող եղայ ընթեռնուլ:

1. Տուն վերադարձիս՝ խօսիլ հօրս:

2. Այս երեկոյ գրել ի կրքնօպլ:

3. Վաղիւ առաւօտուն՝ նախարար ազգականիս տունը:

4. Սանուցս համար ստացուածք:

էտիթ արդէն իսկ կը հասկնար թէ երբ տասն եւ վեց տարեկան հասակ մ'ունէր և բաւական ալ դրամ, իրաւունք չունէր դատարկասուն մնալ եւ մանաւանդ մեռանիլ, ինքզինքն օգտակար լինել կ'զգար. այլ եւս կ'սկսէր սիրով բորբոքիլ բարւոյն համար. հետեւաբար ազատած, զուարթացած եւ կենդանի՛ էր:

Մէկ ամիս ետքը, այնպէս լաւ ինքզինքին եկերս այնպէս կատարեալ քաջառողջ, այնչափ զուարթամիոյթ կայտառ եղեր էր որ վան—Օվան ուրախուծենէ ինքն իրմէ ելած կ'աղաղակէր:

«Ահաւասիկ ԾրանքՓօրի ՍթօրՓիուս պարոնը բերել տալու ժամանակն եկաւ:

Արդէն իսկ հտիթի դոյնը երեսէն խոյս տուեր էր :

«Ձէ՛, պռուացի աշխուժիւ, թողունք Սթօրֆիուսը :

— Ո՛ր երկինք, տօքթէօ՛ր, պիտի արդիլէ՞ք ազլիկանս . . .

— Ամուսնանա՞լ, բնաւ երբէք, այլ ժամանակ մը ետքը պիտի տեսնէք, եւ այդ բանն ինձ կը պատկանի :

— Ի՞նչ ըսիք . . ձե՛զ .

— Միթէ հտիթ քիչ մ'ալ իմ գաւակս չէ՞ :

— Այո՛ . այո՛ ,

Եւ երկու տարի ետքը, օր մը Վան — Օվէնի մօտը երթալով ըսի :

Հտիթնիս կարգելու ատենն եկաւ :

— Պա՛հ, էյ ս՞րու հեա նայինք :

— Լուսիէն տը Գ . . ի հեա :

— Ինչպէ՛ս, այն արուեստագէ՞տը, որոյ հայրը սնանկացած է . . .

— Ըսէք ազնուականը, որ իւր հօրը պարտքերը վճարելու համար կամովին աղքատանալէ ետքը իւր տաղանդով վերստին նոր հարուստութեամբ մը վերականգնեցաւ :

— Արուեստագետի հարուստութի՛ւնն մը .

— Որուն վրայ իմ կողմանէս միլիօն մը կը յաւելուի :

— Միլիօն մը, էյ ուսկի՛ց պիտի առնուի զայդ :

— Ձեր արկղէն :

— Օ՛հ .

— Բժշկութեան այցագ իններս պարտական չէ՞ք ինձ . մէն մի մերժմանս ատեն հարիւր անգամ չի կրկնեցի՞ք թէ «էյ շատ լաւ, այդպէս ըլլայ, ետքը կը նայինք . դուք որչափ ուզէք՝ դարձեալ ազլիկանս վերկութեան գինը երբէք այնքան շատ ըս-

տացած չպիտի լինիք :

— Անտարակոյս , բայց . . . :

— Կը կարծէք թէ շատ քիչ եղած լինի մէկ միլիօնը , լաւ , երկու ըսենք . դարձեալ զայն էտի-  
թի ամուսնոյն կուտամ յօժիտ :

Վան — Օվէն տակաւին կատարեալ «այո՛» չէր  
ըսեր . բայց էտիթ անշուշտ զմեզ մտիկ կընէր , որ  
յանկարծ եկաւ հօրը գիրկը նետուեցաւ : Հայրը  
յաղթահարեալ էր :

Վերջապէս տեարք , ահա այսպէս հրաշիւք իմն  
վերայարոյց ըրի դժիկին տը Գ . . . : Ահա այս կեր-  
պիւ կը մտածեմ թէ կրնան բուժիլ Քարիպեան  
փափկամարմնութենէ բռնուած մեծափարթամ  
տիկնայք , աղջկուէք եւ մանաւանդ այրիներն .  
գորօրինակ , Ա շխատութեամբ , Գթութեամբ եւ  
Սիրո՛վ :

Այս էր ահա տօքթէօր Միւլլէրի ամբողջ մո-  
գական հմայքը :

..

Կէս գիշեր կը զարնէր :

Ունկնդիրք ոտք ելան մեկնելու համար :

Այլ դահլիճէն դուրս տակաւին իրենցմէ մէ-  
կը չելած , Մարքիդուհին դիմեց դէպ ի ծերունի  
բժիշկն , ինքնակամ նորա երկու երեսները համբու-  
րեց , եւ ամենուն ներկայութեանը դուչեց .

— Շնորհակալ եմ խորհրդակցութիւններնէդ ,  
տոքթէօ՛ր , վաղն առաւօտ եկէ՛ք դիս առնուլ ,  
որպէս դի մեր խեղճերուն առաջին սովորական  
չըջաննիս ընենք :

Թարդմ .

Վ . Ք .

193

1889ի ՅՈՒՑԱՀԱՆԴԻՍԻՆ

«Ճաշարանի մը առջեւէն կ'անցնէի, երբ սա խօսքը լսեցի սպասաւորի մը բերնէն, որ սագ մը կը փեթտէր.

— Քեզ ուտողներն ալ ասանկ պիտի փեթտենք, իմ պարա՛րտ սագօ . . . »

Հ.Լ.

— 0 —

ՆԿԱՐ ՀԱՆՈՒԿ

(Ա.)



Ա



Գ



Ի

ԸԸԸ

Կ



Փորձանք



Նառ

## ՃԱՇՈՒՐԱՆԻ ՄԸ ՄԷՉ

Ծննդեան մը Բ. օրը, դուարճախօս Պայուն մը համբաւաւոր ճաշարաններէն մին կը մտնէ, ուր այն միջոցին գտնուած յաճախորդաց բազմութենէն՝ դժուարաւ տեղ մը գտնելով կը նստի, և իրեն ներկայացող սպասաւորին կը հարցնէ.

— Ի՞նչ ունիք:

— Մսի ջուր, ապուր, մաքարոնի, տապկած ձուկ, խորոված...

— Նախ եւ առաջ ինձի մաքարոնի մը բեր:

— Այէ՛ստա, — ըսելով՝ սպասաւորը կը մեկնի:

Զուարճախօսը իւր մօտը գտնուողներուն հետ խօսակցելով հանդերձ, կ'սկսի ուրիշ սպասաւորի մը բերած հացը կամաց կամաց ուտել, եւ արդէն կէս ըրած էր՝ երբ երրորդ սպասաւոր մը իրեն մօտենալով՝

— կը ներէք էֆէնտի, կըսէ, բազմութիւնը շատ ըլլալուն, շենք կրնար կոր հասնիլ, ի՞նչ կուղէք.

— Է՛հ... քիչ մը խորոված միս բեր:

— Այէ՛ստա...

Խօսակցութիւնը վերստին կ'սկսի, ինչպէս նա. և հացին մնացորդը կամաց կամաց ուտել. բաւական ժամանակ անցնելէ վերջը, նոյն վերջին ըսպասաւորը գալով,

— Որչա՛փ ամօթով եմ, էֆէնտի, խորոված միս չէ մնացեր, կըսէ.

— Արդէն իմ ալ հացս հատաւ, դոնէ դօմբօսթօ մը բերէիր.

— Վարըն՛օր էֆէնտիմ:

Բայց գօմբօստօն ալ չը դար, եւ մեր դուար-  
ճախօսը ճարահատեալ կը պատրաստուի մեկնիլ .  
այլ երբ ճաշարանի դրան կը մօտենայ, վերատե-  
սուչը ամենայն քաղաքավարութեամբ անոր կը  
հարցնէ .

— Հաշիւնիդ կը վճարէ՞ք էֆենտի . Ի՞նչ կե-  
րաք .

— Մէկ ու կէս մէկ շէրտ, մէկ շէրտ, եւ կէս  
հաց, քանի՞ փարա պիտի վճարենք . . . .

— 0 —

195

### ԱՆՃԱՐԱԿԻ ԱՌԹԻԻ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

Աւանդական պատմութեանց նայելով, եւ՛ր  
ժողովուրդները խաթուներ, անճարակի մօտերը  
աւելի կը գօտեպնդին եւ իրար կանցնին եղեր,  
ձեռքէ հանելու համար այն կարգ մը ծակ—գըր-  
պանները՝ որք քանի մը տարիներ տունէ տուն  
պտտելով, իրենց երեւակայած դրամօժիտներով  
կամ անշարժ կալուածներով աղջիկ չ'կրնայ գտնել-  
նէն վերջապէս ճարահատեալ՝ քիչին շատին չի  
նայելով, կը գոհանան այլեւս անճարակին ամուս-  
նանալ, — եթէ սակայն տուողներ գտնուին — :

Այս կարգի խլավուղներէն խաթուն մը, ժա-  
մանակաւ, Ս . . . գիւղը բնակեալ եւ երեք աղջիկ

դաւակ ունեցող ընտանիքի մը տան դուռը օր մը  
կը դարնէ : Օրիորդներէն մին կը փութայ դուռը  
բանալ :

— Հանքմ աղջիկ, մայրիկդ հո՞ս է .

— Հրամմեցէ՛ք . . . հոս է :

— Չէ՛, շնորհակալ եմ, վեր էլլալու վախիժ  
չունիմ, սանկ կտոր մը վարի օտան իլիշմիշ պիտի  
ըլլամ : Հայտէ՛ դըզըմ, մայրիկիդ ըսէ՛ք թի՛ մը  
հոս կայ . ըսելիք մը ունիմ :

Օրիորդն անմիջապէս միջնայարկը կելնէ եւ  
մայրը վար կը դրկէ :

— Բարի ես եկեր, Կանկառիկ տուտու .

— Պարիդ շատնայ երկրում . . . արեւը սիրեմ,  
հանքմիկդ ալ ի՞նչ աղւոր մեծցեր, Ֆիտանի պէս  
պօյ մըն է նետեր, հէմէն խէրիկը տեանաս :

— Շնորհակալ եմ, Կանկառիկ տուտու :

— Կովածիս խտար ալ կայ եղեր :

— Ան քու դաթութիւնդ է, աշկիդ անանկ է  
երեւցեր :

— Է՛յ չէ՛, արեւնին սիրեմ, սայքի ծառքս  
մեծցած՝ իմին ալ դաւակներս կը սեպուին . հէ-  
մէն էրկնաւորը պարի սահաթով պարի խըսմէթ-  
ներ հանէ տէմերնին :

— Ողջ ըլլաս :

— Ասանկ պաները հէլպէթտէ մէկը սէպէս  
պիտի ըլլայ թի՛ կլոխ էլլայ, չէ՛ նէ՛ մար իըսմին,  
«էկո դաւակս ա՛ռ» տէյի կրնայ մէկուն խօսք  
մը պանալ :



— Անանկ է :

— Անցածն օր տեղ մը խօսքերնիդ էղաւ , հե-  
մէն Աստուած չար նազարէն պահէ , հանրմներդ  
կովոյ կովոյի , արթըխ պերաննին վրայ շեկաւ :

— Ան իրենց դատաւիտն է :

— Քա աղէկ ըսիք , ըսի միտքէս , ելլամ մէյ մըն  
ալ անանց էրթամ . բարի խըսմէթ է նէ՛ աս բա-  
նը կըլլայ :

— Շնորհակալ եմ կանկառիկ տուտու , քի մեզ  
միտքէդ շես հաներ :

— Հիմա քեզի ըսեմ , սըրային պիտի նայի՞ս  
մի չէ՛ :

— Ի՞նչ ըսեմ քուրուկ , Ներբողիկիս ճիտը ծուռ  
ձգելով Արեւնադիս համար կրնամ խօսք տալ :

— Է՛հ , է՛հ , դարար չունի , մենձն է եղեր  
պղտիկն է եղեր . էրկուքն ալ անլման դաւակներ  
էն : Կիտե՞ս եա , ես անանկ շիւրիւկ տալի շեմ կո-  
խեր . հիմա իշտար կովէմ նէ՛ քիչ է . ծառքիս  
տակը իրեք հատ իրեք թէլի տէլիսանլը ունիմ ,  
խըսմէթ է նէ՛ պէլքի իրեքն ալ քեզի փեսայ կառ-  
նենք :

— Վույ ճանրմ կանկառիկ 'տու , տահա Այգի-  
նէս չօճուխ կը սեպուի :

— Է՛հ , անանկ է նէ՛ մենձերուն նայինք : Ման-  
չերէն մէկը Ֆիլանճա չարչըին մէջ մէնչո՞ւր թէլ-  
լալ է . 300 լիրա թրախօմա իլէն տուն մը կուզէ  
կոր . ամա ի՞նչ տէլի խանլը . . . .

— 300 Լիրայով տուն մը մի՛ . . .

— Ա՛խ արեւուդ մեռնիմ , տէյէր ունի , իշ-  
տար կովեմ նէ՛ տեղն է . սա մէյմը տեսնաս նէ՛  
հազար օսկի տէյտիրմիչ կրնէս . անանկ իւշկիւ-  
զար , անանկ շնորհքով , խօսքը խօրաթան տեղը ,  
սա հացը քարէն հանող սոյէն է :

— Աղէկ կըսես կոր կանկառիկ տուտու ամա, խօսքը մէջերնիս, ատտար իւշկիւղարութիւնովը տիյօր հիմա տիրէկ մը տունի օլսուն տէր չէ եղեր նէ . . .

— Ա'խ արեւսւղ մեռնիմ, չորս քուր ճէհէղեր կարդեր, իրեք աղբարները փեսայ ըրեր, ու թը տարի պիր տիւղիյէ քէօթըիւմ հարը նայեր, էրկու հեղ մարը վերուսաղըմ դրկեր է տէ, դավալըն բանի մը տէր չէ եղեր. հիմա տուն փեսայ տեղ մը էրթայ նէ կա՞, եա, հէմ ինք ըռահաթ պիտի ընէ, հէմ առնելիքը, հէմ անոր էթրաֆ թարաֆը: Առած թրախօմայովը աղւոր խանութ մը պիտի բանայ. անճարակին ալ հարսնիք կուղէ կոր, խօսք կուտա՞ս.

— Ի՞նչ մեղքս պահեմ, ատտար փարայ չենք կրնար տալ.

— Իս մտիկ կընես նէ՞ չէ մը՛սեր.

— Ի՞նչ ընեմ քուրուկ. մեղի պէս էսնաֆ մարդը ատտար բարայ կրնա՞յ տալ. տայ ալ նէ՞ մօխիբի վրայ կը նստի. Սանկ 20-30 ոսկի ըլլար նէ՞ . . .

— Վո՛ւյ, չէ՛. չէ՛. 300 էն մէկ հատ մը պակասով չըլլար.

— Զըլլար նէ՞ օղծութիւն ըլլայ.

— Անանկ է նէ՞ 150 լիրայով տիրէկ մը տուն ուզող պախալիյէի թիւճճարի մը քով մէնչուր եազրճի մը ունիմ, անոր ընենք. ամիսը տասը օսկիին փարա չըսեր, սա անխրտար բանը գործը գիտէ քի՛ առնելիք դրախօմայովը իրենց տանտիրոջը պղտիկ տունին տակը պախալ թիւճճարիի աղւորիկ խանութ մը պիտի պանայ. անճարակին ալ հարսնիք կուղէ կոր:

— Շէնք շնորհք տաւոր պախալի չըրախ է, ըսէ, թիւճճարս, եազրճիս ի՞նչ է.

— Վո՛ւյ չէ՛ . մեղայ Աստուծոյ , ի՞նչու չըրախ  
ըլլայ . . . շէնք շնորհք թէզկեահտար մըն է :

— Սղէկ կըսես ամա՛ ան ալ մեղի կէօրէ բան  
չէ՛ :

— Պարէ օլտու օլածադ , սա մէյտանի ախտէր  
էզածիին ընենք լմնցունենք . կէս տունով՝ իծ-  
ծուն լիրա կուղէ կոր , արթըխ ասանկ աննըման  
զաւակ նէ էկեր նէ ալ պիտի կայ . խման չէ , հո-  
վարտա չէ . հմուկ , խելօք , աշկը տունն ՚ի վեր .  
սուսիկ , սա պէրանը ավուճ մը ադ տի՛ր մորթէ .  
կիտցած ըլլաս քի՛ ծառ քի սէրմայէն չի խօսելու  
համար է ուզած դրախօման :

— Սա մէյտանի թէք քէբէնկլի պղտիկ ախ-  
տէրին հա՞մար է ըսածդ ,

— Պէլի . տեսնաս ի՞նչ աղէկուկ տղայ մըն է :

— Վույ ճանը՛մ կանկառիկ՝ տու , խաթըրա  
միւրվէթ , ատոր սէրմայէն ի՞նչ է քի պիտի խօ-  
սէ . իմ կիտցածս է նէ՛ խանութին մէջ ութը տա-  
սը հատ խութի , 5-10 հատ շիչէ , չօճուխի սօ-  
պան , հաճի եւթմադ , քանի մը հատ ալ խողէ  
մանդալի խարախ ու պուտուկէն պաշխա բան մը  
չկայ . ամէնը 200 դրու շի լախըռար . բարալըխ  
հաթէմ չիչէյիով ըխլամուր ծախելուն համա՞ր  
էզածի կըսէք կոր . տողբուսո՛ւ , էզածիի խանութ  
կը նմանի . էյէր պաղտաշ չի նստի տէ , օտքերը  
սանկ կտոր մը երկնցնէ նէ , ճամէքեանէն դուրս  
կիյնայ , սանկ շիտակ մը ելլամ կայնիմ ըսէ նէ ,  
գլխը թավանին կը զարնէ . ատանկին 50 օսկի

մ'վ կուտայ, իրեք տարի է աղջիկ կը փնտռէ կոր,  
տահա չի գտաւ:

— Արթըրս սա տարի պէշ աշաա պէշ եօգարը  
պիտի ընէ լմնցունէ:

— Աստուած բարի բաղար տայ. տուող ըլլայ  
նէ՛ չառնելիք չընէ:

— Քուրիկս, առնելիք գրախօմայովը մե՛նծ  
խանութ մը պտոր պանայ:

— Անանկ խանութ պիտի բանամ, սէրմայէ  
պիտի ընենք ըսողները բէ՛ք շատ տեսանք:

— Դուն հիմայ աս ախտէրին քանի՞ օսկի կըր-  
նաս տայ:

— Բարայ մը չեմ կրնար տայ,

— Կէս տո՛ւն ալ չես խտար,

— Կէս չէ՛ տիրէկ մը պիլէ չեմ կրնալ տայ:

— Արթըրս տուն փեսային խօսք չունիս եա՛:

— Տուն փեսայ մի՛... թամամ, 200 դրու չի  
սէրմայէով կատու մը պիլէ չկրնար ասլրուիլ. հաս  
պիտի գայ ինձմէ ուտէ խմէ:

— Տուն մէյմը իրիկուան, հօրերնուն, Շամ-  
շադրամ աղային հարցուր. պէլքի տղան կը ճաշ-  
նայ տէ՛ չէ՛ չըսեր. աս անանկ տղայ մըն է քի տա-  
րիքին, թապիլէթին, ճէհէղին չի նայիր:

— Գիտենք կոր քի փարային կը նայի, ամա  
ես աղէկ գիտեմ քի՛ հարն ալ ինծի պէս «սէֆա  
կէլտին» պիտի ըսէ:

— Ասանկ աղէկ խըամէթը 40 տարին հեղ մը չիյնար :

— 40 չէ, 100 տարին հեղ մը պիլէ իյնալու չէ

— Հսել է քի չես իտար, ըսաւ կանկառիկ տուտուն, ճարահատեալ մեկնիլ պատրաստուելով. ու երբ փողոցի դուռն հասաւ, կլխու ցաւութիւն տուինք ամա՛ աֆ կընես, յարեց տրտմութեամբ. ես ծառքովս տրածի պէս, չէ չպիտի ըսէ, կըսէի. խաթըրա միւրվէթ, ամեն մարդ իր աղջիկը մենծ տեղեր տալ կուզէ ամա՛ առնող ըլլայ նէ :

— Ամեն մարդ ալ իր զաւակը դետնէն չէ գտեր քի՛ արթըխ պախալին չըրախին հանէ տայ, մայէթիւնտէ ալ 100 լիրա՛... Ես քեզի խրատ տուող չեմ ամա՛ ադ դրախօմա ուզողները կտոր մըն ալ իրենց վայլումին կէօրէ ուզելու են :

— Քուրո՛ւկ, քիչ ալ կուզեն կոր նէ՛ մանչը տէյէր չունենալուն համար՝ քիչ կուզէ կոր, կըսեն կոր :

— Երկու հարուր ղըշ. սէրմայէով թէք քէբէնք. լի ախտէրին 50 լիրա տուողն ալ փրկիչը խենդի տեղ կը կապեն կոր. Հէմ քեզի բան մը ըսե՛մ. է յէր ինծի բարեկամ կը ճաշնաս նէ՛ անանկ թախըմ մը ճէպի — տէլիքներուն համար նաֆիլէ պօշ տեղը անոր ասոր կլխու ցաւ մի՛ տար. ոտքերուդ ալ մեղք է. պախալին չըրախը՝ եազըճի, չորսնոց ախտէրն ալ մէնչուր էզաճի տէլի եալանճի տօլմասիները կըլլող չի կայ :

— Խաթրըդ չի մնայ ամա, էյէր պաշխա մարեր ալ քերի պէս ինճէտէն ինճէյէ հիսապ ընեն նէ, աղջիկնին չեն կրնար կարգեր .

— Է՛հ, ի՞նչ ընենք, ինժի պէս հիսապ չընելով աղջիկնին սասնկ թախըմ մը աժէմին չաժէմիմ տուողներուն ալ հալը ետքէն կը տեսնանք կոր . աղջիկը լանդին կը տանչուի, ինքն ալ անդին կը չարչարուի՛ կոր :

••

Կանկառիկ տուտուն այս վերջնագիրը առնելէն ետքը, մեկնեցաւ : Յրիօրդք, որ միջնայարկի սանդուղին գլուխը կեցած, այս խօսակցութեան ունկնդիր եղած էին, թատերական երգի մը հետեւեալ նագարաթը միմուացին միաձայն .

«Անխելք շունը անմտօրէն,  
Մաս կը յուսայ կարկանդակէն» :

— 0 —

196

ՄԱՐԴ ԶԿԱՅ

Երեւելի տան մը մէջ սպասաւորի մը,

— Առկա՛ս, ո՛վ որ դուռը դարնէ, մարդ չ՛կայ ըսէ, — կ'ըսուի :

Քիչ մը վերջը դուռը կը դարնուի եւ Ղուկաս  
ըստ հրահանգի

— Մարդ չ'կայ, կը պօռայ .

— (Գուրսէն) Հա՛հ, սանկ ըսէ, ես ալ ներսէն  
ուրբի ձայն առի նէ մարդ կարծեցի . պատասխա-  
նը կը տրուի :

— 0 —

197

ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ

— Հայրի՛կ, ի՞նչու համար Գաղիացիները  
պաղի Շ գիրերուն տակը «ե՛րէւ կը դնեն» :

— Օ՛ղլում, պէս պէլլի ան գիրերը գիտով են  
տէ, վար չիյնան տէյի տակերնին ՍԷՏԻՐ կը  
դնեն կոր :

— 0 —

198

ՄԱՆՐ ԲԱՅՑ ԹԵԹԵԻ

Տան մը մէջ :

— Ա՛լ ինչ խտար համբերեցի նէ, կ'օգտէ, աս  
Չատկին շնեղիք Քիստանդ շա՛տ, շա՛տ ծանր  
պիտի ըլլայ, Ելիկում աղաս, կիտե՛ս եա, ուրկէ

պէրի խօսք տուած էս, սանկ վեց օխարը ոսկիի խտար . . .

— Պէ՛ ճանրմ, ի՞նչ թօհաֆ կնիկ ես, անցած օր, խօսվա մը ճուրը վերի խաթը տարիը վար էկար նէ, վայ օտքերս բռնուեցան ըսիր, ա՛ղ խտար ծանրը ֆիտանը հաղնիս նէ, զահէր քէօթը իւմ ըլլաս նստիս պիտի, գլխուս պէլա՞ պիտի բանաս . . .

— օ —

199

### ԸՆՏԱՆԵԿԱՆ ՏԵՍԱՐԱՆ ՄԸ

Բաղոսի ջերմեռանդ երկրպագու մը՝ գիշերուան ժամը Յին ձեռքը օխայ մը ձուկ տուած՝ պատէ պատ զարնուելով՝ հաղիւ մեծ դժուարութեամբ տանը դուռը կը գտնէ եւ 100 տրամ ճապարակ ձկան դեղը կն՞ջն երկնցնելով կըսէ .

— Սը՞ վոնք հասսս՞ կառա ըրէ :

Խեղճ կինը իւր էրկան այս ողորմելի վիճակը անանելով կը գոչէ ,

— Քա աս ի՞նչ հիյէթ է, կէնէ աս գիշեր՞ը ինչ կար նայիմ ,

— Է՛ շատ մի խօ՞րաթեր, ամեն մարդուն տէրտը իրեն հէրիք է ,



— Քու տէրտղ ի՞նչ է քի, կը խմես կը խմես  
տէրտ խասէվէթ կը մոռնաս,

— Էօյլէ՛ պիլիրսին սէն, քառը տէյի՞լ մի սի-  
նիլ, Ասօր օ՞րթախիս ախպօրը, շէյ, տուր պա-  
գայրմ. հա՛, ենկէ յին քրոջը հարսին էնիշտէյին  
զոնքանչը մեռաւ. էյ չօք աճը տույտուժ, եիւրէյ-  
իմ փարչա փարչա ալտու, աճըմտան պիր քաչ թա-  
նէ իշտիմ, աղնա՞տըն մը:

— Աստուզմէ կըտնաս հէմէն, քա՛ քեզի՞ ինչ .  
տընտըրմըն տընտըր, տօխսաննոց պառաւ մը մե-  
ռեր է եղեր: էյ աս տասնըհինգ օր է գիշեր մը  
շէնք շնորհք էկած ունի՞ս, ամեն օր հէլէ մէ լմէկ  
սէպէպ կը կտնաս:

— Ինձի նայէ, էրէկ չէ առջի օրը մէխանաճի  
կօղմային զօւլու փօլլիցա մը էկէր էր, զավալը  
մարդուն նութիը շէր պացվեր կոր, այըպ տէյի՞լ  
ա՛, աճը տույտուժ: Էրկուշաբթի գիշեր քօլսօլի-  
տը փար ինջեր է կերթակորըսին նէ կատրուեցայ .  
Սայի օրը ուսկուժիին խըթ էր: Չորեքշաբթի օրը՝  
Սավային թէզկեահտարին խըզմիշ եղայ, տուրմու  
պանա քանապեա գատէյի իլէն ըռաքը վէրիը  
էս ալ կացի պաշխա տեղ խմեցի: Հինգշաբթի  
մէրախ մը կար վրաս: Ուրբաթ օրը խանու  
տէրը էկաւ քիրան ուղեց, էյի եա՛, չորս ա  
պէքլէյեցիր նէ պիր իքի հաֆթա տահա  
տէտիմ, — նէ՞ պիլէյիմ պէն. հանկը՞ պիր տէ  
սէօյլէիմ: Հէմ ինձի նայէ, դուն իմին խ

նմանելի պիտի ըլլար Լեհաստանցի մը, ընդունեց  
զնա իւր բանակը:

Տարի մը անցած էր, երբ թագաւորին տօնա-  
խմբութեան օրը, հարկ եղած էր զինուորական  
անցք մը կատարել:

Ուստի, պաշտօնեայն մտածելով որ կարելի է  
այդ յաղթանդամ զինուորը նշմարուելով թա-  
գաւորին կողմանէ, ի ներկայութեան կոչուի, զնա  
տարաւ իւր սենեակը եւ Լեհ լեզուաւ ըսաւ: (\*)

— Ճօ՛ն, մի քանի օրէն զինուորական անցք  
մը պիտի կատարենք, կարելի է քու այդ յաղթ  
հասակդ թագաւորին ուշադրութիւնը գրաւէ և  
իւր ներկայութեան գոչելով, սովորական ԵՐԵՒ  
ՀԱՐՑՈՒՄՆԵՐՆ ընէ. կուզեմ որ առանց շուարե-  
լու, թէպէտ չպիտի հասկնաս իւր ըսածները,  
ատասխանես հետեւեալ կարգաւ եւ Գերմանե-  
ն լեզուաւ:

Նախ և առաջ, ինչ որ հարցնէ քեզ, — ՁՅ ըսէ՛:

Թագաւորին Ա. հարցումն (Քանի՞ տարե-  
ս):

Կրորդին Ա ըսէ՛:

— Երկուս (Քանի՞ տարի է որ զինուոր ե-

րրորդին. — Երկուքն ալ ճշմարիտ են,  
Տէր՛:

ուորը Գերմաներէն բառ մ'իսկ չ'էր գի-  
տ սովորած:

Գ. հարցում (Ուտեստեղ և հագուստեղ գոհ  
ես) :

Հարկ չկայ ըսել թէ, նոյն անցքի միջոցին, չը  
վրիպելով թագաւորին աչքէն այդ Լեհ զինուորը,  
ի ներկայութեան կոչուած է, և

Թագաւորը — Տղա՛ս, քանի՞ տարի է որ զին  
ւոր եղած ես — հարցուցած է :

Չինուորը (խոնարհելով) — Քսան և հին

Թագաւորը — (Սպչելով թէ հազի  
րեկան երիտասարդ մը ի՞նչպէս կր՛  
զինուորական կեանք ունենայ)  
տարեկան ես :

Չինուորը — (խոնարհելով)

Այս երկու հակառակ  
վրայ թագաւորը — կս  
կամ ես խօսքդ չեմ հ

Չինուորը (խոնար  
մարիտ է, վեհամ  
նկատելով որ երե  
վերստին խոնար

Չինուորական  
պատասխաններ

Բայց ժ  
զինուոր

ըրաւ, և Թագաւորը լիովին վարձատրեց այդ քաջ  
զինուորը:

Թագաւորը իւր հարցմանց կարգը փոխած էր:  
Հ.Լ.



ՆԿԱՐ ՀԱՆՈՒԿ (Բ)

ԸԸ



րեկ

սպէս.

որձանցի կը  
Թիւնճեան

## 201

## ՏԷՐՎԻՇԻ ՄԸ ԿԱՐԾԻՔԸ

Օր մը, հարուստ մարդու մը դագաղին կ'ընկերանար հոժ բազմութիւն մը, այնպէս որ՝ մեծ փողոցը նեղ կուգար. այս միջոցին նոյն փողոցէն անցնող թափառական Տէրվիշ մը, որ ուսը մախաղ մը, և ձեռքը ցուպ մ'ունէր, բազմութեան մէջ սեղմուելէ և դժուարաւ ազատելէ ետքը՝ ետին դարձաւ, և բազմութեան ու դագաղին վրայ ակնարկ մը նետելով, զարմացական հառաչ մ'արձակեց. հետաքրքիր անձ մը, գիտնալով որ այն կարգի տէրվիշք տրամաբանօրէն կը խօսին, քաղաքավարութեամբ անոր մօտենալով՝ զարմացման և հառաչին պատճառն հարցուց.

— Մինակ ես չեմ զարմանար, ըսաւ տէրվիշը, այլ անշուշտ Աստուած ալ վերէն պիտի զարմանանայ, տեսնելով որ ինքն այս անձը ստեղծած ատեն այսչափ բազմութեամբ շրջապատեալ մեղի չի դրկեց, մենք ի՞նչու համար հիմա զայն իրեն վերադարձուցած ատեննիս այսչափ աղմուկ կը պատճառենք, և այսչափ ալ բազմութիւն գլուխնիս կը հաւաքենք. պիտի զարմանայ, տեսնելով որ իւր մեղի, հարուստ թէ աղքատ մերկ վիճակի մէջ տուածը մենք հագցուցած և ծաղիկներով զարդարած իրեն կը վերադարձնենք.

— Ուրեմն ի՞նչպէս ընելու էր.

— Ինչպէս որ մարդուս ծնած ատենը չորս անձինք կը գտնուին իւր քովը, այսինքն մայրը, գայեակը եւ երկու օգնական տիկնայք, նմանապէս գերեզման փոխադրուելու ատենն ալ չորս անձանց օգնականութիւնը բաւական է, նմանապէս լոկ պատանք մը բաւական է անոր :

— Բայց այս բազմութիւնը, որ դադարին կ'ընկերանայ, առ հանգուցեալն բարեկամական վերջին պարտաւորութիւն մը մատուցանելու մըտօք է :

— Պա՛հ, ըսաւ տէրվիշը դլուխը երերցունելով, այդ բարեկամական պարտաւորութիւնն ըսածնիդ՝ հանգուցեալը ապերախտ կացուցանելէ դատ ուրիշ բանի չը պիտի ծառայէ, ըստ որում ինք չպիտի կարենայ իւր յուղարկաւորութեանը ներկայ գտնուողներէն և ոչ մէկուն թաղման հանդիսին ներկայ գտնուելով՝ հատուցանել . . .

— 0 —

202

ԵՐԿՈՒ ԲԺԻՇԿԻ

Սիրելի ընկերս, կ'երևի թէ հարբուխ եղած էք :

— Ո՛հ, մի՛ հարցնէք . . . յաճախորդի մը պէս կը հաղամ . . .

— 0 —

## 203

## ԿԱՏԱԿԻՆ ՎՆԱՍԸ

— Լիւսի՛, աղջիկս, գլխարկդ պիտի թռցնես, ըսաւ մայրը իւր ութամեայ փոքրիկ աղջկանը, որ թե՛նին պատուհանէն դուրս կախուած՝ չորս կողմը կը դիտեր:

Աղջիկը մտիկ չ'ըրաւ:

Հայրը՝ ուղեւով խաղ մը ընել՝ իւր փոքրիկ աղջկան, քիչ մը վերջը յանկարծակի անոր գլխարկը գողցաւ եւ պահեց:

— Քեզ չ'ըսի՞ որ պիտի թռցնես գլխարկդ, ըսաւ մայրը, ահա իօօք մտիկ չ'ընելուդ արգիւնքը:

Լիւսի չորս կողմը կը նայեր, (մինչդեռ շողեկառքը սրնթաց կ'երթար) երբ զգաց իւր գլխակին յանկարծակի կերպիւ դարձեալ իւր գլուխը դըրուելը:

— Մեղքցայ քեզ, Լիւսիս, վրայ բերաւ հայրը եւ սուլեցի անդամ մը, որով գլխարկդ վերստացար: Զգուշացի՛ր:

Լիւսի շատ դարմացաւ այս միջադէպին վրայ, ուստի կատարելապէս ականատես ըլլալու համար այս դէպքին, յանկարծ գլխարկը հանեց ու հովին տուաւ: Եւ մինչդեռ ծնողքը իրար կանցնէին,

— Հայրի՛կ, հայրի՛կ, շո՛ւտ, սուլե՛, գլխարկը շատ հեռուները գնաց, պատասխանեց փոքրիկ աղջիկը:

## ԱՌՍՏԱԶԵՌԻՆ ՏՆՕՐԷՆ ՄԸ

Հօնարաի թատրոններէն մեկուն տնօրէնը հին գլխարկ մ' ունէր, որ արեգական ազդեցութեան տակ տեղ տեղ դեղնած եւ բոլորովին մաշած ըլլալուն, այլեւս դայն անգործածելի դաժնելով իւր հաւատարիմ սպասաւորին տուաւ:

Քանի մ' օր ետք այս պարոնը տեսաւ որ իւր նոյն սպասաւորը գեղեցիկ գլխարկ մը դրած էր գլուխը, որ փայլուն էր, սեփ սեւ ու բոլորովին նոր կը թուէր:

— Ուրկէ՞ց գնեցիր այս գլխարկը, կը հարցնէ անոր:

— Ձեր ինձի շնորհածն է, տէր իմ:

— Անկարելի՛ բան է, անկարելի՛:

— Ներեցէ՛ք. այո, նոյն գլխարկն է, սակայն ներկարարի մը տանելով լաւ մը նորոգել տուի:

— Ատոր համար ի՞նչ վճարեցիր:

— 2 Շիլին,

— Ա՛ւ քեզի 2 շիլին եւ իմ գլխարկս ինձի ետ տուր...

Առատաձեռնութիւնն ալ աօանկ ըլլալու է:

— 0 —

ՎԵՐՁ Բ. ՀՊՏՈՐՈՅ









8388

8389

2013

U.S.

107.